



Բ Ա Գ Ի Ն

Ե. ՏՄԻ 1966 ԱՎՏՅԵՐԵՐ
digitized by ANR.AN.C

ԹԻԻ 12

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك قزاجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բ Ա գ ի ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

ՎԱՌԻՔ ԽՍՐԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՍՐԱԳԻՐՆԵՐ
 ԵՊ. ՊՕՅԱԶԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԳ
 Յ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Վ. ՇՇԱԿԱՆ

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՄՍՏԷ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban
 Հեռագայնի թիվ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Ա. ՍԵՒԱՆ
- Ն. ՎԻՐԱՊԵԱՆ
- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ
- ՇԱՀՊԱՆ
- Վ. ՕՇԱԿԱՆ
- Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ
- Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ
- Դ. ԱՆԱՆՈՒՆ
- Յ. ԳԵՂԱՐԳ
- Բ. Փ.
-
- ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ
- «ԲԱԳԻՆ» Ե. ՏԱՐՈՒԱՆ
- Բովանդակութեան ցանկը

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ե. ՍԱՐԻ, ԹԻՒ 13

ԴՆԵՍՄՈՐ 1966

ԳԼԵՐՈՒԹ

ԱՍՏՈՒԱԾ ԲԱՐԵԿԱՄ ԶՈՒՆԻ

ԺԻՐՍՅՐ ԱԹՔԱՐԵԱՆ

Այդ Հինդլարթի, կէսօրէ ետք, հազիւ ազատուած դպրոցական տաղտուկներէն, թաղին լաները սկսան հաւաքելի այս պատիկ հողամասին վրայ, որ կ'երկարէր Փիէրոյին շէնքին դիմաց:

Քառանկիւն պատիկ հողամաս մըն էր, որ կը վախելէր կարծես երկնային պաշտպանութիւն մը, այնքան երկար ժամանակ աւերումէ զերծ մնացած ըլլալուն համար: Այս թաղին մէջ զոր հըսկայ պալատօրրնի սկսած էին անխնայօրէն շարչարել ամէն օր, հողի այս պատիկ քառանկիւնն էր, որ կը մնար տակաւին լաներուն: Այս միակ պատիկ կենսական տարածութիւնը, զոր արազօրէն իւրացուցած էին եւ որ, հակառակ իր փոքրութեան, շուտով կը յարմարէր անոնց բարբ խաղերուն:

Եւ այդ Հինդլարթին, հազիւ դասարաններէն ազատուած, երեք հոգի արդէն հոն խուժած էին, եւ տենդապէն կը սպասէին միաներու ժամանումին:

Անոնցմէ անմիջապէս ետք՝ հասաւ Փառքալը: Տասը լման տարիներու իր հասակով եւ մանքօրի կերպարանքով՝ ան այս թաղին միահեծան տէրն էր ու հերոսը: Անտարկէի տիրակալ մը, որ կը պարտադրէր իր կամքը իւրոտներու ողջ ամբոխի մը:

Ահաւասիկ որ դարձուածքին կ'ուրլազծուի իր երերուն սիրուէթը: Մօտեցաւ փքուտոյց, լուրջ եւ գոռոզ եղանակով եւ ատիկա ոչ զուր տեղը: Թեւին տակ ունէր իրական եւ խոշոր զնգակ մը, որ ներկաներէն խանդավառութեան ճիչեր խլեց: Ութէն տասը տարեկան լա-

ճերուն ձեռքը շատ յաճախ չեն իյնար նման սքանչելիքներ: Մենդներուն հսկողութիւնը շատ դիւրութեամբ կարելի չէ միշտ խարել եւ ոչ ալ մեծ եղբորը հաւանութիւնը խելի:

- Ո՞ւր են միւսները, - հետաքրքրութեամբ Փասքալ, - միայն երե՞քդ էք...

- Հէ՛՛՛... Կը սպասենք, - պատասխանեցին երեքը միարեւմտեան:

Եւ այս անգամ սկսան շորտով սպասել:

Բայց այսօր անհաւատալի է, որ բարեկամները այսչափ զրուելի կարենան ըլլալ: Բնաւ անապարուած չեն երեւնար անպիտանները: Եւ ճի՛շդ այսօր, երբ զնդակ մը կայ, եւ իրական զնդակ մը, լաւ ուսած, կսկըր:

Երկար սպասեցին, առանց որ սեւէ մէկը երեւնայ: Սպասումը արդէն վերածուած էր կսկածալի անձկութեան մը եւ տակաւին ոչ ոք... Յանկութեանէ մը ետք՝ հազիւ ժոժօն էր, որ անկիւնէն երեւաւ: Փոխոյի զոհ այս տխրած պըզտիկը, որ կը հասնէր խղճալի ոտաստիւններով: Ինքը եւ ուրիշ ոչ ոք:

- Է՛՛՛, այս մէկը, - ըսաւ ներկաներէն մէկը, արհամարհող ծամածուանքով մը, - կարծես իրեն կը սպասէինք:

Ժոժօն չէր սպասուեր: Ժոժօն ոչ մէկ տեղ կը սպասուէր խաղի համար: Երկու նզովեալ ոտքերը, զորս մեղքի մը պէս սկիզբէն ի վեր կը քաշկուտէ, իր բարեկամները քաշկուտելու համար չեն ըստեղծուած: Նոյնիսկ անոնց ամէնէն մը տերիմները:

Կը հասնի իր ժպիտներուն ամէնէն անուշովը: Կը հասնի զուարթութեամբ, անստորբեր իրեն եղած դէշ ընդունելութեան հանդէպ, անգիտանալ ձեւացնելով նաեւ, որ իր տկարութիւնը ընկերներուն ունեցած մտահոգութիւնը չի կրնար բառնալ:

- Եի՛՛ք... - բացաբանչեց, երբ Փասքալին մտեցաւ, - Գնդա՛կ մը... Յոյց կու տա՞ս Փասքալ...:

- Հաա՛... - մոնչեց միւսը, զայն բրտորէն հրելով, - Գնդակ մը, ինչ որ...

Միւսներուն բրտութեան դէմ ժոժօն ուրիշ զէնք չունի գործածելիք, եթէ ոչ իր ժպիտը, ստրկային, հաճոյակատար: Սահմոկելի արագութեամբ ծառայասէր պիտէ դառնալ: Գիտէ ըլլալ խոնարհ, սպիտակեցիչ կերպով, ամէն անգամ երբ շնորհ մը կայ հետապնդելիք: Ու մանաւանդ այսօր, երբ խաղընկերներու պակաս կայ, եւ որ այդ պատճառաւ անսպասելի բախտ մը օղին մէջ կը սաւառնի, բերդապահ պաշտօն մը երկիրէն կ'առկախուի... Ասկէ աւելի ոչինչ չէ յուսացած արդէն ժոժօն, ոչինչ չէ ակրնկալած...

Հիմա փակած է Փասքալին, աղաչաւոր, հնազանդ:

- Ըսէ՛, Փասքալ... խնդրեմ... Կը խաղցնես զիս, չէ՞... կողար, Փասքալ, կողար, ըտէ...

- Աղէկ, աղէկ, - կը հաւանի վերջապէս միւսը սրտմտութեամբ: Եւ պահ մը լռութենէ ետք, - բայց պէտք է նախ երթաւ եւ կանչես Փիէթօն:


Փիէթօն շատ մօտ է, ճի՛շդ դէմը: Փասքալի պէս հերոս մըն է նաեւ այս: Աւելի ճի՛շդ՝ անոր փոխանորդը, կշիռ ունեցող մրցորդ մը: Կանգու այս ցեղախումբին մէջ, ոչինչ կրնայ որոշուիլ առանց որ նախապէս Փիէթօնի ալ հաւանութիւնը առնուած ըլլայ:

Ժոժօն իրեն տրուած հրահանգը կրկնելու առիթ չտուաւ: Օղէն բռնեց Փասքալի խօսքը եւ սկսաւ վազել: Առաջացաւ կաղնիկաղ, ցաւազին ոտախնով: Այսօր, այս ձեւով, Փիէթօ կրնար վազել նոյնիսկ մինչեւ Պաղատա: Նախ որ Փասքալ միշտ պաշտպանած էր զինք դէշ ծաղրածուններուն դէմ, եւ յետոյ... յետոյ իւրաքանչիւր ծառայութիւնը որ պիտի մատուցանէ այսօր իր ընկերներուն, երաշխիք մը աւելի պիտի ըլլայ իրեն, բերդապահ պաշտօնին համար:

Քանի մը վայրկեան ետք վերադարձաւ հեռալէն:

- Փիէթօն չի դար, - ըսաւ, - եղբայրը հիւանդ է:

Վերստին զրկեցին զինք: Ետեւէն՝ զինք պատգամաւոր մը եւս: Բայց միշտ



ապարդիւն: Այս անգամ խումբով գա-
ցին, Փասքալի առաջնորդութեամբ:
Սկսան դնելու ցուցադրել, պոռտցին,
սկզբնային: Այնչափ աղմկեցին, որ Փիէ-
րոյն մայրը ստիպուեցաւ միջամտել ի-
րենց ի նպաստ:

- Եւ, զնա՛ իրենց հետ, - ըսաւ
զաւկին, - զնա՛, խաղա՛ իրենց հետ,
քիչ մը կը փոխուի...

Եւ ամէնքը միասին յաջողեցան յաղ-
թել Փիէրոյն յամառութեան, յաջողու-
թեան աղաղակներով զայն իրենց մէջ
առնելով: Բայց երբ դաշտ հասան, ա-
մէն ոք անդրադարձաւ, որ յոյս չկար
անկէ, ոչ մէկ օգտակարութիւն պիտի
ունենար այսօր իրենց ծրագրած խաղին:

Բոլորովին ուրիշ Փիէրօ մըն էր, որ
կը կանգնէր այսօր իրենց դէմ: Ընկճը-
ւած, նզմուած Փիէրօ մը, որ ոչինչով
կը նմանէր իրենց ճանչցածին՝ չարածճի
ու գոռոզ տղուն: Ոլեակ մըն էր կարծես
այսօր, որուն կ'ուզես կարեկցել:

- Հասկցանք, հասկցանք, - ստիպ-
ւեցաւ պոռալ Փասքալ մէկ-երկու ան-
գամ, - մի երկարէր, կ'անցնի... Եղ-
բայրէ կը բուժուի: Գալէ՛, երթանք խա-
ղանք:

- Երթանք, երթանք, - կը կրկնէր
իր կարգին պտիկ ժօօն, անհուն ի-
րարանցումով, - աճապարենք, աճա-
պարենք քիչ մը...

Աճապարեցին որչափ որ կրցան,
բայց իրիկունը աւելի արագ դիտցաւ
հասնել, կոտորելու համար իրենց թափը:
Ան հասաւ դաւադրօրէն, խաւարին մէջ
խեղդելու համար եւ զեղեցիկ կլոր գըն-
դակը եւ զեղեցիկ ամէն բան: Մանուկ-
ներու պատուհաս մութը, որ դիտէ տա-
րածուիլ մինչեւ իրենց հոգիին խորը,
չուտ մթաքնեց այսօր իրենց ամբողջ ե-
րանութիւնը: Ան ուրիշ բան չձգեց խեղ-
ճերուն, ուրիշ ոչ մէկ կարելիութիւն,
եթէ ոչ խմբուիլ դաշտին մէկ անկիւնը
եւ հոն կրծոտել սեւ ու տխուր իրենց
ամբողջ դառնութիւնը:

Ողջմտանքը կը շարժէին ամէնքն
ալ. Փիէրօն՝ ամէնէն աւելի: Թանձրա-
ցող մութը կարծես աւելի կը ծանրանար

Փիէրոյին վրայ, կարծես աւելի կը մը-
թապնէր, կարծես աւելի կը մթապնէր
զինք, քան նոյնինքն երեկոն: Կարծես
խաւարը ամբողջութեամբ կը պատէր
զինք, կը թափանցէր մինչեւ ոտկոտնե-
րը:

Ճիշդ այն պահուն, երբ ընկերները
զբազած էին իրիկունն իրենց դառնու-
թիւնները որոճալով, Փիէրօն փորձեց
նորէն օդտուիլ ստիճէն ու փախչիլ դէ-
պի տուն, սակայն ամէն փորձի, իւրա-
քանչի՛ր անգամին հանդիպեցաւ Փաս-
քալի արդելքին:

- Կեցի՛ր, - կ'ըսէր ամէն անգամ, -
ըսելիք ունի՛մ քեզի...

- Բայց պէտք է տուն երթամ, - կը
կրկնէր Փիէրօ, աչքը իրենց տան սեւե-
ռած, - եղբայրս հիւանդ է...

- Բայց ինչո՞ւ... Ի՞նչ ունի... Ին-
չո՞ւ հիւանդ է, - կը միջամտէր ուրիշ
մը:

- Ձեմ դիտեր... Շատ հիւանդ է...
Բժիշկ մը եկաւ, - կը պատասխանէր
Փիէրօ գրեթէ լալով:

- ... Շատ հիւանդ... Բժի՞շկ... -
մտահոգուեցաւ երրորդ մը, - պիտի
մեռնի՞ արդէն:

- Մանուկները չեն մեռնիր, - մի-
ջամտեց իսկոյն ժօօն, թեւեր կը բուս-
նին անոնց. հրեշտակներ կը դառնան...
Անոնք...

- Չըսե՛ս... - հեզեց անմիջապէս
Փասքալ, - թեւե՛ր, հրեշտակներ,
բայց ի՞նչ դիտես որ դուն, բայց ո՞վ
ըսաւ քեզի...

- Ոչ ոք... Ե՛ս դիտեմ, - վերաւոր-
ւած ըսաւ ժօօն, - թեւեր կը բուսնին
իրենց, երկինք կ'երթան...

- Երկինք, երկինք, - քրքրեց Փաս-
քալ, - սա խելօքին մտիկ ըրէք, որչափ
անմխ է, որչափ մանուկ է սակաւին...

Եւ բառերը հատիկ հատիկ արտա-
սանելով, ինչպէս ուսուցիչ մը իր աշա-
կներտներուն.

- Ո՛չ երկինք, ոչ բոն, - շարունա-
կեց Փասքալ, - ես եմ որ կ'ըսեմ ձեզի,
ամէնքս հող կը դառնանք...

- Ոչ, ոչ, ցեխ կը դառնանք, ցեխ, - միջամտեց յանկարծ երրորդ մը, - ոչ հող, ալ ցեխ, հայրս այսպէս կ'ըսէ միշտ, ցե'խ...

Ամէնքը լռեցին վայրկեան մը: Յետոյ ուրիշ լած մը խզեց լուսթիւնը.

- ձիւղ է ժօժօյին ըսածը, - յանդընեցաւ ան հնչեղ ձայնով մը, - անշուշտ որ հրեշտակ կ'ըլլանք, անշուշտ որ երկինք կ'երթանք...

Եւ անմիջապէս ետք, կարծես ինքզինք սրբադրել ուզելով.

- Բայց ոչ ամէնքս, ոչ ամէնքս, - անսպարեց ճշդէլ ոււրուած փող մը յիշեցնող իր ձայնով, - ալ անոնք, որոնք բարի են, անոնք որոնք միշտ կ'աղօթեն...

Եւ վիճարանութիւն մը կը սկսի:

Փիէրօն է միայն, որ կը յամառի լուի, մինչ իր շուրջը կը տիրէ արկարար իրարանցում մը: Ամէն ոք իմաստութեան առատ ակ մըն է կարծես, ամէն ոք գիտութեամբ կը յորդի, բայց ոչ մէկը հող կ'ընէ այսօր Փասքալին հանելի դառնալ: Բոլորը դաշնակցած կ'երեւին իրեն դէմ, բոլորը կարծես որոշած են մէկ զիջում չընել իրեն, եւ ասիկա զինք կատարութեան կը մղէ:

- Լեզունիդ քաշեցէք, - պոռաց վայրուզ ձեռով, - տիմարներ ձեզի, կը հասկնա՞ք թէ ոչ, հո՛ղ ըսի... Վերջապա...

- Ո՛չ, ոչ հող, - կը յամառի դիմադարձել միշտ ժօժօ բուրբուկին անտարբեր Փասքալի գայրոյթին - հրեշտակ կը դառնանք... Աստուծոյ քով կ'երթանք...

- Այո՛... Այո՛... Աստուծոյ քով, - հաստատեց հնչեղ ձայնով տղան, - ժօժօն երկինք պիտի երթայ... Անշուշտ որ ժօժօն թեւեր պիտի ունենայ... Միշտ կ'աղօթէ Աստուծոյ... Ան միշտ եկեղեցի կ'երթայ մօրը հետ, ժօժօն միշտ եկեղեցի կ'երթայ, Աստուծոյ բարեկամն է, որ ըսած է մօրս... ժօժօն...

- Բայց ո՞վ է այդ բարեկամը, - ուզեց ճշդել Փասքալ, ծաղրանքով:

- Բայց ինչպէ՞ս, - չէի՞ր գիտեր, -

չարունակեց միւսը դարձացած, - Աստուծոյ բարեկամը... Բայց մեր քահանան, ան՝ որ մեծ մօրուք ունի, որ պատարագ կ'ընէ... Ան Աստուծոյ լաւ բարեկամն է... Ան է, որ գիտէ Աստուծոյ խօսքը... Անկէ կ'ուզէ ինչ որ կը փափուքի... Ձէի՞ր գիտեր...

- Ձէի՞ր գիտեր... Ձէի՞ր գիտեր, - ըսաւ Փասքալ ինքիքովէն ելած, - դուն միայն գիտես, ապ'ուշ արարած, որ այս ձեւի յիմարութիւններ կը հնարես: Բայց մարդ մըն է այդ քահանան... Գասաղարին գրացին է... Կ'ուտէ, կը խմէ... Կ'իփի կ'ընէ... Ապ'ուշ:

Եւ ինքնիրեն կարեւոր հով մը արւած՝

- Աւանակ մըն էս դուն, - շարունակեց Փասքալ, վերջին հարուած մը իջեցնողի պէս, - Աստուած պապան մարդ մը չէ... Ուրիշ բան է ան... Ան չի տեսնուիր... Ան... Ան... Ան բարեկամի պէտք չունի... Հասկցա՞ր հիմա...

Այս բաները ըսելով հանդերձ, Փասքալ անդրազարձաւ յանկարծ, որ եթէ այսօր այս լածերը կը համարձակէին իրեն հակաճառել, անոր համար էր, որ Փիէրօ ըսուածը պատի մը պէս լուռ էր: Այս շանորդի Փիէրօն, որ շատ աւելի բան գիտէ, քան միւսները ամէնքը միասին, եւ որ մէկ խօսքով կրնար ամէնքը լուսթեան դատապարտել:

- Բայց հո՛ս նայէ այլեւս, - ըսաւ Փասքալ Փիէրօյին դառնալով, - Ի՞նչ ունիս այսօր... Ըսէ նայինք սրւոնց... Կ'ըսեն որ Աստուած բարեկամ ունի... Ըսէ՛ սրւոնց, թէ ո՞վ է Աստուած պապան, ըսէ՛ սա ապուշներուն, որ Ան բարեկամի պէտք չունի...

Բայց Փիէրօն խօսելու արամազիբ կրեք չէր երեւեր:

- Ի՞նչ կայ ինձի այդպէս կը նայիս, - ջղայնացաւ Փասքալ, - այս ի՞նչ կոմիքսի է... Բա՛ց սա կտուցդ տեսնենք... Ըսէ՛ սրւոնց թէ ով է քահանայ ըսուածը... Ինչ ապուշներ կեցեր ես...

- ... Ինչ գիտեամ... Ի՞նչ գիտեամ...

չնչաց փրկւո շրժորած, - Եղբայրս Հիւսնդ է... տուն կ'ուզեմ երթալ...

❖

Մութը, որ պրաւած էր միջոցը, կ'անապարէր ամբողջացնել իր յաղթանակը: Ան՝ որ դադարեցնէ սպառնալից խաղաղարարին մէջ, հիմա այլեւ ամբողջովին կը տիրապետէր անոր: Հիմա ծանրօրէն կը ննչէր լաճերուն վրայ, միջին մտահոգութեան մը պէս կը սեղմէր անոնց կոկորդը, կարծես յիշեցնելու համար իւրաքանչիւրին, որ այլեւս ժամանակ է տուն երթալու:

Ժօժօ վազեց փիէրոյին ետեւէն խղճալի նոյն ոստոստումներով, եւ քանի մը քայլ անոր հետ ընթանալէ ետք.

- Հոգ մի ընէր, ծօ', - ըսաւ մխիթարական շեշտով մը, - մտիկ մի՛ ընէր զինք, կարենալութիւն մի տար Փասքալին, Աստուած պապան խռոր քար մը պիտի նետէ անոր դիտուն...:

Ժօժօն ամբողջ համբուն ընթացքին խօսեցաւ, մինչ իր բարեկամը շրթները շարժելու պարտակ իսկ ցոյց չէր տար: Ծարունակեց համոզել, որ քահանան, որուն մասին խօսուած էր քիչ առաջ, իրապէս որ Աստուծոյ բարեկամն էր: Ըստ ժօժօյին, ըստ քահանաները Աստուծոյ ընկերներն էին արդէն: Ինչ որ մայրը հաստատած էր միշտ: Եւ իր ըսածը փաստերով հիմնաւորելու համար կարծես՝ Ժօժօ սկսաւ իր կեանքին պատմութիւնը ընել: Պատմեց, որ երբ տակաւին պատիկ էր, սարսափելի հիւսնդութեան մը ենթարկուած էր եւ ըստ ժամանակի մօրը աղօթքներուն: Ենթադրուած մօրը, բայց մանաւանդ քահանային, որ անոր աղօթքները անմիջապէս Աստուծոյ փոխանցած էր:

Ժօժօն աւելցուց, որ իր աղօթքները միշտ կը շարունակէր եւ չէր թերանար ամէն կիրակի մօրը հետ եկեղեցի երթալ: Այս ձեւով է, կ'ըսէր ան, որ պիտի կարծեսք մերթապատելի ոտքերուն վրայ

դեռ յամառող թերութիւններէն... Ամէն տեղում պզտիկ բարեխաւամ մը չէ՞ր նշմարուեր միթէ: Զէ՞ր նկատուեր, որ հետզհետէ աւելի նուազ կը կաշար:

Եւ անմիջապէս որ փիէրոյի տան առջեւ հասան, Ժօժօն երկարօրէն պաշտօն իր բարեկամը, պատուիրելու համար անոր, որ պէտք է ինք եւս աղօթէ, աղօթէ ջերմօրէն եթէ կ'ուզէր, որ եղբայրը բուժուէր:

- Գիտե՞ս, փիէրօ', - կ'ընէր Ժօժօ, - եթէ լաւ աղօթել զիտնաս, կրնաս նոյնիսկ լեռները իրենց տեղէն շարժել... կրնաս քալիլ տալ լեռները:

- ... Լեռնե՞րը, Ժօժօ... Բայց անոնք հրաբուխ կ'ընեն... Անոնք քալիլ չեն գիտեր...

- Բայց այժմ, չէ՞ր գիտեր մինչեւ հիմա... Մայրս միշտ կ'ըսէ ինծի... Քահանա՛ն ալ... կրնանք զանոնք շարժել, եթէ աղօթել զիտնանք:

Եւ զգուշաւոր շեշտով մը.

- Բայց ուշադրութիւն, փիէրօ', - շեշտեց պզտիկ Ժօժօն, - պէտք է ուշադիր ըլլալ, որ ուրիշներ չզիտնան թէ դուն եղբորդ համար է որ կ'աղօթես... Մարդու պիտի չըսես, որ կ'աղօթես... Աստուած կրնայ երբեք չունկնդրել քեզ:

❖

Յաջորդ կիրակին փիէրօն ոտքի էր արդէն, երբ տակաւին արեւը չէր յաղթած իր մութ ու դարաւոր հակառակորդին: Մթութեան վաշտեր կը յամառէին տակաւին շրջադայիլ հոս ու հոն, երբ ինք արդէն անկողնէն ելած էր, լուացուած, հագուած եւ կազմ ու պատրաստ: Օգտուելով մօրը բացակայութենէն, որ միշտ փակուած կ'ըլլար հիւանդին սենեակը, փիէրօ յաջողած էր շուտ մը դուրս սպրդիլ:

Ան դուրս ելած էր առտուն շատ կանուխ, այն յոյսով որ պիտի կարենար ետ դառնալ, առանց որ մէկը անդրա-

զարձած ըլլայ իր բացակայութեան, Բայց կէսօրուան մօտ էր միայն, որ կը բացած էր տունն հասնելու շնչասպառ եւ քրտնաթաթախ: Եւ այս անգամ, սահայն, գործը այնքան դիւրին չէր թուեր:

Այս անգամ խուսափելու միջոց չուէր: Ամբողջ տունը պատերազմական դրութեան մէջ էր: Եւ անաղանդ կարծես հասած էր մինչեւ թաղին միւս ծայրը: Ամէն մարդ խուճապի մէջ էր, մայրը՝ ամէնէն առաջ, որ արդէն բռնած էր զինք օձիքէն.

— Ո՛ւր էիր անտունէ մինչեւ հիմա, — կը գոռար ան անընդհատ, Փիէրոյի օձիքէն բռնած, — ո՛ւր մնացիր, պատասխան տուր, պատասխան տուր...

Եւ այն շարժումը որ տղան կը յամարէ շխտագրանի, այնչափ անելի մայրը կը դայրանայ: Ան՝ որ մինչեւ այսօր ոչինչ պահած է մօրմէն, անաւաստիկ կ'ընդդիմանայ հիմա, թայտի մը պէս կը կանգնի անոր դիմաց, յամար ու անդրդուելի: Հագլու կը գիշի շարժումները ուրուազծել: Շարժումներ, որոնք կը տատանին անոր շին մէջ, որոնք բոլոր ուղղութիւնները կը մատնանէն, բայց ոչ մէկը կը ճշդեն:

— Գիտեմ, դաշտը չէիր, — վերսկըտաւ մայրը, — դացիք, նայեցանք... Ամէն տեղ փնտռեցինք... Ո՛ր սատանան տարած էր քեզ... Պիտի պատժուիս, խտորէն պիտի պատժուիս, կը տեսնես, կը տեսնես...

Մտողին յարձակումներուն դիմադրելով անդերձ՝ Փիէրոն գաղտնօրէն դէպի անկիւն կը նայէր: Հոս հասած վայրկեանէն ասդին սարսափելի անհամարութիւն մը կ'անհանդատացնէր իր սրունքները: Ինչո՛ւ չեն թողուր, որ սըլանայ դէպի այն սենեակը, ուր կը պտուկի եղբայրը: Աճապարանքը ունի հասնելու այնտեղ, տեղւոյն վրայ հաստատելու համար իր աղօթքներուն արդիւնքը: Միւսնե՛րն ալ... Փոխանակ զինք այսպէս տաղտկացնելու, լաւ կ'ըլլար, որ երթային աչք մը նետէին հոն: Յետոյ

կը ճշդուէր, թէ տակաւին փափաք կը մնա՞ր իրենց պատիժի մասին խօսելու...

Բայց իրաւի, կը մտմտայ Փիէրո, — ինչո՛ւ այսչափ տաղտկալի ըլլայ ծնողք ըսուածը: Ինչո՛ւ չեն հասկնար, որ ինք երբեք պիտի չյայտնէ ուր գացած ըլլալը: Ինչպէ՞ս կ'ուզեն, որ ըսէր թէ աղօթելու գացած էր: Հասկա՞ Սատուած պապան... Եթէ յանկարծ բարկանար... Ձէ՞ որ այլեւս իր աղօթքները երբեք պիտի չլսէր:

Գիտնա՞լ կ'ուզէին: Բայց եկեղեցի: Եկեղեցի... Եղբորը համար: Այդչափ յիմար է ինք, որ տարածայնէ:

Եկեղեցի գացած էր գաղտնօրէն, պատերուն քոռելով: Պարտաւորուած էր նոյնիսկ դաշտին շուրջը դառնալու, շնչմարուելու համար խումբ մը տղոցմէ, որ արդէն հոն հաւաքուած էին ատուրուան այս վաղ ժամուն: Անկասկած որ իրիկուրնէ անաւարտ խաղ մը վերջացնելու համար: Անշուշտ որ իրիկուան ընդհատումին վրէժը առնելու համար էր, որ այսքան կանուխ խուժած էին դաշտ:

Եկեղեցի հասած էր գէշ արարք մը պատրաստողի գողուչութեամբ եւ կասկածանքով: Եւ իր բախտէն, եկեղեցիին բակը այնքան յստակ էր, այնքան քիչ խճողուած... Որքա՞ն գէշ պիտի ըլլար, Ատուած իմ, եթէ Փասքալ զինք տեսնէր ճիշդ եկեղեցիին մուտքին... Որքա՞ն գոհուար պիտի ըլլար այնուհետեւ արդիւնէ անոր հեղնանքը՝ տարուան ամբողջ երկայնքին:

Բայց որքան հիւանդներ պէտք է եղած ըլլային այս թաղերուն մէջ, քանի քանի խեղճեր պէտք ունէին Ատուածոյ հետ խօսելու, որ այսքան լեցուն ըլլար եկեղեցին, յորդէր աղերսարկուններու այսքան հոծ բազմութեամբ:

Արժուկներու եւ ուսերու խաղերով՝ Փիէրո յաջողած էր պզտիկ տեղ մը ապահովել իրեն հսկայ սիւնի մը ոտքին: Եւ այդտեղէն էր որ անաւոր ճիգերու շնորհիւ յաջողած էր տեսնել խորանին մէկ մասը: Գլուխներու եւ ուսերու

այնժամ անտառի մը հտուէն՝ կրցած էր նշմարել երկնքի կտոր մը կարծես. ու մշուշներու բոցավառումի մը մէջէն՝ Աստուծոյ բարեկամը:

Կարծես թէ... Կարծես թէ երկինքը առած էր զինք թեւերուն մէջ... Կարծես թէ բոլոր աստղերը եկած էին դիտմամբ իրենց լոյսով զդեստաւորելու համար բարի քահանան... Անշուշտ որ այս քահանան Աստուծոյ բարեկամն էր... Թերեւս նոյնիսկ աւելին... Թերեւս եղբայրը...

Բայց ահաւասիկ Փիէրօն կ'անդրադառնար յանկարծ, որ ինք լաւ աղօթել չէր դիտեր: Իր ամբողջ գիտցածը, աղօթքի վերաբերեալ իր ամբողջ պաշարը քանի մը պզտիկ խաղալիկներ միայն կրցած էին ապահովել իրեն մինչև այսօր: Եւ տակաւին, հոչ ալ, երբ աչքը դրած էր խոշոր ինքնաշարժի մը, ի զուր հետապնդած էր, զուր աղօթած՝ աստու, կէսօր, իրիկուն: Եւ ըսել տակաւին, որ կան աղօթքներ որ մէկ հարածով լեռներ կը տապալեն, որ ժայռները հլու ոչխարի կը վերածեն... Կը քալեցնեն զանոնք: Մինչդեռ, ինքը՝ Փիէրօն բառ մը անգամ չի գիտեր իր եղբայրը բուժելու համար...

Բայց հոն, խորանին առջեւ բոցավառումը կը շարունակուի, լլացուցիչ պայծառութիւն մը կը ցայտէ միշտ այդ կողմէն: Կարծես երկինքը ամբողջութեամբ եկած հալած է բարի քահանային վրայ: Կարծես աստղերը եկած էին բոլորը իրենց վայրով ու չքեղութեամբ զարդարելու համար զինք:

Եւ հոն, հսկայ սիւնին մօտ, երկինքով ողողուած խորանին առջեւ, Փիէրօնին ձեռքերը շուտով միացած էին իրարու... Յանկարծօրէն ծունկի եկած էր...



Փիէրօն յաճախ եկեղեցի վերադարձաւ, ուրիշ շատ մը Կիրակիներ, եւ ա-

մէն անգամ ամենամեծ գաղտնապահութեամբ, ամէն անգամ կարծես եկեղեցին կողոպտելու կու գար եւ ոչ թէ աղօթելու: Եւ ոչ ոք մինչև հիմա կրցած էր տեղեակ ըլլալ իր բարեպաշտ յաճախանքներուն: Ոչ մէկը, բացի ժողովէն, որ առաջին իսկ Կիրակին նշմարած էր իր ընկերը աղօթած պահուն: Եւ որ, անկէ ի վեր, սորվեցուցած էր իրեն շարք մը նոր աղօթքներ: Նոյնիսկ խոստացած էր Փիէրօն առաջնորդել քահանային մօտ, ծանօթացնել զինք, անմիջապէս որ առիթը ներկայանար:

Եւ ամէն անգամ որ Փիէրօն եկեղեցիէն վերադառնար, կը վազէր եղբօր սենեակը, ստուգելու համար անոր կացութիւնը, կրած նուագալոյն փոփոխութիւնը: Մեծ զարմանքով կը հաստատէր, որ այլեւս ո'չ ոք կ'ահահանգստացնէր զինք: Իրեններէն եւ ոչ մէկը զինք հարցումներով չէր ծանրաբեռներ: Անոնցմէ ոչ մէկը կը պրոպագանդէր: Կարծես ամէն ոք գոհ էր որ երթայ ուղածին պէս ու վերադառնայ իր ուզած ասենը, առանց մէկուն իմաց տալու, առանց արտօնութեան:

Աստու մը մանաւանդ, երբ եկեղեցիէն կը վերադառնար, մայրը այնպէս մը դիմաւորած էր զինք, այնպիսի ժպիտով մը, իր աչքերուն մէջ ճառագայթող այնպիսի բանով մը, որ իրեն թուած էր, թէ այդ ժպիտն ու ճառագայթումը եղբօր բուժումը կ'ուղէին աւետիլ: Իրեն թուած էր, որ իր աղօթքները դպած էին ճիշդ թիրախին:

Բայց օրերը իրարու յաջորդեցին, Կիրակիները թաւալեցան, առանց որ չափով մը արդարացունին մօրը ժպիտն ու քաղցր նայուածքը: Աղօթքները կու տակուեցան, առանց որ հիւանդին վիճակը նուագալոյն բարելաւում մը արձանագրէ, արտօնելու համար անոք, որ գոնէ՛ քանի մը վայրկեան անկողինէն դուրս ելլէ: Եւ եղբայրը միշտ հիւանդ տեսնելով, զայն միշտ անկողինէն գամուած գտնելով՝ Փիէրօն սկսաւ հետզհետէ ընկճուիլ: Հետզհետէ սկսաւ ամօթի պէս բան մը զգալ, իր առողջութեան համար

ինքզինք յանցաւոր զգալ: Եւ իր յանցանքը քաւելու համար կարծես հրամարեցաւ ինք եւս զուրս ելլելէ: Զգնաց այլեւս դիմացի դաշտը, բնաւ չպատասխանեց խաղի հրաւերներուն:

Ճ

Յետ միջօրէի մը, դպրոցէն արձակուելէ ետք՝ Փիէրօ կ'աճապարէր տուն հասնիլ, երբ Փասքալ սկսաւ հետապնդել զինք: Թաղին հերոսը ինքզինք վիրաւորած կը զգար, որ փողոցներու երկայնքին վազելու պէտք կ'ունենար ընկերոջը հետ խօսելու համար:

- Ի՞նչ կը վազես, ի՞նչ կայ, - ըսաւ անոր կեռուսխնդիր շեշտով մը, - այնչափ զրաղած ես, բարեւ չկա՞յ այլեւս:

Բայց որովհետեւ միւսը խուսափողական պատասխանէ մը ետք կ'աճապարէր միշտ վազել:

- Կեցի՛ր նայինք քիչ մը, - զայրացաւ Փասքալ, - ի՞նչ կայ կը վազես... Արդեօք ինձմէ՞ կը փախես...:

- Փախիլ, ոչ, բարկացած, ոչ, - ուզեց ճշլիւն փիէրօ, - պէտք է տուն հասնիմ:

- Բայց ինչպէ՞ս... Մեր խաղաժայրը չես գար, հետս չես խօսիր, բարկացած ես, դիտե՛մ... Առջի օր, դաշտին վրայ... Քահանայի այդ պատմութեան համար...:

Եւ առանց բարեկամին պատասխանելու առիթ մը տալու.

- Պէտք է սահայն դիտնաս, - շարունակեց Փասքալ, - ես... ես... քեզի դէմ չէր որ պոռացի առջի իրիկուն, այդ ժօժօ կոչուած լակոտի՛ն դէմ էր եւ միւս բոլոր լաճերուն: Զղայնացուցին զիս այդ իրիկուն... Որչափ յիմար են... Աստուած պապան... բարեկա՞մ... Բայց Ան ուրիշ է, Աստուած պապան բարեկամի պէտք չունի:

Եւ պզտիկ դադարէ մը ետք.

- Այդ բաներուն չես հաւատար, այնպէս չէ՞, - վերսկսաւ Փասքալ, - կարե-

լի՞ բան է ատիկա... Աստուած պապան եւ քահանան...:

- Զեմ դիտեր... Ես չեմ դիտեր, - թոթովեց Փիէրօ, - պէտք է տուն հասնիմ ես:

- Կը տեսնե՞ս, կը տեսնե՞ս, - պատասխանեց Փասքալ, - իրաւ որ բարկացած ես ինծի դէմ, չես ուզեր հետս խօսիլ...:

- Ո՛չ, ո՛չ, բարկացած չեմ, - բողբոջ փիէրօ անմիջապէս, - ես բարկացած չեմ:

- Ուրեմն, - միջամեց Փասքալ, - ինչո՞ւ դաշտ չես գար, ինչո՞ւ միշտ փախուստ կու տաս ինձմէ:

- Բայց եղբորս համար, ան միշտ հիւանդ է... շատ շա՛տ հիւանդ, - ըսաւ Փիէրօ խոցուած ձայնով մը:

- Շատ հիւանդ, շատ հիւանդ, միշտ նոյն յանկերոզը, բայց ասիկա պատճառ մը չէ՛, - պատասխանեց Փասքալ:

- Լաւ... Ահաւասիկ, - վերսկսաւ Փիէրօ, դրեթէ լալով, - եղբայրս զուրս չի կրնար ելլել, միշտ պառկած է, ընկերներու հետ չի կրնար խաղալ, միշտ մինակ է, միշտ մինակ... Ուրեմն... Ես ալ...:

Այս խօսքերը արտասանած պահուն՝ Փիէրօ փրճկեցաւ, մինչ իր խօսակիցը ամբողջ զուրգուրանք դարձած էր եւ ճիգ չէր խնայեր մխիթարելու համար ընկերը:

- Բայց ընկե՛ր... ընկե՛ր... - սկսաւ Փասքալ, - ինչո՞ւ մինչեւ հիմա չըսիր, ինչո՞ւ չըսիր... - եւ կարճ լռութենէ մը ետք, - բայց պարզ է, շատ պարզ, - վստահեցուց ան, - կը տեսնե՛ս:

Եւ յաջորդ օրն իսկ, բանակ մը լաճեր, Փասքալին ղեկավարութեամբ՝ պացին հիւանդին մօտ: Յաջորդ օրէն սկսեալ եւ մնացեալ բոլոր օրերը հիւանդին սենեակը չարպուսեցաւ երբեք: Երկաթեայ կարգապահութեամբ մը ընկերները զիրար կը փոխարինէին: Ոմանք հաղիւ զուրս ելած, ուրիշներ արդէն տեղ կը զրաւէին հոն, հիւանդը դադարեցնելու մտահոգութեամբ: Թաղին հերոսն էր, որ կաղմակերպած էր ամէն ինչ: Ան էր՝

որ ամէն ինչ լարած էր ժամացոյցի ճշգրտութեամբ. վայ անոր, որ կը համարձակէր ընդդիմտնալ: Եւ, այսպէս, որովհետեւ դուրսի աշխարհը կը պակտէր իր ընկերոջ պզտիկ եղբոր, Փասքալ այնպէս մը կ'ընէր, որ աշխարհը իրեն զայ:

Ամէն ինչ լաւ կ'ընթանար: Փիէրօ հիմա վստահ էր, որ իր եղբայրը պիտի բռնուէր: Բոլոր պզտիկ բարեկամները, որոնք կու գային դինք զուարճացնել, եւ ամէնէն ազդու աղօթքները, որ իր կարգին շէր դադարի Աստուծոյ ուղղելէ, չէին կրնար ապարդիւն մնալ: Եւ մանաւանդ որ ժօժօն կրցած էր կարգադրել, որ տեսնուին քահանային հետ: Մանաւանդ որ ազնիւ քահանան վստահեցուցած էր դինք յուսացուածէն շատ աւելի:

- Պիտի աղօթենք, տղա՛ս, անշուշտ որ պիտի աղօթենք, - ըսած էր իրեն բարի քահանան, շոյելով իր դիւրիս, - եւ վստահ եմ, որ Աստուած պապան պիտի ուղէ մեզի օպնէ... Կրնաս հանգիստ ըլլալ, դէ՛հ:

Ձատիկը կը մօտենար: Արեւոտ օրերուն համար, որոնք այլեւս չէին կրնար ուշանալ, իր խեղճ եղբոր երկար անյարժօութեան վրէժը լուծելու մտքով, Փիէրօն սքանչելի ծրարներէն յղացած էր: Եղբորը բռնուելուն այնչափ վստահ էր, որ ժօժոյին մեղսակցութեամբ, մանրակրկիտ յայտարար մը պատրաստած էր մօտալուս ասնկրուն համար: Եւ ինչ որ ամէն բանէ՛ առաջ, ուղիղ եկեղեցիէ՛ ինք, եղբայրը եւ ժօժօն: Ենթահակութիւն պիտի յայտնէին Աստուծոյ, եւ անկասկած նաեւ քահանային: Եւ եկեղեցիէն...

Փիէրօն պիտի ընել տար իր եղբոր այն բոլորը, որոնցմէ զրկուած էր երկար ատենէ ի վեր... Պիտի տանէր զայն յետոյ իրենց դաշտը, որ խաղայ այնտեղ մինչեւ յաղենայ:

Այս զուարթ միացերը որոճալով, երբ Կիրակի մը եկեղեցիէն կը վերադառնար, սարսափելի իրարանցումի մը մէջ զտաւ տունը: Հիւանդին սննհակը

մտնել-ելիլու մօրը անպարանջն ու անձկութիւնը միայն տեսնելով՝ Փիէրօն կուսնց իրականութիւնը: Պարզ էր այլեւս: Խոսքիւնները ծնունդ կ'առնէին հիւանդին սննհակէն, հոն էր, որ բաները շէլ կ'ընթանային:

Ահաւասիկ նաեւ հայրը, որ կը հասնէր քանդուած տրամադրութեամբ, իր հետ բերելով բժիշկը: Անոնք երկարօրէն փակուեցան հիւանդին սննհակը, եւ անկէ դուրս ելան դաւադրներու պէս փրփրայէն:

Յաջորդող օրերուն, Փիէրօյին համար անկարելի եղաւ իր եղբայրը տեսնել: Միշտ կ'արդիւրէր իրեն անոր սննհակը մտնել, այն առարկութեամբ, որ եղբայրը ջունի մէջ է, կամ՝ հանդիստի պէտք ունի: Բայց Փիէրօ կը սկսէր կատակածիլ: Կը սկսէր հասկնալ, որ իր եղբայրը... իր խեղճ եղբայրը...

Եւ օր մը, երբ դպրոցէն տուն կու գար, Փիէրօ տեսաւ ժայրը, որ դրան առջեւ բժիշկին հետ կը խօսէր: Ան կը խօսէր բժիշկին ազայաւոր ձեւով մը եւ արցունքոտ աչքերով:

Փիէրօն, որ մօտեցած էր, լսեց բժիշկին ձայնը.

- ... Յո՛յս, - կ'ըսէր ան, - պէտք է միշտ յուսալ, բայց այս պարագային, սիրելի տիկին, պէտք է Աստուծոյ ապահովել, պէտք է միայն անոր վրայ յոյս դնել: Ամէն ինչ բացատրած եմ արդէն ձեզի: Միայն Աստուած կրնայ բան մը ընել... Ինք եւ միայն ինք, աւա՛ղ...

Բժիշկին այս խօսքերը լսելով՝ Փիէրօն քարացած մնաց: «Աստուած պապան», - կ'ըսէր բժիշկը, - «Աստուած եւ միայն Աստուած»...

Բայց այլեւս ի՞նչ կը սպասէր... Որո՞ւ կը սպասէր, ի՞նչո՞ւ կը սպասէր... Աստուած պապան... Աստուած պապան...

Բոլորին զարմանքին դիմաց, հագիւթէ ներս մտած, Փիէրօն տունէն դուրս խոյացաւ, կայծակ կ'ըլլած մէկու մը պէս:

Մըրիկի արագութեամբ կը վազէր դաշտին մէջէն, երբ Փասքալ եւ երկուս

ուրիշներ հասան ետեւէն եւ սկսան վազել միասին:

- Ի՞նչ կայ, Փիէրօ, Ի՞նչ կայ, Ինչո՞ւ կը վազես, - ըսաւ Փասքալ շուշը բռնած, - ո՛ւր կ'երթանք այսպէս... Ի՞նչ պատահեցաւ...

Հեւայէն հասան ժոժոյնից տան առջեւ: Փիէրօն ներս խուփեց եւ կանչեց ժոժօն:

- Աստուած պապան... Աստուած պապան, - կակաղեց ան շնչասպառ... - Իժիկը ըսաւ... Եղբորս համար, պէ՛տք է կանչենք Աստուած պապան...

- Բայց քահանան պէտք է տեսնե՞ք... Պէտք է քահանան գտնենք, - որբազրից ժոժօն բռնորովին շուարած:

- Այո՛... Այո՛, քահանան, - հաստատեց Փիէրօ անձկութեամբ, - պիտի գայ, չէ՞... Բարեկամն է, չէ՞... Ըսէ՛, ժոժօ, Աստուած պապային ընկերն է ան, չէ՞:

- Այո՛, անշուշտ... Ի՞նչ պիտեմ, - չիտթեցաւ ժոժօ, - խօսիմ հետը... - եւ յանցաւոր շեշտով մը.

- Բայց տունը չեմ գտներ, - խոսմեցաւ ան, - չեմ գտներ ո՛ւր կը բնակի:

- Լաւ, ե՛ս գտեմ, - միջամտեց յանկարծ Փասքալ, - ե՛ս գտեմ, Գասպարինց տան մօտն է... Բալեցէ՛ք, հետեւեցէք ինձի...

- Օհ, ճի՛շդ է, ճի՛շդ է, - ոգևորւեցաւ Փիէրօ, - կու գայ, չէ՞... Վըստա՞հ ես որ կու գայ:

Փասքալ ուռեցուց կուրծքը, արհամարհոտ նայուածք մը նետեց շուրջը եւ պատասխանի փոխարէն.

- Հետեւեցէ՛ք ինձի, - ըսաւ, - հետեւեցէ՛ք կ'ըսեմ ձեզի:

Արդէն հինգ հոգի էին, երբ հասան Գասպար ստիպուեցաւ միանալ հորդային: Եւ... քայլ առաջ...

Ձարմանքի առաջին ժեսթ մը զսպելէ յետոյ, եւ անակնկալ ապշու՞թե՞նէ մը արթննալէ հտք՝ խեղճ քահանան ըմբռնեց, որ կացութիւնը շատ ալ պարզ չէր: Այնչափ ակնածալից եւ երկչոտ թուող շարագործներու այս ամբոխը, յարգանքի ծայրայեղ երեւոյթի մը ներքեւ՝ կը

մտոնէր նաեւ մարտական սուր արածագրութիւններ: Մանաւանդ սա պզտիկ Էսթօն, հոգ, ճիշդ մէջտեղը, որ պատրաստ կը թուէր բոլոր ծայրայեղութիւններուն: Կրնար մինչեւ խի առեւանգել նոյնինքն Աստուած պապան, եթէ դէմը ելլէր հիմա: Ուր մնաց ինքը, խեղճ քահանայ մը...

- Հէօհ... Փէօհ... - ըրաւ խեղճ մարդը, - կ'ուզէ՞ք... Աստուած պապան... Փիէրոյին եղբօ՞րը համար... Օ՛հ, անշուշտ որ կ'երթամ, անշուշտ... Լաւ, սպասեցէք ինձի, վերարկուս հագնիմ:

Եւ ողջ թափօր մը շարժեցաւ արագորէն դէպի Փիէրոյին եզրօր տունը, առջեւէն քահանան ու խաչը, եւ թաղին իշխանը՝ Փասքալ որ իր քովէն կ'ընթանար արի զինուորի մը պէս:

Շատ ժամանակ չդրին հասնելու հիւանդին մօտ: Այնչափ արագ քայած էին աստանորդի լակոտները, այնչափ վաղցուցած էին քահանան, որ խեղճին լեզուն դուրս ինկած էր՝ հազիւ ճամբուն կէսը ըրած:

Այս շնչահեղձ ու հեւացող ամբոխին ի տես՝ Փիէրոյին մայրը այլայլեցաւ մընաց: Մագիւրը տարազնուած էին ու աչքերը՝ ուռած:

- Օ՛հ, Փիէրօ, - ըսաւ, - հազիւ դուռը բացած, - Փիէրօ, պզտիկս...

- Մի լաբ, մայրի՛կ, ալ մի լաբ, - պոռաց տղան, ցոյց տալով քահանան, - ասուասիկ հոս է... Ահաւասիկ, եկաւ, եկաւ... Աստուծոյ բարեկամը... Հոս է, ահա...

- Օ՛հ, այո, հոս է, - կը կրկնէր մայրը, սեղմելով զաւակը իր բազուկներուն մէջ, - հոս է, տղա՛ս, հոս...

Երկարօրէն իր բազուկներուն մէջ սեղմած պահեց զաւակը, երթալ միտնալու համար յետոյ իր ամուսնոյն ու քահանային, որ անկիւն մը կը խօսակցէին: Երկար պահ մը փսփսայէ յետոյ իրարու, երեքով միասին դացին հիւանդին մօտ:

Պզտիկներէն եւ ոչ մէկը ընդունուեցաւ անոր մօտ: Նայելով Փիէրօն, որ

կը փորձէր ներս մտնել, ուժգնորէն ետ մղուեցաւ իր ծնողքին կողմէ:

Բոլոր լաճերը իրենք դիրենք վտան հիւանդին դոց դրան առջեւ: Որք լսութեամբ խմբուեցան հոն եւ ներսէն եկած նուազագոյն շշուկին դիմաց՝ լարուած մնացին: Սպասեցին խորունկ ինքնամփոփումով: Կարծես սչինչ չէին ուզեր փախցնել այն հրաշքէն, որ ներսը տեղի պիտի ունենար:

Սպասեցին, սպասեցին երկարօրէն: Յաւերթութիւն մը գրեթէ: Ու երբ քահանային արտասանած աղօթքին առաջին բեկորները սկսած հասնիլ իրեն, Փիէրօն յանկարծ ծունկի եկաւ խաչակնքելով: Ուր որ միւսները անիշապէս հետեւեցան իրեն: Փասքալ ինքն իսկ չուշացաւ խոնարհիլ ջերմեռանդ հաւատքով:

Ամբողջ ժամեր այսպէս մնացին: Ժոժօն սկսած էր նոյնիսկ աղօթքներ մը մնջիլ, երբ դուռը բացուեցաւ: Եւ այս կացութեան մէջ էր, որ մայրը տեսաւ դիրենք, երբ առաջինը դուրս կը խոյսնար սենեակէն, զէմքը ձեռքերուն մէջ պահած, Քահանան, որ կը հետեւէր անոր, չկրցաւ զսպիլ իր զարմանքը այս ամբողջ ամբիւր երկրպագութեան մէջ տեսնելով: Դանդաղօրէն առաջացաւ դէպի Փիէրօն: Գուրգուրանքով ոտքի հա-

նեց զայն, եւ հակառը շոյելով.

- Գիտե՞ս, Փիէրօ, - ըսաւ, - եղբայրդ... Աղօթեցի իրեն համար... Հիմա հրեշտակներուն հետ է ան... Հիմա երկինք տարին զայն...

- ... Երկինք, հրեշտակներուն հետ... Բայց ո՛չ, ո՛չ, չեմ ուզեր: Ես եղբայրս կ'ուզեմ, - սկսաւ յանկարծ պոռալ Փիէրօ:

- Կամաց, տղա՛ս, կամաց, - կը ըսնար հանդարտեցնել քահանան, - դուն պէտք է դո՛ւ բլաս, հիմա եղբայրդ շատ երջանիկ է... Հրեշտակ մըն է ան հիմա...

- Ո՛չ, ո՛չ, հրեշտակ չէ՛, հրեշտակ չեմ ուզեր, ես եղբայրս կ'ուզեմ, - կը յամառէր ճշալ Փիէրօ հեկեկանքով, մինչդեռ իր պզտիկ բարեկամները ըլլապատած էին զինք, բորբոսիկներ չմորած:

Քահանան երկարօրէն աշխատեցաւ մխիթարել Փիէրօն, հանդարտեցնել զինք եւ երբ մեկնեցաւ.

- Կը տեսնե՞ս հիմա, - պոռթկաց Փասքալ, ժոժօյին դառնալով, - հասկըցա՞ր հիմա: Զէ՛ք ըսած քեզի, որ Աստուած բարեկամ չունի...

Ճ. Ա.



ՊԱՆԴՈՒԽՏԸ

Պանդուխտ չէ ան՝ որ իր հոգւոյն մէջ լուսաշող
կը պահէ սէրն հայրենիքին հեռատարած,
Ան՝ որ աչքին առջեւ ունի մատնանը բաց
Հերոսներու յանժարութիւնը հռչակող:

Պանդուխտ չէ ան՝ որ ամէն օր կը տաչարի
Իր անցեալի երազային կախարդանքով,
կը տեսնէ տունն՝ ուր ծնած է, Ազբիւրին իր
Խնկոտ այգին եւ ակօսները ոսկեղի:

Բայց, երբ անոր չէ տրուած բախար մնչելու
Սուրբ հազին մէջ, Եանգատարանն իր պապերու,
Ինչպէս եթէ թաղուած ըլլար անգերեզման:

Ան է պանդուխտը եօթն անգամ դժբախտ, որուն
Աչքերը բաց, սեւեռաբիր պիտի մնան
Կարօտներով արշալուստած հեռուններուն:

ԲԵՐԿՐԱՆՔ

Ուրախութիւն, դուն բացարձակ չեզար երբեք,
Ամէն անգամ ինչ քաղցի
Խաւար լինին մէջ արցունքի.
Եւ կամ եզար բիրեզ բաժակ մը դիւրաբեկ:

Երբ գայն լեցուն կը տանէի շրթումներուն,
Կը կտորէիր ձեռքիս մէջ դուն,
Եւ կ'ըլլայի խելակորոյս,
Անհասելի, անկարելի ուրախութիւն:

Մինչեւ այսօր ես կը յուսամ որ կը պայթիս
Հրթիռի պէս ոսկեշառայլ
Ողորդելով մըռայլ հոգիս.

Եւ դեռ կրնամ ձեզմով ըլլալ
Մեռած տղան՝ որ ե՛ս էի,
Բերկրա՛նք, քերկրա՛նք, անմեղութիւն կարօտալի:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՅ

Կ. ՅԱՍՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

Զ.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Բարձրաւանդակի զէնքի շաշինէն հայ ժողովուրդի սիրտը թունդ ելած էր: Ճակատամարտի շրջագիծէն դուրս մնացած բազմութիւնները ազատութեան գերագոյն բաղձանքով կ'երգէին.

*Դարձեալ փայլեց Սասնայ գլխին,
Ազատութեան դրօշակ...*

Մուշէն մինչեւ Սիփան, Վասպուրականէն մինչեւ Արարատեան աշխարհ, Բիւրականէն մինչեւ Վանանդ ազատութեան զանգը կը հնչէր այնքան խանդավառ ու անձնագոհութեան պատրաստ զանգուածներու սրտին մէջ:

Ճակատամարտի բեմին վրայ Ծովասարի եւ Անտաքի գազաթները լուռ էին եւ սառնասիրտ խոկումներով՝ իրենց գլուխները հակած էին վար, ուր ազատամարտը կրակ ու բոց կը ժայթքէր:

Ազատագրութեան անհայտ կոհին էր, որ հրաբուխի պէս կ'ետար այս անդնդսիրտ լեւնանցքներուն մէջ:

Ճակատները ժայռացած էին իրարու դէմ:

Դիրքերէն բաւական հեռու, թրջական քանակի պահակները կ'երեւային, կը տեղափոխուէին, կ'անհետանային ու սպա համազարկ կը քանային դէպի Ֆեռայիններու դրաւած բարձունքները, որոնք շառ հեռու էին զէնքի տարողութենէն:

Ֆեռայինները երբեմն միայն, երբ տեսնէին թէ այս կամ այն ձորին կամ լեռնակողին վրայ թշնամին կ'երեւնայ, համազարկ մը կը բռնային մոռինի անվրէպ հարուածը չափելու համար: Կարծես զինազաղար մըն էր: Երկու կողմերն ալ սպասողական վիճակ մը ունէին:

Ֆեռայինները եւ կուռղ Սասունցիները այդ դիրքերը ամուր բռնած էին, ապաւինած այդ ժայռերուն ու գազաթներուն: Ուրիշ ելք եւ ուրիշ տարածութիւն չկար իրենց առջեւ: Բայց Թուրքերը կը ատանէին: Են-

բողոքներն մը կը նշմարուէր անոնց ընթացքին մէջ ու այդ անորոշութիւնը առաջացած էր ճակատամարտի քայքայիչ հարուածներէն:

Թուրք բանակը մղձաւանջային գիշեր մը անցուց, երբ Ֆետայիներն ու Սասունցիները պարտասած ու յոգնած՝ տխուր գիշեր մը կը բոլորէին, Հրայրի սուգը իրենց սրտերուն:

Թուրք բանակի շատ մը վաշտեր ճամբան կորսնցուցած էին: Զորերու ու լեռներու մէջ ինկած վիրաւորները կը մնային իրենց վայնասունին մէջ, դինուորներէն շատեր իրենց գէնքերը կորսնցուցած էին ու մանաւանդ կորսնցուցած էին իրենց ընդհանուր հրամանատարը՝ Քէօսէ Պինպաչին:

Մութ գիշերը զինադադար բերած էր: Կռիւ չկար, բայց վախ մը կը պլլուէր բռնապետութեան բանակի սրտին, ու անոնք այս անծանօթ լեռ ու ձորերը Ֆետայիներով լեցուն կը նկատէին: Քարերն ու ծառերը կը շարժէին անոնց աչքին առջեւ, ու ձորերէն բարձրացող ջրվէժներու ձայնները յարձակման փողերու տպաւորութիւնը կը բերէին իրենց:

Ահա այդ պահերուն, կէս գիշերն անցած, Թրքական բանակի կեդրոնը կը վերադառնար Քէօսէ Պինպաչին իր վաշտերուն մնացորդով, Թրլըւած ձիւնհալքէն, ցուրտէն դողահար, բայց փրկուած ստոյգ մահէն:

Ու Քէօսէ Պինպաչին, քաջ զինուորական եւ ռազմավար, անմիջապէս կ'անցնէր գործի եւ կը համախմբէր Թրքական բանակը:

Հրամանատարի ներկայութիւնը սիրտ տուաւ բոլորին: Նահանջի հրահանգը ետ կ'առնուէր: Քէօսէ Պինպաչին, փորձառու առաջնորդ ընդհանուրներուն, կը հրամայէր որ ամէն ոք հանդիստ ընէ:

- Հանդիստի փողը հնչեցուցէ: Սպաներն ալ թող հանդիստ ընեն: Բացի երկու գլխաւոր ճամբաներէն, որոնք պահակի պէտք ունին, մնացած պահակները ետ քաշեցէք: Ոչ մենք ի վիճակի ենք կռուելու Ֆետայիներուն դէմ եւ ոչ ալ անոնք մեզի դէմ, այսօրուան ծանր ու յոգնեցուցիչ դործութիւններէն ետք, յանդիստութիւն պիտի չունենան գիշերային գործողութեան մը ձեռնարկելու: Հանդիստը վաղուան կռուին սպահովութիւնն է:

Թրքական բանակը լռեց ու թաղուեցաւ գիշերուան խաւարին մէջ:

Արիւնայի այս ընդհարումներէն ետք, երկու օր, զինադուլ մը ապրեցան: Պարտասուն ճակատները լուռ էին: Միայն փոքրիկ ընդհարումներ տեղի կ'ունենային առաջապահներուն միջեւ, իրար խուզարկելու քնոյթով, իրարու ուժերը չափելու եւ տկար տեղ մը գտնելու, որմէ կողմերը պիտի կարենային օգտուիլ:

Ֆետայիները կառչած կը մնային այդ բարձունքներուն ու բոլոր երեւոյթներէն յայտնի կ'ըլլար, թէ այդ վայրին մէջ տեղի պիտի ունենար վերջնական ճակատամարտը:

Թրքական բանակը դառաւորած էր իր ուժերը մօտ քսան քիլոմետր տարածութեան վրայ, բռնելով Մովսասարի արեւմտեան փէշը, որ Սասնոյ գետին աջ եզերքով կ'իջնէր դէպի Կէլիէկուզան, եւ միւս թեւով կը քալէր Անտաքի փէշերէն, կրկին դէպի Կէլիէկուզան: Քսան Հաղար զօրք, քսան քիլոմետր տարածութեան վրայ, դիրքեր բռնած, թնդանօթները իրենց կրոնակին: Այս ուժերէն զատ, զբոսական ցեղախումբերը Մերկեմոզանի եւ Մովսասարի փէշերուն վրայ կը վիտային, սպասելով յաղթանակին, որմէ իրենք պիտի օգտուէին՝ կողոպուտի ճամբով:

Ու ճակատամարտը պայթեցաւ Ապրիլ տասներհինգին:

Առաջին վայրկեանէն Թրքական յարձակողականը բախեցաւ Ֆետայիներու երկաթէ պատուարին: Մօտիկ դիրքերուն վրայ տեղէ ունեցած այլ

բարեւոյց, առաջին փայրկեանէն իսկ, ճակատամարտի ընդթ ստացաւ: Ազատութեան ու յեղափոխութեան բանակը վաճառեան կիրքով մը զգեստնեց թրքական տոաշապահները, արհամարհեց թնդանօթներու սրտը, բազմապատկեց իր կորովը յաջորդական գրոհներուն դէմ: Արեւն արդէն կը մարէր լեռնապագաթններուն վրայ: Թրքական բանակը այդ օր ո՛չ միայն չկըրցաւ քայլ մը աւելի առաջնալ, այլ բազմաթիւ կորուստներէ ետք, որոշ դիրքերէն ետ քաշուեցաւ եւ բռնեց նոր ուղղութիւն մը, կոխը վերածելով ամէնօրեայ ճակատամարտի: Կոռուկի սպանել ազգամթերքը այս ազատատենչ ժողովուրդին, որ իր սահմանափակ ուժերով դէմ ելած էր թրքական եւ քրտական մօտ երեսուն հազար բանակին:

Սօթնօրեայ ճակատամարտ մըն էր, որ կը դրդէր ամբողջ լեռնաշխարհը: Բռնութեան ու ազատութեան անգիջող գուպարն էր, որ տեղի կ'ունենայ այս հողաշերտին վրայ, ուր դարերէ ի վեր թշնամին սոսք կոխած չէր: Բռւտ մը ժողովուրդ սպրած էր ազատ երկինքի մը տակ, հաշտուելով ազատութեան ու չքաւորութեան հետ:

Դիրքերու վրայ էին Սարբու Ալանն ու Անդրանիկը, Մուրատն ու Կորիւնը, Հաճի Յակոբն ու Ստաքիլ աղան, Սեպուհն ու Գեոխն, Մակարն ու Գալէն, Զօյսն ու Ղազարը, Յակէն ու Թաթարը, Արամն ու Սայաթ Գօղոսը, Սմբասն ու Յրոնաց Մուրատը, Մոկացին ու Ջինուր Գրիգորը իրենց սասնեակներով: Հոն, դիրքերու մէջ էին Սասնոյ իշխանները իրենց ժողովրդական բանակով ու զիրար կը փոխարինէին բնդհարումներու ընթացքին, զիշերային փոքրիկ հանդիստ մը առնելու համար միայն:

Մէկ ըսնի օրերու փորձերէն ետք, թշնամին կրցաւ ճշգրտել զիրքերը ազատութեան բանակին ու թնդանօթային շեշտակի կրակի տակ առաւ զանոնք: Ազատութեան բանակը տեղ ու դիրք փոխելու հնարաւորութիւն չունէր եւ ստիպուած էր աներիք պահել այդ դիրքերը, ուր զոհերու թիւը հետզհետէ կ'աւելնար:

Թշնամին կորուստները մտահոգութիւն չէին պատճառել թրքական հրամանատարութեան, մինչ Ծեւայիններու շարքերէն պակասած ամէն մէկ անձնուէր, թրքական վաչախ մը կորուստին հաւասար էր ազատութեան բանակին համար:

Ճակատամարտը որ կը շարունակուէր հինգ օրերէ ի վեր, թնդանօթային որոտներով, կրակէ լաւա մըն էր որ կը ժայթքէր լեռներէն ու ձորերէն: Այս անունը դրդողներուն մէջ, լեռներու հեւքը, անտառներու սօսափիւնը ու բազմաթիւ ջրվէժներու երգերը լրած էին: Լուռ էր ամբողջ ընութիւնը ու երկինքը անորոշ կերպարանք մը ստացած էր Սասնոյ բարձունքներուն վրայ: Մարդիկ դէպի երկինք նայելու ժամանակ չունէին: Ազատութիւնն ու բռնակալութիւնը իրար կը բղկտէին: Բռնակալութեան վայրի կիրքը շղթայ մը պլլած էր հայ ժողովուրդի ազատութեան ազնիւ տենչանքներուն:

Ազատամարտի ելածները արիւնարբու վոհմաններով շրջապատուած էին:

Գիշերուան խոր լռութեան մէջ՝ Վահան զեկուցումները կը լսէր զինուորական մարմնի ու մեծ յուզումով կը հետեւէր անոնց խորհրդակցութեան, վազուան ընելիքները ճշդելու համար: Վերուոր գիտութեան բերած էին դիրքերէն ու տեղաւորած քովնտի տան մը մէջ: Անոնց տնքոցը կ'ալիկոծէր ամէնուն հոգին:

Սարբու Ալանը կը պատրաստուէր մեկնել դիրքերը, երբ Հաճի Յա-

կոր Կոստանան ներս մտաւ զինուորական խորհուրդի սենեակը :
- Խեր ըլլայ, Հաճի՛, - ըստ Անդրանիկ, Հարցական նայելով անոր աչքերուն :

Գէորդ զգաց, թէ Հաճի Յակոբ նորութիւն մը ունի յայտնելիք : Կը ճաննար Հին մարտիկը եւ գիտէր, թէ պարագայ բանի մը համար տեղէն շարժող մարդ չէր սն :

Հաճի Յակոբ խօսքը ուղղելով Վահանին, բայց առաւելարար զինուորական մարմինն .

- Ինչպէս կը տեսնեմ, թուրք բանակը մեր ռազմաժողովները սպառելու հետամուտ է, իսկ մենք ճակատի վրայ մնալուն պատերազմ մղելու ի վիճակի չենք : Մեր ռազմաժողովները կը սպառի ու մենք յոյս չունինք նոր ռազմաժողովներ ստանալու : Եթէ մինչեւ անցած օր թրքական թնդանօթները չեռնեցու կողմերը կը ծծօճէին ապարդիւն, այսօր թնդանօթներու զնդակները կ'իյնան ուղղակի մեր դիրքերուն վրայ : Իսկ մենք այդ դիրքերը չենք կրնար պարպել, որպէսզի թնդանօթներու նշանառութիւնը վրիպեցնենք : Ելք մը պէտք է փնտռենք, ելք մը՝ որ մեզի հարաւորութիւն տայ թիչ մը ռազմաժողով աւելի շփոթ ստեղծելու թրքական բանակին մէջ : Եկայ այս մտաւորութիւններն ձեզի յայտնելու : Հրամանը ու կարգադրութիւնը ձերն է : Տղաքը պատրաստ են նահատակուելու այդ դիրքերուն մէջ : Նահատակութիւնը դիւրին է, կուսին շարունակութիւնն է կարեւորը :

- Դժբախտաբար, Հաճի՛, լեռները մեզի ճամբայ չեն տար, - ըսաւ Անդրանիկ, - Մեր դիրքերուն քովէն անցնող զետեքը այսօր կատաղի ջրհեղեղի մը կը նմանին, անցնիլ կարելի չէ : Իսկ Սասնոյ կուսող ժողովուրդը համախմբուած է Կէլիէկուզան եւ տեղաւորուած անոր շրջապատին մէջ : Փոքրիկ լքում մը՝ այս ժողովուրդը սուրի պիտի մասնէ : Քանի մը օր եւս դիմանանք ու մտածենք ելքի մը մասին :

Անդրանիկ մտայլ մտածումներով պաշարուած էր :
- Մտածենք, քանի ուշ չէ, - ըսաւ Հաճին եւ մեկնեցաւ դէպի դիրքերը :

Մարիու Ալան անոր հետ դուրս ելաւ : Հաճին խօսքը անոր ուղղեց .

- Գէորդ, հնարք մը մտածէ, Դուրսէն եկող Ֆետայիները այս ձորերուն մէջ կը կորսուին եւ երբ անոնց փամփուլաները վերջնան, այս անդունդներէն իրենց գլուխը չեն կրնար ազատել : Համախմբուած այս ժողովուրդն ալ իր յոյսը կապած է ազատութեան այս բանակին, որուն այնքան կը հաւատայ : Ելք մը գտնենք, ժողովուրդը այս օղակուած շղթայէն դուրս բերելու :

- Հաճի՛, միակ ճամբան Սասնոյ գետէն անցնիլն է : Խելքը գործածէ, այդ ճամբէն անցք մը գտնելու : Մարդիկ ճարեցէք, որ կարողանան կամուրջ մը կապել անոր վրայէն : Ուրիշ որեւէ ճամբայ եթէ բռնենք, մենք եւ մեր ժողովուրդը կ'իյնանք գայլին որկորը :

Գէորդ նոյնպէս բռնեց գիւրջերու ճամբան, ուր տաք կռիւ մը ծայր տուած էր :

Ծանր խոհերու մատնուած էր Վահան : Անմիջապէս սուրհանդակ հանեց դէպի Մուշ :

Կռիւները կը շարունակուէին ու ժողովուրդը, այդ օրերուն, անքուն գիշերներ կ'անցնէր Կապուրի բարձունքներուն վրայ : Սասունցիին բնաւ տրամադիր չէր խորասուզուելու Տալուորիկի եւ Սասնոյ գետի քարանձաւներէ մէջ : Թշնամի վրհմակները շատ էին ու այս անգամ Սասնոյ քա-

րանձանները իրենց հարազատ զուակները պահելու ասք կուրծք մը չէին:

»

Ս. Մարինէ թաղին մէկ խորհրդաւոր անկիւնին մէջ Մշտյ Կ. Կոմիտէն կը խորհրդակցէր:

Օտար հիւպատոսները Մուշ հասած էին եւ մեծ հետաքրքրութիւն ցոյց կու տային Սասնոյ Բարձրաւանդակին վրայ տեղի ունեցած դէպքերուն: Կեդրոնական Կոմիտէն ամէն օր զանոնք տեղեակ կը պահէր այն բոլոր աղէտներուն, որոնք տեղի կ'ունենային Սասնոյ հիւսիսն ու հարաւը: Անոնց ներկայութիւնը օտար պիտութիւններու միջամտութեան յոյսը կը ներշնչէր ժողովուրդին:

Այդ օր Սասունէն սուրհանդակ հասած էր Մուշ: Կեդրոնական Կոմիտէն սրտի անհուն ճնշումով կը կարդար պատասխանատու մարմնի երկու ատղը, որ վերջինը պիտի ըլլար, ինչպէս գրած էր Վահան:

- «Մեր քաղաքները կոտորած են: Հրայրը նահատակուեցաւ աղաւթեան ճակատամարտին մէջ: Մեր ուժերը չըջապատող օղակը կը սեղմուի ֆէլիչուզանի շուրջ: Դիմեցէ՛ք օտար հիւպատոսներուն, հեռադիցէք ուր որ կրնաք, կոտորածի առաջը անելու համարն:

Վահանի նամակը խոր սուգի կը մասնէր քաղաքը, բայց զորք կար ընելիք: Գործօն յեղափոխութիւնը դադար չունէր, խումբեր շարժման մէջ պիտի գնէին օգնութեան փութալու համար, ու դիմումներ պիտի կատարէին ամէն տեղ, ժողովուրդը կոտորածներէն փրկելու յոյսով:

Գրականապէս Գեղամը, որ այդ ժողովին կը մասնակցէր, մտահոգութեամբ խօսքը սւղղեց իր ընկերներուն.

- Դաշտի ժողովուրդը լարուած կը սպասէ դէպքերու, որոնք պիտի փոխալին Մշտյ Գաշտի ամբողջ տարածքին: Ժողովուրդը եւ զինեալ խումբերը տրեւտուած Սասնոյ շունդալից կոխներէն՝ կարող են բարձրացնել ապստամբութեան դրօշակը: Վտանգը հոգ է:

Գեղամ, որ Հրայրի ծրագիրներուն կը հետեւէր, խորապէս մտահոգւած էր նոր դէպքերով:

Կեդրոնական Կոմիտէի միւս անդամները կը պնդէին զինեալ շարժումի մը ձեռնարկելու Դաշտի զանազան վայրերուն մէջ, որպէսզի Սասնոյ վրայ եղած ճնշումը թեթեւցնեն:

- Ի՞նչ պիտի ընենք, այսպէս ձեռնածախ պիտի նստինք, երբ Սասնոյ քարտուղիներուն վրայ արիւնալի ճակատամարտը սկսած է, - ըսաւ մարտական խումբերու պատասխանատուն, ու աւելցուց.

- Ապստամբական շարժումը պիտի սկսէր նաեւ Վասպուրականի շրջանին մէջ: Կոխներ պիտի պայթէին էրզրումի քանի մը խումբերուն նախաձեռնութեամբ: Ի՞նչ լուր կայ այդ մասին, պարո՞ն Գեղամ: Եկած նամակները յոյս մը կը ներշնչեն այդ ուղղութեամբ:

- Վասպուրականը սպասողական դիմակ մը ունի, - ըսաւ Գեղամ, - ոչ մէկ յոյս ապստամբական բռնկումի մը: Ատիկ աւելի մտահոգիչ է գէնքի եւ տաղմամբերի փոխադրութիւնը, որ կատար է, մինչդեռ մեր յոյսը Վան հուստակուած տաղմամբերէն վրայ էր, որ աւազու, ու կ'ուշանայ Սասուն հասնելու:

- Ուրեմն միմակ մնացած ենք այս ճակատադրական օրերուն, - ըսին Կեդրոնական Կոմիտէի միւս անդամները: - Տարօնի կազմակերպութիւնը աղաւթեան ճակատաբարձը պիտի շարունակէ, միայն ճիշդ թափելու է նուա-

զայոյն միասով դուրս գալու այս արինալի կոխէն: Անմիջապէս այս կացութիւնը հաղորդեցէք Վահանին, որպէսզի զինուորական մարմնին հետ խորհին ելք մը գտնելու եւ ազատուելու գինուորական պաշարումէն:

Ու նոյն գիշերը սուրհանդակները ճամբայ կ'ելլէին ապստամբութեան կեդրոնը հասնելու համար:

✽

Կոխները սաստկացած էին Բարձրաւանդակի վրայ, ու եթէ թշնամին մեծ կորուստներ կ'ունենար, ազատագրական բանակն ալ ամէնօրեայ կորուստներ կ'արձանագրէր, թիւով քիչ, քայքայ անդամանելի կորուստներ, ճարտական ընտիր ու անձնուէր կուուղներ, որոնց տեղը բռնող չկար, քանի որ ամբողջ ժողովուրդ մը ոտքի ելած էր ու ինքզինք դրած զոհողութեան սեղանին:

Ապրիլ քսաներեքէին, Տիգրանակերտէն առաջացող թշնամին սպիտակ լեռան դէրձերը կը գրաւէր եւ կ'առաջանար դէպի Տալուորիկ եւ Իշխանձոր: Ֆետայիներու փոքրիկ խմբակներ կ'օժանդակէին այդ շրջաններուն: Անոնք մեծ ուժ մը չէին, որ կարենային կասեցնել հարաւէն առաջացող բազմա-հազար թշնամին:

Քրեւերը ականատես այն ծանր կոխներուն, որ տեղի կ'ունենային Կէլիէկուզանի վրայ, ու հաւաստի, որ թրքական բանակը իր թնդաօթներով ամբողջական կոռուի բռնուած է Ֆետայիներու եւ զինեալ Սասունցիներու դէմ, իրենք ալ իրենց յարմար ուժերը վստահօրէն նետեցին հարաւի կոխներուն մէջ:

Որպէս ընդհարումներէ ետք՝ Տալուորիկի եւ Ուրանքի կուուղները ստիպուած լքեցին Տալուորիկի բարձունքները եւ ամբողջ ժողովուրդով փոխադրուեցան Գեբինի արեւելքը, Սպաղանք եւ Կէլիէկուզան: Ապրիլ քսանչորսէն սկսած Սասնոյ ապստամբ ժողովուրդը եւ Ֆետայիները կեդրոնացած էին ճակատամարտի վայրը, որ քսան քիլոմէթր լայնութիւն եւ քսանհինգ քիլոմէթր խորութիւն ունէր, ամէն կողմէ պաշարուած:

Ընդհարումները կը շարունակուէին աւելի կատաղի ու աւելի արիւնալի: Ամէն օր, գիշերուան հանդիսի պահերուն, զինուորական խորհուրդը իր հետ ունենալով պատասխանատու մարմնի միակ անդամը՝ Վահան Տողբամաճեան, իր ուժերը կը դառաւորէր յաջորդ օրուան պայմարաւ շարունակելու: Միեւնոյն ժամանակ անոնք կը մտածէին ելք մը գտնելու, փրկութեան ճամբայ մը, պաշարուած ժողովուրդը դուրս բերելու երկաթէ շղթայէն:

Գիշերուան խոր լուսնեան մէջ, երբ Վահան տեղեկութիւններ տուաւ Մուշէն հասած նամակէն ու Անդրանիկ վերջացուց իր զեկուցումը զինուորական ճակատներու մասին, այդ պահուն, ներս մտաւ Գեոնին, որ զէնքերու եւ ռազմամթերքի պատասխանատուն էր: Եկած էր իր վերջնական կարծիքը յայտնելու.

— Ընկերներ, քանի մը անգամ ձեզի տեղեկութիւն տուած եմ, թէ մեր ռազմամթերքը արագ կերպով կը սպառի: Այսօր ձեզի կը յայտնեմ, թէ մէկ օրուայ պաշար ունինք, եթէ ամէն օրուայ պէս փամփուշտներու բաշխում մը կատարեմ: Որոհեցէ՛ք: Մենք գիլքային կոխը այլեւս չենք կրնար շարունակել:

— Այս կացութենէն դուրս գալու համար, — ըսաւ Անդրանիկ, — քանի մը օր առաջ Սայտո Փողոսը ընտիր խումբով մը ճամբայ հանեցինք դէ-

պի Մշոյ Դաշտ, Բերդակի շրջանին մէջ կուէ մը սկսելու համար: Ուրիշ խումբ մը զրկեցինք զէպի Գոմեր, որ Սուրբ Յովհաննէսի բարձունքներէն կ'իջի մշոյ Դաշտին: Ստիպուած ենք կուիները փոխադրել զէպի Մշոյ Դաշտ: Մենք ալ թառուցիկ խումբերու պիտի բաժնուինք, եթէ քանի մը լինամասեր մեզի ապաւէն տան:

- Առաւօտեան կուիւր ճակատագրական նշանակութիւն ունի, - ըսաւ Գէորգ: - Համաձայն եմ, որ այս օղակէն դուրս գանք: Ահա երկու շարքներէ ի վեր արիւնոտ ճակատամարտը կը շարունակուի այս բարձունքներէն վրայ, սակայն Վասպուրականն ու Կարինը լուռ կը մնան: Սասնոյ առաջին ապոտամբութեան ալ մեր աչքերը ջուր կարեցան, օգնական ուժերուն սպասելով: Ինչպէս կը տեսնեմ, կրկին անգամ մինակ կը մնանք այս բարձունքներուն վրայ: Պաշարուած մարդու մեր զօրաւոր հարուածը պիտի տանք թշամիւրի վաղուայ կուիներու ընթացքին, որպէսզի մեր կեղբորսին ղատարկումը անսկիւալ մը ըլլայ եւ թուրքերը չկարենան անմիջապէս խուժել ներս:

Ժողովականները համաձայն էին ելք մը գտնելու: Զինուորական մարմինը արդէն միջոցներ ձեռք առած էր արագ ու անսկիւալ դասաւորութեան մը համար:

Երբ իրարմէ կը բաժնուէին, Գէորգ խօսքը ուղղեց Մուրատին. - Մուրատ, մտածէ կամուրջ նետել Սասնոյ զեպին վրայ: Հաճի Յակոբը եւ Սասնոյ իշխաններէն ոմանք այդ ձորին մէջ քեզի կրնան օգնել: Այդ պիտի ըլլայ մեր փրկութեան կամուրջը:

Իբրամէ բաժնուեցան զինուորական ղեկավարները, վաղուան կուիներուն մտահոգութեամբ:

Ապրիլ քանդակներին, օրը կը բացուէր պատերազմի որոտով ու կը լեցնէր լոռն ու ձորը: Ճեղքայինները ու Սասունցիները, նախապէս ծրագրուածին համաձայն բռնու յարձակումներ կը կատարէին այս ու այն թեւին վրայ, չփոթի մատնելով թրջական զօրամասերը: Թնդանօթածիզներէն շատերը կ'իջնային անվրէպ գնդակներէն եւ ուրիշները անոնց կը յաջորդէին: Այդ օր, թրջական բանակի բռնու յարձակումները կ'ընկրկէին: Թրջական հրամանատարութիւնը կը կարծէր, թէ Ճեղքայինները եւ Սասնոյ կուուղները ընդհանուր յարձակողականի մը սկսած են եւ կրնան այս կամ այն լեռնանցքէն բանակին թիկունքը անցնիլ:

Կուիները նոյն թափով շարունակուեցան կէսօրէ ետք ու մինչեւ արեւմուտ:

Թնդանօթն ու գէնքերը կը լուէին: Զորերէն վաթ խուժող ջրվէժներու ձայն էր, որ մթնոլորտը կը լեցնէր բնութեան համերգով:

Պորհրդաւոր գիշերը, որ կը տարածուէր պատերազմիկներու վրայ, հանդիստի գիշեր մը չէր: Երբ թրջական բանակատեղիին մէջ ուժերը կը դասաւորէին, նոր ուժեր կը բերուէին կոտորակուած շարքերը լեցնելու, անպին Ճեղքայիններն ու ժողովուրդը ճամբայ կ'ելլէին Կէլիկուզանէն դէպի Կրըշիկի բարձունքները: Արագ, առանց խուճապի, կը դատարկէին կեղբորսն եւ զգալի հեռաւորութիւն մը կը ստեղծէին իրենց եւ թուրք բանակին միջեւ:

Ճեղքայինները եւ Սասունցի մարտիկները անշուշտ հեռացած էին իրենց գրաւած դիրքերէն, անցնելով դէպի այն բարձունքները եւ կիրճերը, ուր հաւաքուած էր ժողովուրդը, զինուորական մարմինը եւ Վահանը, որպէս պատասխանատու ղեկավար:

Անձկալի դիւեր մը կ'ապրէր ազատութեան դրօշակիր այս ժողովուրդը:

Մուրատ եւ Հաճի Թակոբ քաղմաթիւ երիտասարդներ իրենց հետ առած՝ Յասնոյ գետի եզրքը նեղ անցքի մը վրայէն կտուրջ կապնելու աշխատանքին լծուած էին:

Աւաւօտը կը բացուէր Կապրուիի եւ Կրըշեկի բարձունքներուն վրայ, ուր համախմբուած էին Տալուօրիկի եւ Շատախի Մասունցիները: Հոն ներկայ էին Ֆետայիները եւ բոլոր զեկավարները:

Բաց երկնքի տակ ազատամարտի բանակն էր, որ այդ բարձունքներէն ճամբայ կը փնտռէր, դիմացի հորիզոնները կտրել անցնելու:

Այդտեղ, պատերազմի դաշտին վրայ, խորհրդակցութեան կը նըստէին իշխանները, զինուորական մարմինը, Ֆետայիներու զիխուրը խմբապետները: Միասին ու համակամ կ'որոշէին ժողովուրդը ճամբայ հանել զէպի Մովսար, անցնելով այն կամուրջէն, որ մեծ ճիւղով կապած էին ամենի գետին վրայէն, գետակ մը, որ դարձնան ձիւնհալքէն կատաղի յորձանուտներով կը դըրդէր Տալուօրիկի ձորը:

Ձինուորական խորհուրդի մտահոգութիւնը, այդ պահուն, Վահանի անձին պաշտպանութիւնն էր: Ու այդ պարագան ծանր կը կշռէր անմիջական քայլ մը առնելու համար:

— Գարոն Վահան, — խօսք առաւ Անդրանիկ, — համաձայն մեր որոշման, Մուրատ, Քեռին եւ Սեպուհ ընտիր ու ստուար խումբով մը պիտի ընկերանան ժողովուրդին, Յովասարի բարձունքներէն անցնելու Մշոյ Դաշտ: Մուրատ այդ ընկերներով պէտք է անմիջապէս անցնի Վասպուրական եւ Վանէն փախուածները փոխադրէ զէպի Տարօն: Դաշտէն եկած կամաւոր խումբերը ժողովուրդին պիտի ընկերանան, որպէսզի շեշտակի ճարձածներով ճամբայ բանան իրենց, մինչեւ Միւրին-կատար եւ Հաւատարիք: Իսկ այստեղ հաւաքուած Ֆետայիներն ու Մասունցի կռուողները բազմաթիւ խումբերու պիտի բաժնենք, որպէսզի ամէն մէկ խումբ իր հնարամտութեամբ եւ քաջութեամբ վտանգի դիմերը անցնի: Որոշ ժամանակ մը, այս լեռնանցքներուն մէջ պիտի պահենք խումբերը, տեղ պիտի փոխենք եւ թերեւ Անտօքի վերին փէշերն ալ ապաստանինք, նկատի ունենալով որ ձիւնը թեթեւցած է այդ վայրերէն:

Մտածուքով կը խօսէր Անդրանիկ ու մտահոգութիւն կար Գէորդի եւ միւս զեկավարներու դէմքին վրայ: Վահան զգաց թէ այդ մտահոգութիւնը կ'առաջանար անկէ, որ ինք չէր կրնար ֆետայիներու հետ գիշերային ճամբորդութիւններ ընել, կիրճերը անցնիլ կամ կռիւներէն խուսափել:

— Գիտե՛մ ձեր մտահոգութիւնները, իմ մասին կը մտածէք: Ես այս կածաններէն ձեզի հետ պիտի չկարենամ անցնիլ: Ձե՛մ ուզեր որ խումբերը իմ պատճառաւ վտանգի ենթարկուին: Գանի մը զինուորներ դրէք ինձի հետ, ես կ'ապաստանիմ այս քարանձաններէն մէկը, տեղը միայն Խրկու Մասունցիները պէտք է գիտնան եւ դուք: Եթէ փոթորիկը անցնի, թերեւ կարենանք իրար դռնել: Խումբերը այս գիշեր իսկ պէտք է մեկնին, ամէն մէկը իր ուղղութեամբ: Պատասխանատու մարմնի երկու անդամները արդէն նահապետուած են ազատութեան ճանապարհին: Երբ ես Բարձրաւանդակ եկայ, բնաւ չմտածեցի իմ անցեալ կեանքին դաճնալու, ազատութեան այս բարձրաբերձ սեղանին, իմ կեանքն ալ թող մատաղ ըլլայ:

Յուզուած էին բոլորը ու խօսքը կը պակսէր այդ պահուն:

Երեք ընտիր Ֆետայիններ, Լեւոնի ղեկավարութեամբ ընկերացան Վահանին ու նամբայ էլուն ղէպի բարանձաւը:

Վահան, մեկնած պահուն, դարձաւ Գէորգին եւ Անդրանիկին:

— Այնտեղեցէք սուրհանդակներ հասցնել այս կողմերը, որպէսզի իրարու կապուինք եւ դիտենք մեր ընկիւղը:

Վճիռը կամովին տրուած էր: Վահան պիտի մնար Սասնոյ բարանձաներուն մէջ, որպէս պաշտպարական պահակը ազատագրական այս արտամարտութեան:

Զինուորական մարմինը ազատ կը զգար արագ շարժումներ կատարելու, որպէսզի կարողանայ անձնուրացներու այս բանակը, որ Ֆետայիններէ եւ զինեալ Սասունցիներէ կը բաղկանար, ցրուել Տարսնի ընդարձակ աշխարհին մէջ:

Այն պահուն, երբ քանի մը մարտիկներ եւ տեղին ծանօթ երկու Յասունցիներ Վահանը կ'առաջնորդէին ղէպի թաքստոցը, Սարերու Աւանը խոր տխրութեամբ, քարի մը վրայ նստած, դուրսը հակած իր զէնքին, տաք տարի աւաջ պատահած ղէպերուն մասին կը մտածէր:

Անդրանիկ մտնեցաւ անոր:

— Գէորգ, ճամբայ ելլենք, քարի վրայ նստած, քարի պէս ծանրացած ես մտածումներու մէջ:

— Անդրանիկ, այս դարիպ մարդը մեր ձորերուն մէջ պիտի նահատակուի: Ան ստեղծուած չէ այս ժայռերուն մէջ շարժելու: Տաք տարի աւաջ, Մուրատ Պոյաճեանն ալ, հակառակ իմ խորհուրդիս, թաքստոց ապաստանեցաւ ու մենք ծուղակը ինկանք եւ բանտի տանջանքները վաշտնեցինք:

— Ի՞նչ կրնանք ընել, — ըսաւ Անդրանիկ, — եթէ խուճերը հոս պահենք, անոնք կը կոտորուին, իսկ եթէ Վահանը մեզի հետ աւնենք, կէս ճամբան կը մահանայ, մեր աչքերուն առջեւ:

— Վերջը նահատակութիւնն է, — մենախօսեց Սարերու Աւանը, — մեր տղաքը իրենց զէնքերուն վրայ կը մեռնին, բայց անձնատուք չեն ըլլար:

Անոնք ճամբայ պիտի ելլէր, ու Վահան կը մնար ընտիր մարտիկներու պաշտպանութեան տակ:

Հին օրերու փարթիզանական կռիւներուն կը վերադասանային Ֆետայինները:

Ու ժողովուրդը հրաման ստացաւ շարժելու ղէպի Փոզասար եւ Մուշ:

Լեւնական ժողովուրդը, քարի դաւակ, չարքաչ ու մարտիկ, ճամբայ կ'ելլէր հեղեղի պէս հոսելով ղէպի փրկութեան կամուրջը, որ զինք պիտի ազատէր թրջական թնդանօթնիւնէն եւ բանակի խուժումներէն:

Մէկ ժամուան ընթացքին արդէն լեւնային բարձունքները դատարկուած էին ժողովրդական զանուածէն: Անի չկար: Դժգոհանքի որեւէ խօսք չէր լսուեր: Անուակներն իսկ գիտէին վտանգին ծանրութիւնը, եւ կը քաշէին մարտիկի մը լրջութեամբ: Սասունցի մանուկները կուսին ժամանակցած էին ու իրենք երբմն ժայռերու կատարէն քարեր նստած էին ղէպի թրջական թնդանօթնիւնը, մանկական այն միամտութեամբ, թէ այդ քարերով կրնային լռեցնել թնդանօթներու ոռնոցը:

Սասունցի զինուորներու մեծ մասը ժողովրդապետը կարաւանի առաջապահը կը հանդիսանար, իսկ միւս մասը Ֆետայիններու հետ միասին,

յետսպահ ուժն էին, որ պիտի ապահովէր շարժող ժողովուրդին թիկունքը, որեւէ հարուածէ:

Ու ժողովուրդը, Մուրաթի եւ Մշոյ Գաշտի Ֆետայիներու զեկեղաբեւեմը՝ կ'անցնէր կամուրջը ու կը բռնէր Գեղաշէնի ճամբան, որ թրջական թնդանոթներուն ու բանակին հասողութենէն անդին կը մնար:

Կատաղած գետը ճամբայ պիտի չտար թշնամիին, որ իբր հարազատ զաւակները Հետապնդէ:



Մայիս մէկի առաւօտը հազիւ քաջուած՝ թնդանոթները որոտացին դէպի Ֆետայիներու դիրքերը: Ժայռերն ու բլուրները լուս էին: Թուրք բանակը իր արձակած թնդանոթներուն արձագանդները միայն կը լսէր:

Երէկուան արիւնալի կոուէն ետք, այս լուսթիւնը խորհրդաւոր թուեցաւ թուրք հրամանատարութեան: Մինչեւ կէսօր խուզարկութիւններ կատարեցին ալ ու ձախ, լեռնանցքներուն մէջ, հետախուզական խումբեր մտան ձորերէն ներս, բայց լուսթիւնը կատարեալ էր:

Թրջական բանակը, միայն երեկոյեան դէմ յանդգնեցաւ շարժիլ զանազան լեռնանցքներէ ու ձորերէ գէպի կէլիկուզան:

Ամայի ու լուս էր Մասնոյ ապստամբութեան կեդրոնը: Այն շուքները որոնք տան ու գոմերու պահակութեան վարժուած էին, կը հաջէին ներս խուժող բանակին դէմ: Գիւղին մէջ երկու ծերունի վիրաւորներ կային մահամերձ: Ու պառաւ մը, որ չէր Հեռացած իր օճախէն: Եփօթը կ'աւելնար թրջական բանակին, երբ կը զգար թէ ինք մ'արձուած է խորունկ անդունդի մը մէջ, որ կը կոչուի Ընկուզենիներու ձոր, ու իր ալ ու ձախ կողերուն վրայ՝ կը բարձրանային Անտօք, Գերին ու Մովսասար:

— Ո՞ւր է Մասունցի ժողովուրդը, Ո՞ւր են Ֆետայիները, — վտանգաւոր ուժանակներով զինուած, կը քաջազանչէին թուրք զինուորներն ու սպանները:

Զինուորներէն շատերը դիտէին, թէ իրենց ընկերներէն չորս հոգի, բանակը լքած՝ դացած միացած էին Ֆետայիներուն, Մուլթանի անմարդկային բռնութեան դէմ բողոքելով: Թուրք զինուորները դիտէին, թէ լեռներու վրայ, Հերոսական կոխներ մղող Հայերը արդարութեան ու ազատութեան համար կը նահատակուէին: Հիժա, իրենք, Ընկուզենիներու ձորին մէջ, անդունդներու սարսափազդու խուլ ձայներէն ահարկի, կը մտածէին թէ կրնայ պատահիլ որ իրենք ալ աննպատակ իշնան այս խորխորատներուն մէջ, ինչպէս որ իրենց կողքին ինկած էին շատերը, առանց տարական գիտակցութեան, թէ ինչո՞ւ եկած էին այս բարձրաբերձ լեռները, սուրէ անցնելու համար ժողովուրդ մը, որ պարզ հովուական կեանք մը կ'ապրէր, այս ամենի լեռներուն վրայ:

Այդ օր, ու մանաւանդ ամբողջ գիշերը անհանդիստ ու խռովայրջ վիճակ մը ունէր թրջական բանակը: Աշալուրջ հսկողութիւնը, այդ անծանօթ վայրերուն մէջ, նուազագոյն ապահովութիւնն էր: Յոգնարեկ զինուորները մէկ աչքը գոց միւսը բաց, ամէն վայրկեան կայծակնային յարձակումներու կը սպասէին: Այդ հանդիստը աւելի յոգնեցուցիչ էր, քան արիւնալի ճակատամարտը: Ժայռերն ու ծառերը կարծես շարժող հսկաներ ըլլային, որոնք ամէն կողմէ թուրք զինուորներու վրայ պիտի խոժէին:

Գիշերային մթաստուերներն ու վախը բնութեան շարժապատկերը կը դարձնէին գինուորներուն երեւակայութեան մէջ:

Սասունցին չկար: Ֆետայիներու շեշտակի գնդակներուն վզոցը դաղբած էր: Թրջտկան բանակը Մուշի էր խարխոհներէն հեռու, այս անդունդներուն մէջ, բնութեան զտման տեսարաններէն դողահար, վախի եւ արհաւիրքի սարսուռը կ'ապրէր: Կարծես թէ բարձրաբերձ լեռները պիտի զղրղային եւ հրաբխային ժայթքումով մը անդունդները թափուէին, իրենց ծեռուտ կոյտերուն տակ ծածկելով թրջտկան բանակը:

Ճ

Մայիսեան այդ պայծառ առաւօտուն, ժայռերու բարձունքներէն, Անդրանիկի եւ Գէորգի հետ մնացած ընտիր Ֆետայիները, արծիւի պէս կը հսկէին հեռաւոր ձորերուն եւ աչքերը յառած էին Սասնոյ գետէն անդին, Մովսսարի կողերուն:

Գէորգ ձայն տուաւ, խօսքը ուղղելով Անդրանիկին.

- Անդրանիկ, նայէ՛ հոն, Գեղաշէնի լեռնակողերը, ժողովուրդը արդէն անցած է վտանգի սահմաններէն:

Անդրանիկ գիտակը աչքերուն, երբ տեսաւ ժողովուրդին եւ մարտիկներուն անցքը Մովսսարի փէշերէն, ուրախութեամբ բացագանչեց.

- Տղա՛ք, ժողովուրդը եւ մեր գինուորները ազատած են վտանգէն, մենք այլեւս ճամբայ մը պէտք է դանենք դուրս գալու այս շղթայէն. Գէորգ, մէկ խումբ առ հետդ, զարկ անցիր Անտոջը եւ Կուրտիկը, իջի՛ր Գոմբը: Միւս խումբը Մակարի հետ թող բարձրանայ Մովսսարի բարձունքը եւ հոն դիրք զբաւէ: Ես ալ խումբով մը կ'անցնիմ Մերկեմոզան եւ կ'իջնենք դէպի Ս. Կարապետ:

Քիչ մը շուրջը նայեցաւ Անդրանիկ ու շտեպաւ Կորիւնը, որպէսզի անոր ալ հրահանգ մը տար: Դարձաւ Գէորգին.

- Գէորգ, Կորիւնը եւ իր խումբը չեն տեսներ. ո՛ր մնացին արդեօք:

Ու նոր սկսան ժայռերուն մէջ ապաստանած Ֆետայիները հաշուի առնել ու զանազան դիրքերէն եկող խմբապետներուն հարցնել Կորիւնի եւ իր խումբին մասին:

Վերջին վայրկեանի տեղեկութիւնը այն եղաւ, թէ Կորիւնը Անտոջի փէշերը կը պահէր ու երբ իրենք Կէլիէկուզանը պարպեցին, Կորիւնը իրենց հետ չէր:

Գէորգ մտահոգութիւններու մասնուեցաւ.

- Անդրանիկ, մտահոգուած եմ Կորիւնի խումբով, անիկա իր դիրքերը չի լքեր առանց գինուորական մարմնի կարգադրութեան: Թուրք զօրքերը պիտի բարձրանան Անտոջի փէշերը եւ խումբը վտանգեն: Ես այժմէն ճամբայ կ'ելլեմ, Անտոջի բարձր կողերը կարելի անցնելու: Թեքեւս կարենան լուր հասցնել Կորիւնին, որ մեզի միանայ:

Բոլորն ալ ոտքի ելան: Խումբերը քամուած էին: Ամէն մէկը բունց իր ուղղութիւնը ու քարայծներու նման անհետացան բարձունքներու եւ նեղ կամուսներու մէջ:

Ժողովուրդը ապաստուած էր ու մարտիկներուն մեծ մասը դանոնք

կ'առաջնորդէր դէպի Մուշ եւ Մշոյ Դաշտ : Աւ իրենք ազատ էին փոթորիկի պէս անցնելու Բարձրաւանդակի այնքան ծանօթ վայրերէն :

Կէսօրը անցած էր, երբ Մովսասարի փէշերուն, Անտօքի ձորերուն եւ Ծատակի լեռնանցքերուն վրայ Հրացաններ պայթեցան : Բուռն կոխեր, որոնց տեղը արագօրէն կը փոխուէր ու պահ մը յետոյ, կրկին լռութիւն :

Ճետախներու խումբերը կ'անցնէին արագօրէն : Աւ երբ կը Հանդիպէին թրջական ջրկատի մը կամ ճամբան կտրող վաշտի մը, կայծակնային կրակի տակ կ'առնէին զանոնք : Ընդհարումը կարճ կը տեւէր : Յանկաքծակի բեկած թուրքերը, զիակաները ձգած՝ կ'ապաստանէին այս ու այն ձորը : Ճամբան արգէն բացուած էր :

Սարհաս Անտօքի կողերուն վրայ կորիւնը փնտռելու ելած միջոցին՝ իր դէմ կը գտնէր թրջական ջրկատ մը եւ շելտակի Հարուածի տակ կ'առնէր զայն, ու նամբան կը բանար խումբին, դէպի բարձրաւանդակ ժայռերը : Թուրքերը բազմաթիւ զիականեր կը ձգէին ձորին մէջ ու ահաբեկ վար կ'իջնէին :

Կորիւնն ու իր ընկերները գտան ժայռերուն մէջ, զիբքերու վրայ, Հակած իրենց դէնքերուն, թշնամին Հարուածելու պատրաստ : Անոնք անդեակ չէին, որ Ընկուզենիներու ձորը զատարկուած է ու իրենք ստիպուած են վարթիզանական կոխեր մղել, ազատութեան ճակատամարտը տարածելու Մշոյ Դաշտի լայնքին ու երկայնքին :

Սարերու Աստիկան Հասնելէն թէ՛լ ետք՝ կրկին ընդհարում, կրկին բուռն կոխ, ու Ճետախները կ'անցնէին փոթորիկի նման :

Թրջական բանակը շփոթանքի մատնուած էր : Այս բուռն կոխները կը ըսուէին աջն ու ձախն ու դէպի Հիւսիս կը տարածուէին :

Քսանէ երեսուն քրտնթոր տարածութեան վրայ՝ այս բուռն ընդհարումներուն բնոյթը ճշգրիտ դժուար էր : Մանաւանդ դժուար էր ստուգել, թէ ո՛ւր է ըմբոստներու զխաւոր ուժը եւ ի՞նչ ծրագրով կը շարժի :

Ճիշդ այդ ժամերուն, երբ կէսօրը արդէն անցած էր, Քէօսէ Պինպաչիի ուսուցիչը կը տեսնէր Մովսասարի փէշերէն անցնող բազմահազար ժողովուրդը, որուն անցքի ընթացքին ընդհարումներ տեղի կ'ունենային, այդ կողմի ճամբաները բռնող թրջական քանի մը վաշտերու եւ քրտական ուժերու դէմ :

Թնդանօթները դեր մը չունէին կատարելիք ու թրջական բանակը զետի յորձանքներէն անցնելու անկարելիութեան առջեւ կը գտնուէր :

Քէօսէ Պինպաչին մտահոգ էր : Երբեմն-երբեմն զէնքի ձայներ կու գային Անտօքի փէշերէն, բոլորովին Հեռու Մովսասարէն : Երբեմն բուռն ընդհարում մը կը սկսէր Կուրտիկի կողմը, բանակի թիկունքը ու կը մարէր կէս ժամէն : Քէօսէ Պինպաչին կը մտածէր, թէ Ճետախները վարթիզանական շարժումի մը ձեռնարկած են, թրջական բանակը քարշ տալու Մովսասար ու Անտօք, լեռներ, ձորեր, որոնք զարնան Հեղեղներէն ելածն զետեր ունին իրենց ծոցին :

Աւ Թնդանօթները, աննպատակ կ'ոռնային դէպի Մովսասար, ուրկէ կ'անցնէր ժողովրդական զանգուածը, Ճետախներու պաշտպանութեան տակ :

Թրջական շրթային դուրս եկած էին Ճետախները, ու Համախմբուած Անդրանիկի եւ Սարհասի շուրջ, Անտօքի արեւելեան բարձունքին վրայ, որ դէմ առ դէմ էր Մովսասարի արեւելեան կողերուն :



Տաք կռիւ մը կը պայթէր Գեղաշէնի, Շուշնամերկի եւ Քորի վանքի շրջափակին մէջ: Ու կռուի խուլ արձագանգներ կը հասնէին Անտոքի բարձունքները, ուր Անդրանիկ, Գէորգ եւ Կորիւն, Տալուորիկի քաջելուն հետ, զանազան դիրքեր գրաւած՝ կռիւներ կը մղէին ալ ու ձախ:

Սարհատ մտահոգութեամբ դարձաւ Անդրանիկին, որ դիտակը աչքերուն, կը խուզարկէր Մովսասրի այն վայրէջքը, ուրկէ պայթած զնդակներու արձագանգը կը հասնէր իրենց ապաստանած ժայռերուն:

— Անգրանիկ, յոյս ունիմ, որ հիմա Քորի շրջանը հասած պիտի ըլլան Դաւիթ մարտական այն ուժերը, որոնք Սեպուհի, Սմբատի եւ Տէր-Փոթորիկի ղեկավարութեամբ Մուրատին պիտի օժանդակէին:

— Մուրատը ծանր վիճակի մէջ պիտի ըլլայ, եթէ անոնք ժամանակին չհասնին Քոր, ուր կռիւը տեղի կ'ունենայ, — ըսաւ Անդրանիկ, — Մուրատի հետ բազմութիւնը շատ է, իրեն ընկերացող հարիւր տասներհինգ Ծեւայիններէն ոմանք վիրաւոր են, եւ անոնց փոխադրութիւնը ինքնին ծանր բեռ մըն է: Ձինուորներէն շատերը վամպուշտ չունին: Եթէ յաջողի այդ զիծը անցնիլ, ժողովուրդը փրկուած կ'ըլլայ:

— Եթէ կռիւը մինչեւ արեւամայր շարունակուի, — վրայ բեքաւ Գէորգ, — զիչերանց կ'անցնինք գետը եւ կը բարձրանանք Մովսատք: Մենք երեք կամ չորս ժամէն այդ բարձունքները կ'ըլլանք, իսկ թրջական զօրքը երկու-երեք օր պէտք ունի տեղաշարժ մը ընելու համար: Յանկարծակի հարուած մը, ու՝ թշնամին կը մատնուի շփոթի եւ թերեւս այդ ձեւով կարենանք փրկել մեր ժողովուրդի մնացորդը:

— Լաւ միտք է, — ըսաւ Անդրանիկ, — մեր ուժերը ամփոփ պահենք, որպէսզի մտթը կոթերուն համար ելլենք: Կռիւը ամէն տեղ նոյնն է, ուր որ աչդու հարուած մը կրնանք սառլ, պէտք է անմիջապէս դադարեանք, թշնամի ուժերը ջլտտելու համար:

Անոնք կը խօսէին հակած իրենց զէնքերուն, աչքերը յաւած հեռուն ու իրենց խօսքը կարծես խոկում մըն էր:

Ու անոնք ժայռերու բարձունքներէն արծիւի սրատեսութեամբ կը հետեւէին Բարձրաւանդակի թուր անցքերուն ու կը շփէին ամէն շշուկ:

Վանքի շրջապատին մէջ պայթած կռիւը վերջ դատած էր ու լուսթիւն կ'իջնէր ամբողջ տարածքին վրայ:



Քորի վանքին մէջ ապաստանածները յոգնարեկ էին եւ կը հանդուստանային: Վիրաւորներու տնքոցը այս արիւնալի նահանջին մթնօրացը կը ծանրացնէր:

Մուրատ եւ Քեռին իրենց զինուորներով աշալուրջ կը հսկէին: Այս բազմութիւնը անվտանգ Դաւիթ պիտի փոխադրուէր:

Թնդանօթները կ'որոտային իրենց դէմ, բայց իրենք հեռու էին անոնց հարուածներուն հասողութենէն: Թշնամին Գիթիթէն, Մուշէն, Հաղոյնն ու Տիգրանակերտէն սաքի հանած էր զօրք, սասիկան եւ քիւքուս խումբեր, որոնք ամէն կողմէ սաշարած էին Սասնոյ Բարձրաւանդակը:

Հեռանցքները կը վիտային թշնամիներով, մանաւանդ այն վայրերը, ուր արիւնոտ ճակատամարտներ շկային: Անոնք ճամբան կորսնցուցած հայ մը կը սպաննէին, անօգնական գիւղ մը կը կողոպտէին, կամ հայ կին մը, աղ- ջիկ մը առեւանգելու ետեւէ կէին:

Խուճբ մը հայ կամաւորներ ներս խուժեցին վանքի շրջափակէն.
- Մուրա՛տ, շրջապատուած ենք քիւրտերէն:
Ու կռիւը սկսաւ դեռ կէսօր չեղած:



Երեկոյեան մշուշը անդունդներէն կը ծաւալէր դէպի բարձունքները: Աղատութեան մարտիկները ձուլուած էին ժայռերուն եւ լուռ էին քարի պէս:

Պոքիտրատէն վեր քալուածքի թնդոցներ լսուեցան: Մարտիկները իրենց զէնքերը ուղղեցին դէպի անդունդ: Ժայռերու դարձուածքին տեսան երեք Մասունցիներ, որոնք քարէ քար կ'անցնէին դէպի վերելքը: Քանի մը վայրկեանէն անոնք հասան բարձրադիր ժայռերը ու իրենց դէժ գաան Ան- դրանիկի խումբը:

- Փառք Աստուծոյ, - բացաղանչեցին միաբերան, - ձեզ գտանք:
- Ուրկէ՞ կու գաք, տղա՛ք, - ըսաւ Անդրանիկ, - մ'օտ եկէք:
- Քորի վանքէն կու գանք, ուր ծանր կռիւ մը տեղի ունեցաւ, - ը- սաւ անոնցմէ մէկը, - ձեզ Մուրատը գրկեց, յայտնելու համար ձեզի թէ ժողովուրդը վտանգի պէ՛ն անցաւ ապահով:
- Ի՞նչ պատահեցաւ այդտեղ, - Հարցուց Մարհաս, - որքան կրցանք հետեւիլ, շատ տաք կռիւ մը տեղի կ'ունենար այդ կողմերը:
- Պարո՛ն Գէորգ, արշալոյսը չբացուած գիւղը եւ վանքը շրջապատ- ւած գտանք: Մուրատ արիւնալի կռուի մը բռնուեցաւ հոն խուժած զօրքե- րուն ու բազմահազար Քիւրտերուն հետ: Ամէն կողմէ պաշարուած էինք եւ ելք մը չէինք գտներ մեր ճամբան շարունակելու: Մուրատ եւ Քեռին օրհասական կռուի մէջ էին, երբ վերի բլուրներէն համազարկ բացուեցաւ թշնամիին դէմ: Այդ պահուն կիներէն եւ աղջիկներէն ոմանք իրենք զիրենք կատողած ֆուրկերուն մէջ կը նետէին, թշնամիին ձեռքը գերի չէյնալու հա- մար: Սակայն, երբ ժողովուրդը եւ մարտիկները զգացին, թէ վերի բլուր- ներէն բացուած համազարկը օգնութեան հասնող Ֆետայիներու կողմէն էր, սիրտ առին ու խիզախեցին կռուին մէջ: Պարո՛ն Գէորգ, այդ օգնու- թիւնը փոթորիկի պէս եկաւ: Տէր-Փոթորիկի խումբն էր, որ դէպի Մշոյ Դաշտ կ'ուզուէր Մովսաթի փէշերէն, ու երբ տեսան թէ Մուրատ եւ Քե- ոին շրջապատուած՝ ծանր կռուի մը բռնուած են, ետ դարձան եւ թիկուն- քէն հարուածեցին թշնամին, որ երկու կրակի մէջ մնաց եւ մեծ կորուստ- ներով ջրուեցաւ: Մուրատի, Քեռիի եւ Դաշտի խումբերը միացան եւ ժո- ղովուրդը առաջնորդեցին դէպի Մշոյ Դաշտ:
- Տէր Քերոբը իր անունը արդարացուց, - ըսաւ Անդրանիկ, խօս- քը ուղղելով Մարտիկներուն, - քանի-քանի կռիւներու մէջ անձամբ տեսայ այդ քահանային քաջութիւնը, բայց այս խիզախութիւնը իսկապէս փո- թորկալի օգնութիւն մը եղաւ, ապրի՛ Տէր-Փոթորիկը:
- Պարո՛ն Անդրանիկ, Մուրատը գինուորներուն եւ ժողովուրդին կ'ը-

սէր թէ իրենց կեանքը կը պարտին Տէր-Փոթորիկի խիզախ յարձակողականին: Ժողովուրդը ղէպի Մուշ պիտի ուղղուի, իսկ տղամարդիկ եւ գինւած ուտիքը Գաշտ պիտի իջնեն:

Սուբհանդակները ալլելու շվերադարձան ղէպի Գոթ, որ դատարկըւած էր ժողովրդական զանգուածներէն:

Մարտիկները իրենց տարերքին մէջն էին, շարժական բռունցք մը, որ անկաշկանդ կը սաւառնէր լեռ ու ձոր:



Գիշերը բարեկամն էր Ֆետայիներուն:

Ու անոնք ազատ ու համարձակ ճամբայ ելան լեռները կտրելանցնելու համար: Երբ Անտրքի արևելեան զօտիթափներէն կ'իջնէին Մերկեմոզան, Կուրտիկ բարձրանալու, Սարերու Աւլանը անխօս ու առանձնակի կը զայլէր, հոգեւին լեռներուն մնաս բարով կ'ըսէր, լեռներ, որոնք ազատութեան դրօշը ունէին իրենց գագաթներուն, բայց կը զրկուէին իրենց մարտիկներէն: Լեռները պիտի լռէին խոր տխրութեամբ ու վարարուն գետերը պիտի երգէին նահանջը ազատութեան բանակին:

Վրդովմունքով աւելած էր Սարերու Աւլանին սիրտը, ու պատրաստ էր ուսմբի մը պէս պայթելու, որպէսզի ազատութեան շեփորը հնչէ ամէն տեղ, աւելի հզօր, աւելի յաղթական, իբրև սիրտանք մշուշապատ Բարձրաւանդակին:

Քարերը անոնց ոտքին տակէն կը սահէին ղէպի անդունդը ու անոնց թնդիւնը կը միանար Ֆետայիներու ոտնաձայնին՝ բնութեան լռութիւնը խռովելով:

Լեռները կառչած էին իրենց հարազատ զաւակներու ոտքերուն, ու քարերը որ կը բաժնուէին իրենց կայքէն ղէպի ձորերը, կարծես թէ երթաք բարոյքը կը պոռային Ֆետայիներուն, որոնք կաղնիի անտառներու պէս կը շարժէին ազատութեան արիւնտա ճանապարհներուն վրայ:

Մութ գիշեր էր, լուսին չկար, խումբը կ'երթար արադ-արադ: Ու ահա, երբ անոնք հասան Կուրտիկի տաջին բլուրները, այս ու այն կողմէն թրքական պահակները ձայն բարձրացուցին.

- Ո՛վ էք, ձեր վաշտին անունը տուէ՛ք...

Պահ մը լռութիւն:

Ու թրքական վաշտի համազարկը շրջապատը ղզրղէց:

Ֆետայիներու համազարկը ալ ու ձախ վիվուկ բարձրացուց, ու շեշտակի հարուածները վայնասուն ստաշացուցին բլուրներուն վրայ: Ֆետայիները կ'անցնէին արադ-արադ, իրենց ճամբուն վրայ դիտապատա տապալիով թուրք տասնեակները, որոնք ճամբան կորսնցուցած՝ ժոպիի ղէմ կու դային:

Սարերու Աւլան այդ ընդհարումին կատաղօրէն կռուեցաւ, քարէքար, բլուրէ-բլուր անցնելով, կարծես լեռներու զայրոյթը կը թափէր թշնամիին դիմուն:

Անդրանիկ հրահանգեց որ անձնուբացները արագօրէն աւելի վերին բարձունքները զբաւեն, ուր պիտի ամրանային այս ու այն խմբակները:

Հրամանատարը թիզ ու թիզ ծանօթ էր այս վայրերուն եւ անոր ուղղման գիտական ուղիքը կը շարժէր այն հաւանական վտանգը, որ կրնար զիրենք չըջապատել Կուրտիկի բարձունքին, ուր թրքական բանակին մէկ մասը զիրք գրուած էր :

Անդրանիկ, Հնարամիտ ուղղմամբ, կը ճշդէր խումբի ճամբան դէպի Գոմեր, Կուրտիկի այն կտտաններէն, որոնք բնաւ նկատի առնուած չէին թրքական բանակի կողմէ :

Ճամբան բացուած էր դէպի Կուրտիկի բարձունքը : Բայց բազմաթիւ թրքական վայտեր երկաթէ օղակ մը կազմած էին այդ բարձունքներուն վրայ, որպէսզի Դաւաթն օգնութիւն չհասնէր ապստամբ Սասունին : Խումբը դիւերով պիտի անցնէր այդ կիրճօթէն : Անդրանիկ խօսքը ուղղեց Սարհատին :

- Գէորդ, տասնեակ մը զրկենք Կուրտիկի արեւելեան կողմը, թող կռուի բռնուի եւ բանակին ուշադրութիւնը իր վրայ կեդրոնացնէ :

- Հնարք մըն է, - քաւ Սարհատ, - որ մեր խումբերուն տնվտանգ անցքը կ'ապահովէ : Այդ գործողութիւնը ես կը ստանձնեմ :

Անդրանիկ հակառակեցաւ եւ անոր ձայնակցեցան միւս խմբապետները, բայց Սարհատ անդրդուելի մնաց :

- Հոգ մի բնէք, այդ գործողութիւնն անվնաս դուրս կու գանք : Այժմ որ մեզմէ ողջ մնայ, Գոմերի ճամբան շատ կը գաննէ :

Գէորդ իրեն հետ տասնեակ մը առնելով՝ ճամբայ ելաւ : Անոնք Սասունցի ու Փեթարցի կտրիճներ էին, որոնք, մանկութեան օրերուն, այս լեռներուն ու ձորերուն մէջ հովիւ եղած էին : Այժմ Ֆեհաւա՛ր տէր ու պաշտպան հայրենի լեռներուն :

Մեկնած պահուն դարձաւ Անդրանիկին :

- Անդրանիկ, դուք ճամբայ ելէք դէպի Գոմեր, մեր գործը շատ կը սկսի : Թերեւս իրարանցում առաջացնենք թրքական բանակին մէջ, ու մեր ճամբան շեղենք ու հասնինք ձեզի :

Խումբը արդէն ոտքի էր : Ուղղուեցան մութ կածաններէն վեր :

Գիշերուան լուսութեան մէջ, Մեծղի լեռները անբարով կը յօրանջէին : Ղետերու եւ գետակներու հեղեղային երաժշտութիւնը Բարձրաւանդակի տխրութիւնը կը պոռար :

Լեռնաշխարհը զատարկուած էր իր մարդկային շունչէն : Կրակները որ կը վառէին հոս ու հոն, թրքական բանակի ներկայութիւնը կը մատնէին : Սարհատի խումբը կ'անցնէր դառիթափէ-զառիթափ : Ֆեհաւայինները լուռ էին ու անոնց ոտքերուն տակէն սահած քարերը անդունդներուն մէջ խուլ ձայն մը կը հանէին :

Սարհատ հոգեկան խռովքի մատնուած էր : Լեռները կը խուսափէին իր ոտքին տակէն, Գեբին, Անտօք եւ Մովսաթ կը մնային երկինքէն առկաթի ու ատանց Ֆեհաւայի, առանց հարս ու աղջիկի, առանց վառուած օճախի, այնքան փոթորկալի կեանքէ մը ետք : Սարհատ ամէն քայլ որ կը նետէր, կը զգար թէ Սասնոյ լեռներուն վերջին դառիթափներն էին, որ կը սահէին իր ոտքի տակէն : Աղատութեան գուպարներէն ետք՝ խրոխտ լեռները ըսած էին : Սպասումը փողովուրդը իջած էր դէպի Մուշ եւ Մուշ Դաշտ, իսկ ազատութեան բանակի վերջին մնացորդը, որ ահա Կուրտիկի բարձունքներուն մենամարտի պիտի բռնուէր բռնութեան սեւ բանակին դէմ, պիտի անցնէր դէպի Դաշտ, ազատութեան նոր լոյսեր վառելու համար :

Սարհատի սիրտը մարմնէն բաժնուած՝ կարծես կը վերադառնար

դէպի Գերին ու Տալուորիկ, ուր Սարերու առիւծը ատենօք կը մոնչէր: Յուզական այդ ապրումները վճռական մենամարտի խռովքը փոթորկեցին անոր հոգիին մէջ: Կարծես թէ մաւր կոխելով՝ կ'ուզէր մատաղ զառնայ հայրենի լեռներուն:

Կէս ժամ անցած էր, երբ Սարհասի հարուածող խուճրը ժայռերու ծերպերէն անցած՝ արդէն թրջական խարոյկներու դիմացն էր:

— Տղա՛ք, ատենն է, որ ծունկ դնենք քարերուն ետեւ ու մեր շիշտակի հարուածը ուղղենք թշնամիին: Փամփուշտ մի՛ խնայէք:

Ճեստայիներու համազարկը մեծ իրարանցում առաջացուց խարոյկներուն շուրջ: Թրջական վաշտերը կրակ բացին աջ ու ձախ, անորոշութեան մէջ: Լեռն ամբողջ կարծես մեծ ճակատամարտի մը բռնուած էր: Ամէն ուղղութեամբ վազող թրջական վաշտերը իրար կը խաչածեւէին, տրուած հրամանները անօրինակ աղմուկի մէջ կը կորուսէին: Պարոյկները կը լուսաւորէին իրար անցած վաշտերը, որոնք դիրք մը կ'ուղէին դրանիւ, ատանց գիտնալու թէ համազարկը ուրիշ կու գար: Քանի մը վաշտիկեան ետք, բազմաթիւ տառնեակներ կը թաւալէին Բարձրաւանդակի վերջին պատառ լեռան վրայ: Ու վիրաւորներու վայնստունն էր, որ կը բարձրանար հրացաններու ճաթառոցին մէջ:

Համազարկերն ու անկանոն հրացանաձուլութիւնները կը հեռանային դէպի արեւելք:

Սարհասի խուճրը, ապաստանած ժայռերուն, լուսեամբ կացութիւնը կը շփէր: Իրենց դէմ թշնամին փոշիացած էր: Արեւմտեան բարձունքներէն թրջական վաշտերը օդնութեան կը փութային դէպի կուսի վայրը, ու կ'անցնէին դէպի արեւելք, ուրիշ թրջական զէնքերու ձայները կը լսուէին անընդատ:

Սարհաս, ժայռին կոթնած՝ զէնքերու պայթիւնին կը հետեւէր ու դիտէր թէ անոնք արդէն երկու զիրմեթր հեռաւորութեան վրայ էին: Թրջական վաշտերը վախէ բռնուած՝ խառնակ զանգուածի մը վերածուած էին: Գազաթիներն ու ձորերը շատ էին, ու անոնք չէին դիտեր թէ Ճեստայիները ո՞ր ձորերէն կամ լեռներէն զիրենք պիտի հարուածէին:

Սարհաս մաւր կը փնտռէր, ու այս անգամ մաւր լեռապատառ իրմէ կը հեռանար:

Ժայռին փակած, ժայռ մը ըլլար կարծես Սարհաս, երբ քովի գիւրքէն Գայէն իրեն մօտեցաւ:

— Գէո՛րգ, հո՞ս պիտի սպասենք, թէ պիտի շարժինք ուրիշ ուղղութեամբ:

Սարհաս սթափեցաւ: Պօսք տուած էր Անդրանիկին, որ իրենց պիտի միանան երբ գործողութիւնը վերջացնեն: Զինուորական կարգապահուածութիւնը տիրական էր անոր քով:

— Գայէ՛, տղաներուն լուր տուր, որ համախուճը ճամբայ ելլեն դէպի արեւմուտք, Գոմերի ուղղութեամբ: Մանուկ եւ Ախօ, դուք առաջապահ եղէք, աչքերնիդ բաց ըլլայ, խուճրը ծաղաղի մէջ չի յնայ:

Ու երկաթէ մարդիկ ճամբայ կ'ելլէին զառիթափներէն:

Կուրտիկի վերին բարձունքը հասած էին: Այդ տեղէն պիտի Գլլէին դէպի Գոմեր ու Մ. Յովհաննէս: Մշոյ Գաշար խաւարակուռ Ծով մըն էր կարծես:

Սարհաս քանի մը Ճեստայիներ աջ ու ձախ ճամբայ զանեց:

- Զեր շուրջ րուրը խուզարկեցէ՛ք, արագ ըլլան ձեր քայլերը, կը-
րակէ նշոյլներ փնտռեցէ՛ք: Տասը վայրկեանէն Հոս պիտի դառնաք:

Ախօն, Մանուկը եւ Շէնիկի Ղազարը մութի մէջ կորսուեցան տար-
բեր ուղղութեամբ:

Յուժը, ժայռերուն ապաստանած՝ հանդիստ կ'ընէր ու ոմանք ահան-
ջը դէտնին դրած՝ ճամբաները կը խուզարկէին լսողութեամբ:

Սպասողական այդ պահը շատ երկար թուեցաւ խումբին: Մինչ Սար-
հատ լեռնաշխարհի այս վերջին պատառին վրայ հանգիստ կ'ընէր ու կ'ու-
զէր, որ յաւիտեանս այդպէս տեւէ: Վերջապէս Մանուկն ու Ախօն երեւցան:

- Պարօն Գէորդ, ամէն կողմ դատարկ է, - ըսաւ Ախօն, - Փեթարի
եւ վանքի ուտերը դիտեցինք, մարդ-մարդասանք չկայ:

Նոյն վայրկեանին կը հասնէր Շէնիկի Ղազարը եւ նոյն զեկուցումը
կու տար: Թրբական բանակի Հրացաններուն խուլ ձայները հասած էին
Շէնիկի Ղազարի ականջը:

Սարհատ խումբը ճամբայ հանեց, ու պատուիրեց բոլոր սղաններուն,
որ ստեբրը արագ վերցնեն: Կը դպար թէ լեռնաշխարհէն բաժանումը իր-
դութիւն էր, ու ինք ստիպուած էր նետուիլ Մշոյ Դաշտ, ուր մարտական
յիշատակներ պահաս չէին:

Բարձրաբերձ լեռները կարծես զիրենք կը հալածէին ու իրենք, քա-
բայծի պէս ժայռէ-ժայռ կը ցատկէին:

Լուսատողը չբացուած, Սարհատի խումբը հասաւ Անդրանիկին,
Գոմերի բարձունքներու վայրէջքի վրայ:



Անձնուրացներու լեզուներ հանդիստ շունչ առաւ երբ Սարհատի խում-
բը միացաւ իրենց: Անդրանիկի եւ բոլոր մարտիկներուն աչքերը իրենց ան-
ցած ճամբաներուն վրայ կը մնային, ու անոնք կը սպասէին հեւ ի հեւ
Սարհատի երեւումին: Վտանգաւոր ու անորոշ գիշեր մըն էր: Բոլորն ալ
մտահոգ էին Սարերու Ասլանի ճակատագրով: Անոնցմէ ոմանք գիտէին,
թէ իրենց ետեւ ձգուած լեռները դայն կը քաշէին, ու ան տրամադիր էր
մինակն իսկ վերադառնալու Տալուորիկի ժայռերը:

Սասունցի Հին Ֆետայիները շատ դժուարաւ բաժնուեցան լեռնաշ-
խարհէն, ու անոնցմէ ոմանք, փոքրիկ խմբակներով, մնացին հեռաւոր բար-
ձունքներուն վրայ:

Սասունէն հեռացող անձնուրացները խիտ անտառի մը մէջ հանգիստ
ըրին, թիկունք տալով կաղնիի կոճղերուն:

Յողնաքեկ բանակը լուռ էր, ու ամէն մէկը ինկած էր մտածումնե-
րու ծովուն մէջ: Սասնոյ վերջին վայրէջքն էր, ու իրենք ազատամարտը
պիտի շարունակէին լայնատարած Դաշտին մէջ:

Լուսթիւնը խողոր եղաւ Անդրանիկ:

- Տղա՛ք, այս բարձունքէն ձեր առջեւ կը բացուի գործողութիւննե-
րու նոր շարան մը, այս տեղէն մինչեւ Նեմրութ: Մեր խումբերը շատ ան-
գամ իրարմէ պիտի բաժնուին հաբուր քիլոմէթը հեռաւորութեան վրայ,
ու միջոց պիտի չունենանք իրարու օգնութեան հասնելու: Իւրաքանչիւր
խումբ պիտի գործէ իր նախաձեռնութեամբ եւ նպատակ պիտի ունենայ

Հարուածել թշնամին, ու անցնիլ հեռաւոր շրջան մը: Մուրառ եւ Գեորգի պիտի անցնին Վան, ստուար խումբով մը ու աշտեղէն ուղղամիտք առած պիտի վերադառնան Դաշտ, մեզ գտնելու: Սայտո Պօզոս իր խումբով Բերդաշէի շրջանը հարուածի տակ առած է: Դաշտի խումբերը, որոնք Սեպուհի, Տէր-Փոթորիկի եւ Մուրատի առաջնորդութեամբ Դաշտ իջան, չենք գիտեր թէ ո՞ր շրջանները դիրք բռնած են, բայց ընդհարումները անխուսափելի են: Այսօր մենք կ'իջնենք Գոմեր գիւղը ու թերեւս անցնինք Սուրբ Կարապետի անտառները: Կռիւր ամէնօրեայ պիտի ըլլայ:

- Լեռները մեր ձեռքէն ելան, - ըսաւ Սարհատ, - այլեւս որպէս արծիւ չենք կրնար սաւառնիլ լեռ ու ձոր: Դաշտի լայն տարածքը մեզի կ'օգնէ, որ թուռցիկ շարժումներ ընենք: Դաշտի ուժերը շատ են եւ ժողովրդական կազմակերպութիւնը ուղեւորուած. անոնք զանգուածային ապստամբութեան կրնան դիմել, բայց մեր խումբերուն ազգամիտքը սպառած է: Կը վախնամ որ Դաշտի այս հոծ զանգուածը Բարձրաւանդակի դժբախտութեան ենթարկուի: Կը կարծեմ թէ քանի մը ուժեղ հարուածներէ ետք, մեր խումբերէն ոմանք պէտք է վերադառնան Անտք ու Մովսատը, թրջական բանակը շիրթի մասնելու համար:

- Դաշտի ժողովուրդը պիտի արիւնտի, կասկածէ դուրս է, - ըսաւ Կորիւն, - սակայն պիտի աշխատինք այս կազմակերպուած զանգուածը, Սուրբ Կարապետէն մինչեւ Ախլաթ, պահել որպէս յենարան: Այս հարիւր ջիւղմէթը տարածութեան վրայ է, որ մեր խումբերը ապաստան կրնան դնել:

Կորիւն քաջամարտիկ Հին Տետային էր. Հնարամիտ ու վճռական, սակայն ազատագրական գործի ծաւալումը կ'ըմբռնէր Հրայրի պէս: Երբ խումբերը արդէն հարկադրուած էին թուռցիկ կռիւներ մղելու, Կորիւն կ'ուզէր խնայել Դաշտի ժողովուրդին եւ զայն շնտել հրդեհին մէջ:

Պումբին համար անորոշ կը մնար, թէ ի՞նչ վիճակուեցաւ Սասնոյ ժողովուրդին: Ժողովուրդէն բաժնուած հազարաւոր զինեալ Մասունցի ազամարդիկ, նոյնպէս բարձունքներէն ուղղուած էին Դաշտ, ու անյայտ էր թէ ո՞ր գիւղերուն մէջ ամփոփուած էին:

Այս մտտուեցներու մէջն էին, երբ արեւի առաջին ճառագայթը անտառը գունաւորեց, ու նոյն պահուն զէնքի ձայներ յուռեցան Գոմերու շրջականերէն: Տետայինները ոտքի ցատկեցին: Անդրանիկ առաջապահները ճամբայ Հանեց, որպէսզի ստուգեն եղելութիւնը: Ու իրենք թեւերու բաժնուած՝ մեծ զգուշութեամբ գիւղի բարձունքներուն վրայ գիբքեր դրաւեցին: Ձէնքի ձայները շատցան, ու երկուստեք համազարկեր փոխանակուեցան:

Գոմեր գիւղը կռուի բռնուած էր Մուշէն զրկուած թրջական վաշտերուն հետ, որոնք պաշտօն ունէին այս ապստամբ գիւղը ճզմելու եւ կըտրելու բոլոր անցքերը դէպի Պղըլուղաճ եւ Սուրբ Կարապետ:

Վերի բարձունքներէն Անդրանիկ եւ Սարհատ կը դիտէին կռուի շարժումները, եւ կը շափէին ուժերը որոնք իրարու կ'ընդհարէին:

- Գիւղը չըջապատուած է, - ըսաւ Սարհատ, - կը թուի թէ մեր խումբերէն ոմանք Գոմեր ապաստանած են: Պէտք է հարուածենք թշնամու կռնակէն, քանի գիւղը ընկճուած չէ:

- Եարժուի՛նք, ճիշդ ժամանակն է հարուածը տալու, - ըսաւ Անդրանիկ որ դիտակը աչքին, ժայռի ծերպերէն կռուի շրջանակը կը շափէր:

Պումբը յարձակման անցաւ, գիւղի բարձունքները ամուր պահելով:

Քրիստոնեական սկսած համազարկերը շիթուիթեան մասնեցին թուրք փաշ-տերը:

Երկու կրակի մէջ ինկած թշնամին ծանր զնտաներու ենթարկուած՝ դէրքերէն շաշուեցաւ: Գիւղի կռուողները կապ հաստատեցին վերի դէրքե-րուն հետ ու երբ ասուզեցին, թէ Անգրանիկ ու Սարհատ լեռներէն վաթ լըծած, այլ պահուն, Գոմերի կռուին կը մասնակցէին, ոչեւորուեցան ևս իրենց յարձակումները ուզղեցին դեպի ստորոտներուն վրայ դիրք պրտուած թշնամին սէմ: Գիւղը ազատուած էր վտանգաւոր պաշարուէ, ու թշնա-մին կը մտար վարի բլուրներուն ու մորերուն մէջ, ամէն կողմէ հարուածի ենթակայ:

Գէտորին, թուրքերը պարտուած կը հեռանային Գոմերի շրջանէն, բազմաթիւ կորուստներէ դատ՝ սէնքի եւ ռազմամթերքի պաշար մը կը մզէին ազատմարտիկներուն ձեռքը, պաշար մը՝ որուն սխընհ պէտք տե-նէին:

Տէր Սարգիսի ղեկավարութեամբ գիւղի կռուողները եւ հոն հասած քանի մը գինեակ փոքրիկ խումբերը կը շրջապատէին ձեռայիններու այս ընարանին եւ իրենց տեղեկութիւնները իրարու կը փոխանցէին:

Գիւղէն քանի մը սպաննուածներ եւ վիրաւորներ կային: Պակայն մարդիկ խանդավառ էին յաղթանակով ու հպարտ՝ Ձեռայիներով, որոնք, այլ անակնկալ պահուն, կայծակնային հարուածով գիւղը կը փրկէին ամ-բողջական կորտրածէ:

Գիւղին վերն ու վարը խուզարկող խումբեր զրկուեցան, որպէսզի Դաշտի եւ վանքի ձանապարհները աչքի տակ պահեն:

— Գարոն Անգրանիկ, թշնամին եկած էր մեզ ոչնչացնելու, ու մենք անյուսալէ կռուի մը բռնուած էինք, — ըսաւ Տէր Սարգիս, որ գիւղի հին ղեկավարն էր եւ մարտիկներու հրամանատարը, — բայց Աստուած մեզի օգնութեան հասաւ: Ձեռայինները Աստուծոյ ամէնէն շատ սիրած խոյրն են: Ինչք բարով եկաք: Գոմեր գիւղը յաւիտեանս պիտի յիշէ մեր փրկա-բար համազարկերը:

— Տէր Սարգիս, դանազան շրջաններու կռիւներէն տեղեկութիւն տուք, — ըսաւ Անգրանիկ, — Դաշտը փ՛նչ վիճակի մէջ է, զօրքեր կա՞ն Առաք Վարպետի շրջանը, լեռնէն իջած Ձեռայական խումբերն ու գինե-ւած Մասունցիներ ո՞ր շրջանները անցան: Հիմա փոքրիկը փոխադրուե-ցաւ այս ընդարձակ Դաշտը, ու կռուող խումբերը իրարմէ շատ հեռու են:

— Հրդեհը ամէն կողմ բռնկած է, — ըսաւ Տէր Սարգիս, — թրքական դազմնը Պիթիսէն վաշտեր կը փոխադրէ Դաշտ. երզրումէն զօրքեր կը հասնին Մուշ եւ կ'ուզողուն դէպի Սուրբ Կարապետ եւ Մուշ քաղաք: Դաշտ իջած մարտիկները, ամէն քայլափոխի, թրքական զօրքերուն հետ վ՛ընդհա-րին: Թուրք ու քրիստ ցեղապետներն ալ զայի ախորժակով ամէն տեղ են, բայց ամէն տեղ ալ եթէ կրակը մեզմէ զոհեր կը խէ, գիրենք ալ սու-գի կը մասնէ: Զինուորի եւ ոստիկանի հաշիւը տուող չկայ, բայց ցեղա-պետներու կորուստը ընդէն բերան կը խօտուի: Գիւղական կոմիտէները միայն գիւղերը կը գործեն: Գիւղի մարտական ուժերը Ձեռայինները փո-խադրելու դործով զբաղած են, միշտ փառարին ապաւինած:

Պարհատ անհամբերութեամբ հարցաւ.

— Ի՞նչ չուք Կեղքոնական կոմիտէին: Մուշը կրցա՞ւ կապ պահել Դաշտի հարկերէ աւելի մարմիններուն հետ, Հիւսապատաները փ՛նչ գործի

վրայ են: Սասնոյ ժողովուրդը եւ գինեակները ո՛ւր են: Մենք աշխարհէն կտրուած ենք:

- Երէկ իրիկուն Սուրհանդակ հասաւ Մուշէն, ըսաւ Տէր Սարգիս, - Գեղամն էր գրկողը, գիտէք, զգոյշ մարդ է, նամակ չէր յանձնած ոտը-հանդակին եւ պատուիրած էր, որ իր հաղորդածները անմիջապէս յայտնեմ ձեզի, բայց, ինչպէս տեսաք, Շարաթը Ուրբաթէն առաջ եկաւ, ու մենք կոտի բռնուեցանք: Հիմա, փոխանակ սուրհանդակ հանելու դէպի Անտոք, ձեզի անձամբ կու տամ հաղորդուած լուրերը: Գեղամը կը հրահանգէր զգոյշ կենալ եւ ժողովուրդը ըմբոստութեան չմղել, գիւղերու մարտական ուժերը ղենել Ծեռայական խումբերու տրամադրութեան տակ, անոնց փոխադրութիւնը զիւրացնելու: Անոնք, կոխներու պարագային, թշնամիին ճամբաները պիտի կտրեն: Սասնոյ ժողովուրդը՝ կին, երիտայ եւ ծեր արդէն Մուշ հասած են ու յանձնուած ազգային առաջնորդարանի խնամքին: Հիւպատոսներն ալ ամէն օր կը շրջին Մուշ քաղաքին մէջ: Օտարներու այս ներկայութիւնը թուրք կառավարութեան եւ երեւելիներուն վայրագ տրամադրութիւնը զսպած է:

- Մուշ քաղաքը կոտորածէ ազատ կը թուի, - ըսաւ գիւղապետը, - բայց Դաշտի գիւղերը կրակի մէջ են ու հիւպատոսները ամէն տեղ շին կընար հասնել:

Տէր Սարգիս իր խօսքը շարունակեց.

- Մեր առած տեղեկութեան համաձայն, երկու հիւպատոսներ, Անդլիական եւ Ռուսական, Սասուն բարձրացած են անձամբ ստուգելու ինչ որ տեղի ունեցած է Լեռնաշխարհին մէջ:

- Տէ՛ր հայր, - ըսաւ գիւղին ուսուցիչը, - պատմէ Քէօն Գինպաշիի ընթացքը, որ անակնկալ մը եղած է:

- Տղա՛ս, մեր պատմութիւնը վերջ չունի, ամէնօրեայ դէպքերը Օսյանաւուրք մը կը լեցնեն: Ի՛նչ ողբերգութիւններ եւ ի՛նչ անհաւատալի դէպքեր կը պատահին այս օրերուն: Երբ Սասնոյ ժողովուրդը, Ծեռայի-ներսու առաջնորդութեամբ կը հասնի Միրին-Գասար, Ծեռայիները եւ Սասունցի գինեալ եւ ոչ գինեալ տղամարդիկ կը բռնեն Դաշտի ճամբան, Անուշիւրց վանքի ուսերէն, իսկ կիներու, ծերերու եւ երեխաներու մեծ բազմութիւնը ճամբայ կը հանեն դէպի Մուշ քաղաք, անձնատուր ըլլալու, մտածելով թէ օտար հիւպատոսները ներկայ են, եւ կոտորածը պիտի արգիւնէ: Այդ անապարհներուն վրայ, թրջական վաշտերը անդէն ժողովուրդին առջեւ կը կտրեն եւ կ'ուղեն վայրագութիւններ ընել, սակայն կիներն ու երեխաները, անվեհեր մարտիկներու պէս, անոնց դէմ կը կենան, իրարու ձուլուած մարտական տրամադրութեամբ: Ձիուորներէն մէկը երբ կը փորձէ կին մը անջատել բազմութենէն, տասը-ասանըհինգ կիներ անոր վրայ կը յարձակին, զետին կը տապալեն, զէնքը ձեռքէն կը խլեն եւ կը պոռան:

- Մենք անձնատուր կ'ըլլանք, չէ՞ք ամ շնար որ մեր վրայ ձեռք կը վերցնէք, թախթը կործանի Սուլթանի:

Սպայակոյտի կեդրոնը ժող էր այդ վայրին: Մէկէն կը տեսնեն հրամանատարը, փոքրամարմին, ջղուտ եւ սուր հայեացքով կը յայտնուի բազմութեան առջեւ: Ձիուորներն ու սպաները պատկառանքով կա կը քաշուին: Եկող սուրհանդակը ակնառես կիներէն այդ տեղեկութիւնները հաւաքած էր եւ անոնց բերնով կը պատմէր:

- Երբ Քէօսէ Պինպաշին երեւցաւ, մեզ չըջապատող զինուորները մուկ դարձան. փաշան դարձաւ թուրք սպաններուն:

- Ի՞նչ կ'ուզէք այս ժողովուրդէն: Կուուեցան, մենք ալ անոնց ոչ մի կուուեցանք թնդանթներով: Հիմա կը տեսնէք թէ անոնք անդէն են, բայց ստրուկի կերպարանք չունին: Այս կիները, բուրն ալ, կուուողներ եղած են: Պատերազմական օրէնքը գիտէք, անձնատուր եղողները պատերազմական դերիներ են ու անոնց հետ պէտք է վարուիք զինուորականի պատիւով:

Քէօսէ Պինպաշին իր քով կանչեց քանի մը սպաններ, եւ պատուիրեց. - Այս ամբողջ ժողովուրդը անվնաս պիտի հասցնէք Մուշ, եւ յանձնէք կառավարութեան: Ձեզի հետ վերցուցէք միայն մէկ տասնեակ զինուոր, եւ անոնց անուանացանկը յանձնեցէք ինծի: Անաստողները պիտի գնդակահարուին: Վաշտերուն հրամայեցէք, որ իրենց կեդրոնաւեղին վերադառնան:

Ու մենք ճամբայ ելանք դէպի Մուշ: Կառավարութիւնը մեզ տեղաւորեց Հայկական թաղերուն մէջ:

- Քէօսէ Պինպաշին չէրքէզ է եւ լաւ հրամանատար, քաջ պատերազմիկ, բայց պատուախնդիր զօրական մըն է, - ըսաւ Սարհատ, - տասը տարիներէ ի վեր այս մարդը Յետախներու ոչ մի պատերազմ մղած է, բայց չենք լսած եւ տեսած, որ օր մը անպատիւ արարքի մը մէջ դտնուած ըլլայ: Մեր ամէնէն վտանգաւոր թշնամին է, բայց այս առաւելութիւններն ալ ունի:

- Ես ալ այդ կարծիքն ունիմ Քէօսէ Պինպաշին մասին, բայց չէի սպասեր, որ Սասնոյ անդէն ժողովուրդը իր պաշտպանութեան տակ առնէ, - ըսաւ Անգրանիկ:

- Թուրք չէ Քէօսէն, ուրիշ բացատրութիւն կարելի չէ տալ, - եզրակացուց Սարհատ:

Այս կցկտուր տեղեկութիւնները երբ կը լսուէին մարտիկներու խորհրդակցութեան ընթացքին, անդին գիւղի բազմութեան մէջ, բերնէ բերան, բազմաթիւ կոխներու պատմութիւններ կը հիւսուէին, տարօրինակ բայց իրաւ: Իրօք, բազմաթիւ զէպքեր ու ընդհարումներ տեղի կ'ունենային, մօտաւոր եւ հեռաւոր շրջաններուն մէջ, ու ականատես ժողովուրդն էր, որ լուրերը բերնէ բերան կը տարածէր մինչեւ հեռաւոր շրջանները: Մինչ ազատամարտի էլած մարտիկներն ու մարտիկները, մահ-պատերազմի օրհասին մէջ, ատեն եւ միջոց չունէին զեկուցումներ հասցնելու պատժախանստու մարմիններուն:

Պատերազմի թոհուրոհին մէջ էին բուրն ալ, մոռցած իրենց մեռելուները, մոռցած առօրեայ կեանքը, կատակն ու զրոյցը: Ազատութեան դիմումութեամբ բռնուած՝ հրդեհի մէջ նետուած էին:

Կրակի մէջ նետուողը ուրիշ բանի մասին չի կրնար մտածել:

Կ. Ս.

(Շար.)

ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԵՐԳԸ

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

ՇԱՀԻՆՇԱՀ ՄԸ ԿՈՒՂԱՅ ԺԱՅՈՒ ՄԸ ՎՐԱՅ
ԿՍՐԻՈՂՆԵՐԸ ԿՆԵՐԵՆ ԿԻՆԼԻՍՏԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Գ

*«Այժմ՝ սամբոն է, որ վարդադր կը հիւսէ
Կեանքի սրահներուն մէջ եւ բուն պահապան՝
Անբրտեսակի կամբարազարդ զմբէջներուն տակ...»*

ՃԻՐՏՈՒՄԻ

Կատարները հայրենի արդ կ'ընկզմին
Մշուշին ծոցն՝ ինչպէս հագիս՝ երազին.
Մնաք բարեա՛ւ, տառապած հոգ ու մարդիկ,
Կը թռչում սիրտս ձեզ, սիրոյ երաշխիք.
Սիրտս՝ որ ձեզի համար անդուլ տըրտփեց,
Տըրտփիւնով տիեզերքի սրտին մեծ.
Ան՝ որ լըցաւ խորհարդովը ամենկին,
Աշխատանքի երգ ու արիւ աշխարհին...:

Արաքսն անա, Արաքսն անա, երիվար,
Խօսուն վըլան՝ քակատագրին մեր դժուար.
Հայ արիւնին, հայ արցունքին՝ հրահասան,
Յաւիտենի մեծ աղբասացն ու գուսան:
Տըրտա՛ւ մ'ունի պատմութիւնն հոս վեհաշուք.
Մահացուքի՛ն համակ, աղբ ու արտասուք:
Անցեալին մաք փողը անա կը բացուի,
Ու մեր դէմն է Շահինշահ մը սեւաչափ.
Անգուք արքայ մը արիւնի ի ըսպաս,
Փռուքի իտխուս բեմին վըրայ Շահ Արքա:

Ու բի՛ւր բիւրեր անա կ'ըլլան ջրամայն,
 Դիակներն են դարձեր կամուրջ մը ամենուն.
 Ուրկէ կ'անցնին հիմա հարի՛ւր հագարներ,
 Որոնց վիզին թշնամին ասրն է դրեր:
 Կ'անցնի՛ն, կ'անցնի՛ն, ծեր, պարմանի ու մանուկ,
 Հօր դիակէն կ'անցնի որդին անշըշուկ.
 Թշուառութեան հայ թափօրը տեղահան,
 Մահուան նամբէն կը հասնի մինչ Սպահան:
 Պատմութիւնը մագաղաթ մ'է ամսահման.
 Գրուած լռյսով՝ ու կարմիրովը արեան:
 Անա՛, անա՛ Շուարշան դաշտն արփանեմ,
 Ուր լռյս հսկայ մըն է վարդանը վըսեմ.
 Ուր, իմացեալ մահուան լուսեղ ծագին մէջ,
 Անմահութեան շէնք փարոս մ'է անշէջ.
 Ընկերներն ալ հերոս, այնուդ կը հանգչին,
 Իրենց վըրայ առած փառքի ծիրանին.
 Մինչ կը տրտմի Յագկերտի շուքն յաղթակամ,
 Ալ մտոցըսած մըոսյլ վիհի՛ն մէջ մահուան:
 Կը լսեմ ձայն մ'որ դարերէն կը խօսի,
 Տարածուելով ինչպէս ալիք մը լռյսի.
 Իրերս պատգամ կ'երթայ գալիք դարերուն,
 Փառքի նամբայ՝ ապրող, մեռնող գարմերուն:
 Աւարայրի վըսեմ վարդանն է կարմիր,
 Կը լեցընէ շումչն իր, երկին եւ երկիր:

- Խօսեմ ձե՛զ է հայեր, որ դեռ դուք կ'ապրիք,
 Ազատութիւն կանչելով եւ հայրենիք.
 Դուք՝ որ ձեր մէկ աչքը յառած էք հողին
 Կը նայի միւսը՝ երկնքի կապայտին.
 Մեզ դիտապատ ըրին գունդերը մատենան
 Ձի՛ մարմինները մեր ծառանգ են մահուան.
 Եթէ ծանրը փիզերն եղան յաղթական,
 Մեր դիակին ծունկի հկաւ սէգ արքան.
 Մեզմով է որ պիտ' ապրիք դուք ու շնչէք.
 Ու ձեզմով ալ յաւերժին պիտ' ըլլանք մենք.
 Կեանքն ու մտը այսպէս տրւած ձեռք ձեռքի,
 Պիտի անյոյժ պահեն հանգստյցն երկինքի.
 Եւ կեանք ու մահ պիտի ըլլան հաւասար.
 Կը պըսակէ մտեն կրք ո՛ր վեհ գաղափար.
 Անմիւթական լռյսին դուք քուրը յաւէտ,
 Յոյս ու հաւատ թող կեանքն ընեն ծաղկաւէտ.
 Մինչեւ որ մեր հայ աշխարհի բոց սրտէն
 Հըգօրանքն ու մեծութիւնը կայծակեն,
 Ու շողափայլ ջերմացընէ անդադար
 Յաղթանակի, սիրոյ արեւ մը արդար:

Պեգաս, Պեգաս, ըստուերն անա կ'անհետի,
 Կա՛ գոյ ձայնը ալիքներուն Տղմուտի:

Մինչդեռ հեռուն շփեղորէն կը կանգնին
 Մշուշապատ, սէգ լեռները իրանին.
 Լեռներ՝ որոնց ծոցին դարեր ծըւարած,
 Իրենց երգը կ'երգեն համ աւ տըւարած:
 Կը տարածուին ահա դաշտերն հնօրեայ,
 Ուր անցեալին հետ կ'աղբի սերմը վազուայ.
 Երէկին՝ որ ծնաւ ահեղ հսկաներ,
 Աշխարհներու կուրծքին կեցած անվեհեր:
 Հո՛ղն այս, հո՛ղն այս, ծով արիւնով քաթաւուն,
 Արդ կը նիրհէ ընդ մէջ կապոյտ ծովերուն.
 Անապատի՛ն պէս, որ հեռուն կը փռուի.
 Կեանքը այտոնդ կը նմանի խո՛ր. քունի.
 Բայց անքափանց ընդերքին մէջ աներկբայ
 Կը սեծնայ սերմը՝ երկունքի՛ մ'աղագայ,
 Խոռվի մը՝ որ տանի զինքն արեւին
 Եւ յազքակամ կանգնի Զարի՛ն վրայ՝ Բարին:
 Զի, այս հոգն է՝ ուր արիւնէն հրահասան,
 Ծաղկեցան. օ՛ր մը, ծաղիկ ու բարաստան.
 Ուր, առտու՛ մը, մտան փքթող երազի.
 Իր աչքերը բացաւ վարդը Շիրազի.
 Ու մարտակամ շեփորներու ընդմէջէն,
 Կեանքն ըրաւ որ կախաները կարգնենն,
 Եւ պլպուկները, վարդերուն վրայ գինով,
 Սնուցանեն իրենց հուր սիրտը սէրով:
 Հո՛ղն է, հո՛ղն է, ուր Զրադաշտն արգարեւ
 Ճառագայթեց երկնքին վրայ գերդ արեւ,
 Տիեզերքի լոյս ընդերքէն անսահման,
 Տըւաւ մարդոց Որմի՛րդքն ու Ահրիման.
 Երկու Աստուած, յաւերժակամ եւ հըզօք,
 Գուպարի՛ մէջ, ցայց աւ ցերեկ, ամէ՛ն օր.
 Երկու Աստուած՝ կեանքի՛ն համար ու մահուան,
 Թշնամիներ՝ իրարմէ յար անբաժան.
 Մինչ մարզն ալ որ բարտոյն համար կ'ազօքէ,
 Հանգոյց մըն է, հիւստած լոյսէ ու մութէ,
 Մէկ ձեռքին երբ ունի ջանը բացավառ,
 Կը սարսըռայ միւսը՝ տեճով մը խաւար.
 Հակասութիւնն ալ այս, երբե՛ք վերջ չունի.
 Զի սաղունը քեւեր չունի՛ քաջունի...:
 Իրա՛ն, Իրա՛ն, երբեմն եզար դու տիտան,
 Արեւելի քազմաչարչար կուրծքի՛ն վրան.
 Ու Դարեհի աստղին առջեւ հրատապ,
 Ծունկի՛ եկան քրտան արքայ ու սատրապ.
 Դուն ազգերու հասուն սի՛րտը քամեցիր,
 Դունի՛ նման, բաժակի՛դ մէջ անձանձիր.
 Արիւնն եզաւ քու ափիդ մէջ վարդ գինի,
 Սերմնացան անդուլ, մազձի ու քէնի.
 Հիմտուհուշէն մինչ արփաշող Շլլալառ,
 Քեզի համար եզաւ շըքեղ, մոխ սեղան..."

Եւ ազգերու քրտինքն իբրև մարգարիտ,
 Հստեցաւ միշտ անյատակ ծոցը զանձիդ :
 Յազք դրօշիդ գըլուխ ծըռեց Բայբլուն,
 Խոնարհեցան սէգ բուրգերն ու Փարաւոն .
 Ու բոցավառ առուշաններդ պայծառ,
 Լուսաւորել կարծեցին մութն ու խաւար :
 Դուն կանգնեցար իբրև պարիսպ, ամբարտակ .
 Հորդաններու դէմ յարանուն, ամխորտակ .
 Գորշ Գայլին դէմ արշաւառոյր Թուրանի
 Դուն ասկերաշ դրիր Առիւծն իրանի,
 Եւ մութին հետ մզում կռիւն այդ լոյսի,
 Առասպելիդ մէջ դարերով պիտ' իօսի .
 Երգեցին գայն զաւսաններդ ու Ֆիրտուսին
 Խաւաքեցաւ ալ Թուրանի աստղը սին .
 Տէմավէնտին հետ որ պատմէ Բուսթէմէն
 Պիտի ապրի փառքիդ երգը՝ Շահ-Նամէն :

Օ՛ն, քռիչք մ'ալ, քռիչք մըն ալ դէպ' արփին,
 Իրանն ոգչոյն պիտ' տարածուի մեր առջին .
 Ան փոքր է հասակն անա, ծագէ ծագ,
 Գետն'ըն անա, որ տազերգեն տիւ ու ցայգ .
 Անա դաշտերն եւ հովիտները ծաղկուն,
 Անապատն՝ որ կը տարածուի ծոյլ, հեռուն .
 Բերդերն ամուր եւ բանտերը մութ, մըռայլ,
 Կալանաւոր բազմութիւններն անայլայլ,
 Կիւլիստաններ՝ պլպուկներով զըւարքուն,
 Հնձանները՝ գինիներով պարպաջուն,
 Եւ աշխատող բիր բազուկները յոգնած՝
 Որ չե՛ն կանչեր ալ, ոչ երկինքն՝ ոչ Աստուած :
 Անցնի՛նք, անցնի՛նք, սրարշաւ ու երգելէն,
 Յաննիք յոյսին բոց ծաղիկները վերէն .
 Գօտեպնդեմք հոգիները հողմավար,
 Եզրայրութեան նօր գարունի մը համար :
 Ըլլանք կամուրջ մը լուսեղէն, անսահման
 Զիրար հանչան ուր անցեալն ու ապագան,
 Եւ որբագան կրակովը երբեմնի,
 Քերթնողներուն սիրտը սիրով բռնակի :

Կը տարածուի տափաստանը ամայի,
 Որ արեւին խանձող տապովը կ'այրի .
 Օձերը լո՛ւտ կը բնանան ծուարած .
 Խլրտելով Վերք ծոյլ մրափին մէջ յամկարծ .
 Մոզէտները, քարերէն ու սէգերէն,
 Ստուերի պէս կու գան, կ'անցնին վազելէն .
 Ու երբեմն ալ սուր կռիւն մը տգաւի,
 Կը լեցընէ ամայութիւնը վայրի :
 Անկարեկիք ծոցին մէջը բնութեամ,
 Մութ ու մռայլ սագայելի մը նման,

Սիւս կեցեր է դարերով հոն անյուշ,
Տառապանքի անեղ բերդը՝ ֆէրամուշ՝
Բանտը՝ ուրտեղ, հեռու՝ մարդոց աչքերէն
Հագարները իրենց աչքը փակեր են.
Եւ հեծեծանքն ու հառաչանքը որոնց
Տարիներով ունկնդրեր են սարդն ու օձ:
Պեզա՛ս, Պեզա՛ս, նկուղի մը խորն այնտեղ,
Իր մեծ սիրտին մէջ ցեղին ցա՛ւը տեղ,
Կալանաւոր արքայ մ՛ահա կը խօսի՝
Զըլֆելով կայմն հաւատքի եւ յայտի-
Լա՛նք, լա՛նք, Արշակի կաւքը անտառ՝
Որ կապանքի մէջ ալ մընաց մի՛շտ Արքայ...:

- Մարդի՛կ, մարդի՛կ, ես կը խօսիմ անգունդէն,
Ուրտեղ յաւերժ կեանքն ու արեւը ա՛ւտ են.
Բայց արեգակն որ կը շողայ հոգւոյս մէջ,
Դարէ ի դար պիտի մնայ միշտ անշէջ:
Թէ օրերը գուրկ են լոյս ու արեւէ,
Լա՛ւ է, որ ան լոկ առաւօտ մը տեւէ:
Պալատներու մէջ ոտքերը քայլեցին,
Հառազայքով հիւսուած էր սիրտն իմ սուրին
Ջրոզդուած էր քշմամի արիւնով,
Սրբագործուած արգարութեամբ ու սիրով:
Կայծակն ինչպէս գիշերին ծոցը խաւար,
Ան փայլեցաւ ազատութեանը համար
Հայրենիքին, մեր վեհ ցեղին օրորան,
Ոտքերում տակը՝ ոսոյսի մը դաժան:
Պաշտեցի՛ ես, ուժն ու գեղը գարնայինի,
Գեղեցկագոյնն է սակայն հողն հայրենի-
Եւ քանի որ մեռնի՛լ հարկ է անպատճառ,
Իմաստուն է մահն՝ իտուլի մը համար:
Ո՛վ դու սասկա, որ հրաշքի պէս կ'անցնիս,
Ականջ դիր իմ օրհուսական հո՛ւր կանչիս:
Գնա՛, պատուէ՛ որդիներուն հայկազուն,
Թէ կը կրեմ տառապանքը իմ անհուն,
Հարստորէն, վեհերուն պէս իմ ցեղիս,
Կը կրեմ գերդ արքայական ծիրանիս...:
Թէ պիտ' աննէ մարմինս հողն այս դըրուծան,
Պիտի աննէ տանիկ անունս սպազան:
Փառքե՛ր կան, որ անցաւորին կը մային,
Հայոց արքայ՝ ես կը մայիմ անմահին.
Ու կը տանիմ ինձ հետ գանձս գերազոյն,
Հայ անունըս՝ պայծա՛ռ, սատրի՛ մը հանգոյն: -
Լո՛նք. ալ չի՛ լսուիր ձայնը արքեանի.
Կը մրնայ լո՛ւտ բերդն ալ, նըման գեղեցի-
Կի՛զնէ գիշերը քեւերով ծանր ու ծոյլ.
Բանտ ու խաւար, ալ կը դատնան միանայլ:

Տառապանքը, տառապանքը քեռուր-
 Սրբագործող հոգւոյն ժանգը քումաւար,
 Կը մաքրէ ան մըրուրէն մեր հոգին.
 Որ անլի պայծառ փայլի գուտ ոսկին,
 Ու մքամած գաիկներէն նսնին՝
 Մեր էութիւնը կը տանի վսեմին՝
 Մաքրամաքուր անջրպետները զէպի,
 Գեղանշոյլ աստղերուն հետ դէմ դէմի:
 Տառապանքը ծաղիկն է, որ կը բացուի
 Մեր մութ սրտի՛ն մէջ, ծաղիկը լուսաչափ.
 Իրմով կ'ըլլայ մարդը յաւէտ իմաստուն,
 Կը գառնայ ազը՝ քարութեան, միշտ հասուն.
 Արդարութիւնն իբրեւ շուշան կը պնկէ
 Մտածումին պզտար ակերը դժմէ.
 Եւ պարտէզին մէջ իդճերուն քափքափուր,
 Գեղեցիկին կը ցանէ սերմը մաքուր:
 Եւ ան նըման է տուրի մը երկսայրի
 Որ կը շողայ կեանքի համար ու մահի.
 Ու տառապանքը մահի՛ն է միշտ ընտել,
 Նժարին մէջ երբոր չունի իբր ընկեր,
 Մեծ գաղափար մ'որ բնէր կամքը հըզօր,
 Ու յեղիին խառնէր շիք մը մեղրածօր՝
 Որով վիշտը պիտ' ընպէր մարդն իր ակէն.
 Ինչպէս գինին՝ վարդափրփուր բաժակէն:
 Պատմութիւնը եռեւեփող դարերուն,
 Տառապանքի շղթայ մըն է հուր, անհո՛ւն.
 Յանուն գանձի, յանուն փռոքի, հաւատփի՛.
 Անկարեկիբ այլեքո՛ւն տակ երկինքի:
 Եւանր անիւր կեանքին, անդուլ, անդադար,
 Կը քաւալի նախնիրենբով, դարէ դար.
 Տառապանքու մէջէն մինչեւ որ ծնին,
 Շուշանները սիրոյ արե՛ւ գարունին:

ԱՐՄԷՆ ՍՆԻԱՆ



ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

Հ Ա Մ Ե Ս Տ Մ Շ Ա Կ Ը

Օրիորդ Ազապին մինչև վաթսուն տարիքը օրիորդ մնաց: Գէջ էր եւ կարճահասակ: Վախնալիք բան մըն էր. աչքերը չափէն աւելի խոշոր էին եւ այնքան դուրս ցցուած, որ էթէ մարդ յանդըզէր ցուցամատովը յօնքերուն տակէն քաշել, աչքերը անմիջապէս դուրս պիտի իյնային: Ամէն անգամ որ բարկանար, այդ խոշոր աչքերը անանկ կը խաղային, որ կարծես հում հում պիտի ուտէին ձեզ:

Մեծ եւ տարիքոտ էր. եւ մենք երբ կոկոն դասարան էինք, իրեն «տիկին» կը կանչէինք, քանի որ չէինք զիտեր որ մենք մամայիս տարիքով օրիորդներ կըրնար դոյութիւն ունենալ: Բայց յետոյ, երբ Հինգերորդ, վեցերորդ դասարան եղանք, եւ երբ դժուարութեամբ սկսանք «օրիորդ» ըսել իրեն, ինք ամուսնացաւ ու անկէ հոգ որքա՛ն աշխատեցաւ, որ չար կենայինք, կ'ըսէր՝

Մինչև վեցերորդ դասարան մեզի հետ եկաւ: Վեցերորդ դասարանին մեր դաստիարակն էր: Երգի դուս կու տար եւ սերտողութեանց կը հսկէր. ու երբ չար կենայինք, կ'ըսէր՝

— Տղա՛ք, քիչ մը «ճամբմստեմ» գործածեցէք:

Մենք չէինք զիտեր թէ ինչ կը նշանակէր «ճամբմստեմ» ու երբ իրեն հարցընէինք՝ կը կապուանար, աչքերը կը կարմրէին, կը խաղային անդադար, որ մէ հոգ յանկարծ կը կատղէր, կը բոբբոբէր, մենք լուռ կը կենայինք, ստի-

կա աւելի կը շղայնացնէր դինք, կը սկըռէր տաքնալ եւ աւելի պոռայ:

Տնօրէնը կամաց մը գլուխը դռնէն ներս կը մտցնէր, կը նայէր շորս կողմը եւ կ'երթար, առանց բան մը ըսելու. ասիկա տեսակ մը քաջալերանք կ'ըլլար իրեն, պատարապի շափ կ'երկնցնէր բարկութիւնը ու մեր գլուխը կ'արդուկէր. կ'ըսէր՝

— Ի՞նչ կը կարծէք դուք ձեզ. դուք զո՞վ կը ծաղրէք, որո՞ւ հետ կ'իյնաք, անամօթներ: Ո՞վ կը կարծէք զիս, ըսէ՛ք տեսնեմ: Գուք ի՞նչ ըրած էք սոգդին, անկիրթներ, ազոտաներ, շփուցածներ. դացէք ձեր մամաները ծաղրեցէք:

Տարիներ յետոյ, երբ արհեստաւոր եղած էի եւ մեր նոր տան խոհանոցին մէջ պահարան մը կը շինէի, եկաւ մօրս հետ ու հտեւս կայնեցաւ, Բան մը կը դաժէի եւ կ'ուզէի որ երկարէր այդ գործողութիւնը, որպէսզի օրիորդին երթալէն հոգ դուրս ելլեմ. բայց ինքը հոն կը կեանար, չէր ուզեր երթալ, կարծես ըսիկք ունէր:

— Նամար ալ եղեր է, — ըսաւ:

Ձէի ուզեր դուրս ելլել. դամուած դամերուն նորէն կը դարնէի: Վերջապէս, ըլլալիք չկար, ծակէս կամաց մը դուրս ելայ: Իրեն նայեցայ, ժպտեցայ: Մօրս դարձաւ:

— Որքա՛ն աշխատանք ունիմ այս սղուդ վրայ:

Այո, շատ աշխատանք ունէր վրաս:

ծիլ դասարանէն մինչեւ վեցերորդ...
 դիւրին բան չէր: Ինքն էր մեր դաստիարակը: Ու հիմա վրաս շատ աշխատանք թափելը յայտնելէն ետք, չէի ուզեր որ շարունակէ, քանի որ դիտէի ըսելիքը ու աչքերն ալ ուրիշ արտայայտութիւն չունէին: Կարծես մարգարէացողի մը հրապարտութեամբ կը կրկնէր՝

- Գիտէի որ ատաղձագործ պիտի ըլլայ:

Տեսակ մը հոգեբանօրէն կը վախնայի: Կը խորհէի թէ ամէն ինչ ըսելովը յանցաւոր պիտի ըլլամ: Բայց վախնալիք ի՞նչ կար, մեր դասերը չէի՞նք սորվեր. այն ատեն խաղալը շատ կը սիրէինք: Հիմա ինչքան ալ որ խաղալ ուզենք՝ չենք կրնար. այն ատեն, երբ կողոն դասարան էինք, կամ առաջին, մենք միայն խաղալ գիտէինք ու երեսակայեւ. ու այն ժամանակ, մեր օրինոր Ազապիւնները մեզմէ դասեր կը պահանջէին եւ սարքեր արդիւնք դուրս կու գար: Ու հիմա, գիտէի, որ Օր. Ազապին այդ սարքեր արդիւնքի մասին պիտի խօսէր, եթէ շարունակէր:

Հիմա, Հոգաբարձուները կ'ուզեն գեղեցիկ օրինորներ հրաւիրել. մանաւանդ մանկապարտէզին համար: Մեր մանկապարտէզ եղած ատեն, մեր օրինորները չափէն աւելի տղեղ էին: Մէկուն մէկ աչքը վեր կը նայէր՝ մէկ աչքը վար. ուրիշի մը կզակը մէկ կողմ ծոած էր. մէկը կուզ էր ու ակամները քաշուած:

Ասոնց անուններն ալ տարօրինակ էին՝ Բերրոնիա, Թէֆուլիստա, Մէյպըլ, Միս Գարէլլա... մանաւանդ այս վերջին անունը, ամէն անգամ յիշելուս, մօրս միւ ծեծելը միտքս կու գար:

Հակառակ օրինոր Ազապին վրաս շատ աշխատանք թափած ըլլալուն, մանկապարտէզի վկայականս չկրցայ ձեռքէն առնել: Պատերազմի տարի էր եւ մենք, մեր վախէն, դպրոցները չփակուած դիւղ ելանք, Պէյրուսէն բաւական հեռու:

Շարաթ իրիկուն մը, երբ հայրս եկաւ, մենք սկսանք կողովները պրպտել, եւ այն ատեն, հօրս «Թրաշի» պայուսա-

կին մէջէն ելաւ մանկապարտէզի վկայականս: Անունս կարդացեր են, հօրաքոյրս գացեր առեր է վկայականս օրինոր Ազապին ձեռքէն: Հիմա որ ետեւս կանգնած էր, այս բաները կ'անցնէին մտքէս:

Տարի մը, անակնկալ կերպով ամուսնացաւ դպրոցին տնտեսին հետ:

Ի՞նչ պիտի ընէր առանձին. տխուր էր. մարմինն ալ գէր էր, կզակը դուրս ցցուած, ոտքերը կլոր, աչքերն ալ դուրս ցցուած: Տախտակեայ տուն մը ունէր որ փլելու վտանգին ենթակայ էր միշտ ու ինքն ալ կը գզար, որ օր մը զինք դուրս պիտի հանեն տակէն: Այս վիճակին մէջ, տնտեսը ձեռքը խնդրած էր, ինքն ալ այս ըսած: Անկէ ետք տէր եւ տիկին եղան: Ինքը եկեղեցիին երգհանդէս կը նուագէր, իսկ ամուսինը մարդիկը եկեղեցի կը հրաւիրէր. երկուքով էրջանիկ էին, ուրախ: Օրինոր Ազապին երեսի տխրութիւնը անցած էր, նոր եռանդով փարած էր դասերուն, նոր երգեր սկսաւ յօրինել. ամուսնութիւնը, այդ տեսակետով, օգտակար եղած էր իրեն: Իր կողմէ յօրինուած երգեր էին մեզի սորվեցուցածները, որոնց ամէն մէկ տողը տունուս կ'ըլլար Հոգեւոր երգարանի երգերէն:

Յետոյ, իր ամուսինը մեռաւ, շատ կարճ ամուսնական կեանք մը պարզեւելով տիկին Ազապին: Տիկին Ազապին ի՞նչ պիտի ընէր, Դարձեալ կողոն դասարանին ուսուցչուհի՞ պիտի ըլլար: Հոգաբարձուները այդ դասարանը դրին զինքը ու հոն մնաց

Ամէն ամառ, Հոգաբարձուները երբ իր անունը օրակարգի անցընէին, մեղք է ըսելով նորէն կը հրաւիրէին պաշտօնի, ու այսպէս տարիներով պիտի շարունակուէր, եթէ ներգաղթը չհասնէր:

Մինչեւ ներգաղթ, վաղեց անդադար. վաղեց աշակերտներուն ետեւէն, երբեմն ալ աշակերտները վաղցնելով իր ետեւէն: Հասաւ տեղ մը ու ալ անկէ անդին չկրցաւ երթալ, կանգ առաւ: Ուրիշ Ազապիներ շարունակեցին իր ճամբան:

Այ ծերացած էր, դործի շէր զար, պղտիկները կը վարնային իրմէ: Ինքն ալ կը զգար ատիկա. գիտէր որ օր մը, իր ր անպէտ էր, պիտի ծալլեն ու մէկ կողմ դնեն: Ներգաղթը պատճառ եղաւ, որ իր ամբողջ կեանքը տակնուվրայ ըլլայ:

Ներգաղթին, երբ նոր երիտասարդներ եկան Թաղականութեան աթոռին նստելու, «Հարիւր աշակերտներուն աւելի մեղք է» ըսին, ու հանգստեան կուէցին զինք: Հանգստեան...

Վրաս ահագին աշխատանք Թափած էր. ուրիշներուն ալ. քանի՜ սերունդ իր ձեռքէն ատած էր վկայականը:

Ինքը մայած է հիմա, նիհարցած, «Թղթուկը ելած», ինչպէս պիտի սիրէր

ըսել մեծ մայրս: Այդ երբեմնի պարտք մարմնէն ոչինչ մնացած է: Աչքերը, այդ երեք քառորդը դուրս եզող աչքերը ներս քաշուիլ ուզած են ու շնն կրցած, դուրս մնացած են, անոր համար տգեղ կրեւոյթ պարզած են նիհար ու պղտիկցած դէմքին վրայ:

Մուարած քաշուած է տան մէկ անկիւնը. կը քնանայ, կ'արթննայ, կը մըտած է: Գաղթականութենէն ի վեր ուսուցչութեամբ իր կեանքը մալեցուցած էր ու հիմա ծալլուած, մէկ կողմ դըրած էր:

Մտքով անցեալը կ'որոնար. ապագան կը դիտէր մշուշոտ նայուածքով...

Ն. Վ.

ՔԵՆԹՈՂԻՆ

Քերթոզ, գնա՛ շրթներուդ երգ մը վայրի,
Հարիգոնի՛ն՝ արեւն անա կը մարի,
Հեռաստանի գաղթաներէն ստուերստ.
Ու կը կանչեն ճեզ խոստումներ անծանօթ:

Գնա՛, քերթոզ, ինչ փո՛յթ թէ մտաքն է իջեր
Հեռուներո՛ւմ վրայ տմոյն եւ հագւոյն.
Հոն՝ քեւաքեկ ծիծառներ ա՛յ շնն երգեր,
Ոնիրն այնտեղ կ'այրէ՛ ճեղքներն իր անգու՛ր...:

Գնա՛ մինչեւ քաղտիկ վարդերն արիւնին...
Ու թող հեզմանք մը յետագարձ հայեացքէդ,
Մանանայի օրհնութեան պէս բաշխուի՛

Անոնց համար, որ կարծեցին ճեզ տեսնել
Անրջավառ թերեւում մէջ երագի...
Քերթո՛զ, գնա՛ շրթներուդ երգ մը վայրի:

Պէլրուի - 1965

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆՆԱՆ

ՀԱՆՆԻՊԻԼ ՕՐ ՄԸ ՔԵԶԻ...

Հանդիպիլ օր մը քեզի կը ցանկայի ես այնքան,
Տեղ մը ծանօթ տեղերէն, ուր եղած եմք միասին,
Վայրկեաններով քեզ դիտել, մինչեւ աչքերս յագեցան
Ու խնդիս մէջ կարօտի մինչեւ վիշտերը պակսին:

Եթէ ուրախ օրն այդ զար ու տեղն ըլլար ծառայիս,
Որ կը մնայ տակաին մեկնումէդ հոս անփոփոխ,
Երբ բաւէր որ լսէիր խորշակը մէկ տերեւին,
Որ հիւսուող սերըս պատմէր քերթուածի պէս տող առ տող:

Տեղն ըլլար թող պարտեզի մեր նոյն անկիւնը անտես,
Որուն զիմաց ջուրին մէջ հիմա բազեր ա՛լ չկան,
Կը տեսնէիր ժայռն այդ մեծ, որմէ բխող ջուրին պէս
Օր մը ըսիր որ սէրս ալ պիտի դառնէր անպայման:

Տեղ մը ծանօթ տեղերէն հանդիպէի քեզի ես,
Անցքի պահուն փողոցէն, կամ դրան առջեւ քու տունիդ,
Աչքերս ինչ փոյթ մնային անյագ սիրոյ կարօտէս,
Մինչ քերթուածով մ՛ալ հագիս ծախէր վայրկեանն անժպիտ:

ՇԱՀՊԱՆ



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐՖՈՒՄ

Գ Ր Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ե Ր

Բազմիցի խմբագրատունն զիտուած, Սփիւռքի առաջին տասնամեակը կը տըպուորէ որպէս վատնումի շրջան մը, իսկ ըստագոյն պարագային՝ որպէս ժամանակամիջոց, երբ Փարիզեան երիտասարդութիւնը գրական մարզանքներու լծուած էր, շատ հաւանաբար անգիտակից եղանակով մը, աւելի վերջ հրատարակ գալու համար որպէս Արտասահմանի ու Հայաստանի Հայութեան գրական ամէնէն վաւերական իրողործումներուն հեղինակը: Վատնում բառը չի նշանակեր, իր ներկայ գործածութեան մէջ՝ դանդաղ մտիտումը բնածին արժանիքի մը, զոր տաղանդ կը կոչենք (այս բառը՝ երազ, պատրանք, անհուն, հոգի եւայլն գոյնը նետած ախտալարակ բառերու նման՝ զայն գործածողը կը յատկանշէ աւելի, քան յստակ ու անկախ իմաստ մը: Այս գերդաստանը, իր միւս հիւանդակաւ անդամներով - ներշնչում, միջնորդաւ, հանճար, խենթ տղայ եւ քանի մը ուրիշներ - մեր գրականութեան աւելի վնաս հասցուցած է քան սուլբաններու ու ցարերու ամբողջ գերդաստանները միասին: Հոս զայն կը գործածենք իր միակ կարելի բաղադրութեամբ, որպէս գրական բարդ զգայնութիւն ու

սուր զիտակցութիւն, որոնք այնքան բնածին կամ աստուածային են, որքան գուլպային հոտը): Վատնումը կը վերաբերի Ղդային հագուազիւտ ուժին, արուեստի ապրումին յատկացուելիք հոգեբանական արամադրելիութեանը, չըսելու համար ուժականութեանը, ըստպատումը գրական տշխատանքի համար անհրաժեշտ մտքի անկախութեան, մըտիտումը՝ տաք ու մտերիմ լուսութեան: Կարողութիւնը ու անհրաժեշտութիւնը չենք զգար մէկ առ մէկ վերլուծելու 1920-էն 1930 շրջանի հսկայ վատնումի պատճառները: Գրանի մը հասար կը բաւեն - մէկ է դերակատարը, պարտքը ամբողջովը մը պատմութիւնը, միտին ծպտումն է, որ կը փոխուի երբեմն այդ տուամին՝ որ դեռ կը շարունակուի առանց միջնարարի միջնու մեր գիշերները ու անգտանելի բայց սպրտապրումած արշալոյսները: Ձկայ հայ մը այսօր, որ ծանօթ չըլլայ անոնցմէ գոնէ մէկուն - այդ շրջուն թրջահայերը, ինքնատիպ ու անհանալելի, Զօպանեանէն Օշական ու Թէքէեան, մտորած աշխարհի մայթերուն երկայնքին, նանակեան մաշած թուղթի մը կտորներուն կառչած: յիշատակներէ հալածական

կամ հմայուած, նետուած նոր յոյսերու եւ աչքերու ապակիին՝ ուր կը փոխուէին իրենց մեծութեան համեմատութիւնները ու կը չափազանցուէին իրենց պզտիկութիւնները: Ասոնց գիմացն ու շուրջը՝ նորերը, նոյնքան կորուսած ու անպագայ, բայց գոնէ անցեալի վարկէն անկաշկանդ ու ոչ ոքի հաշուեալ, ու մարդկութենէն, մանաւանդ անտէր հայութենէն ամէն տեսակ հատուցում ու հաշիւ պահանջելու իրաւասութեամբ սպառազէն: Ասոնք՝ երկու ծպտումներ են միայն: Կան զեռ աւելի գունազեղները – աղանդները հայ մեծատուններու, բարերարներու՝ ու իրենց սղորակներու բանակը, կամ կուսակցական վարչակազմերը իրենց ազմկոտ կոխներով հետուէն հեռու, ցեխոտ տրեխներով ու ամէն տեսակ բարբառով (ն՞՞վ պիտի դրէ օր մը ուսուսչայ գաղթական մտաւորականութեան սրտածմբիկ ոգիսակունը փարիզի որճարաններու անկիւններէն, Եզիպտոսի ջերմութիւններէն մինչեւ Պէրսի սլաքաբոսի ճիւղերէն...):

Հանրային ու դասադրբային մասնակի կարծիք մը Հայրենիք մտադրին կը վերադրէ այդ չրջանի գրական կեանքի միակ առանցքը կազմած ըլլալու փառքը: Կրաւորական առանցք, դժբախտաբար: Մնաց որ Հայրենիքը առանձին չէր այդ ամուլ ու ազմկոտ դերին մէջ: Կար ու գեռ կայ, ինչպէս կը քաշկուտըւին սիրքի փիղերը պաղ երկիրներու մէջ, նաեւ Հայաստանի Կոչնակը, որու նիւթերու ցանկը նոյնքան ճոխ է, այդ նոյն տարիներուն, մեծ ու պզտիկ տուններով որքան Հայրենիքը: Յիշենք միայն թենտերէն մի քանին – Չոպանուան, Ղազիկեան, Թէքեան, Օշական, Ահարոն, Եռչանեան, Մայան, Ալպոյանեան, Զարեան: Նմանապէս, արժէք կարիք չէ զրանս Նոր Երթումիմ: Հոս ալ ծանօթ անուններ – Գ. Մխիթարեան, Բ. Թաշեան, Ա. Երկաթ, Սօսիանի եւայլն, կամ նոյնիսկ Արեգիմ: Պարբերականներու այս խմբակին մէջէն նորէն ամէնէն շատ գրական հասկացողութիւն Նոր Երթումի խմբազու-

թիւնն էր որ ունէր: Ասով հանդերձ, հարցը թամատայի մը գոյութեամբ կը հասկցուի: Այդ էր, ըստ երեւոյթին, խմբագրին ու պարբերականին պաշտօնը: Թամատաները, աշուղներու պէս, տըխուր մարդիկ կ'ըլլան, տխրութեամբ մը՝ որ վերադարձողի տխրութիւն է եւ ոչ թէ նոր մեկնողի:

Յաջողագոյն սեղանապետը՝ Միրունին եղաւ, ամէնէն ճաշակաւորը ու հետաքրքրականը, ուր թաղուած է սակայն արուեստագէտի կարողութիւն մը, որ յետոյ, առանց իր իսկ զգալուն, փոքուցաւ արուեստասէրի խանդավառութեան, ինչպէս ըլլալու է պարագան Մխիթարեանին, Բալուեանին եւ ուրիշներուն, եւ կամ փոքուցաւ խմբագրի անփառունակ կաղապարին, ինչպէս Մխիթարեանին, Ասլանեանին եւ այլոց պարագան: Իր ժամանակին Համար, Նաւասարդ կը հանդիսանայ Մխիթարի յաջողագոյն գրական ձեռնարկը: Միւս սեղանապետները՝ Դարբինեան, Ս. Յակոբեան, Յ. Աւագեան, Արտ. Յովհաննէսեան, Յ. Պողոսեան եւայլն՝ պարկէշտ, զարգացած, ճաշակաւոր մարդիկ էին անկասկած, բայց ուրիշ բան չէին: Ոստանի մէջ նախազանգ Շամտանճեան մը, Նոր Երթումի ղեկը բռնող Մխիթարեան մը կամ նոյնիսկ Համատ, ասփակ մասնագէտ մը, ինչպէս Թէոգիկ՝ շատ աւելի արժէք ունին մեր գրականութեան կենսունակ մնալուն մէջ, քան միւս կարծի օժիքով ու ջիղերով, զըմըտուած ու գրական սպանդանոց առաջնորդուած հրապարակագիրները:

Կենսունակ բառը հոս շատ յստակ իմաստով կը գործածուի: Զի նշանակեր որ այդ մարդիկը գրական սերունդ կամ նոյնիսկ շարժում ստեղծելու չափ բեղուն, չի նշանակեր նոյնպէս, թէ իրենց ձեռնարկներով փարթած անուններ ու երկեր հրապարակ նետեցին: Բայց անորանալի է, որ Թէոգիկի խղճամիտ ու յամառ Հատորները, Մխիթարեանի Համատ, ամաթէօրային ու զգալուն գրողատութիւնները իրենց չրջանի ընտանի գրականութեան ու գրչի մարզոց խճա-

զույն մտերմիկ ու շուկայիկ կեանքի մասին մեծ ու պղտիկ մանրամասնութիւններու անսպասելի մտան մըն են: Այդքան գուրգուրանք ու խանդավառութիւն մեկանի հոտին ու իմացական արժէքներու հանդէպ՝ տաղանդի մօտ բան մը ըլլալու է...: Բայց արդէն պատմութեան մեծ անկիւնադարձը եկած էր, տաղանդ, զգայնութիւն ու ճաշակ, ներհակ ու բարեմիտ մարդոց զոց սենեակներն ու տաղանդները՝ քաղաքական ու ընկերային մտածողութեան փոթորիկին մէջ պիտի կորսուէին: Իմաստասիրութիւնը կը հակէր դէպի բարոյագիտութիւն, գրականութիւնը դէպի ընկերարանութիւն կամ քաղաքականութիւն: Ու ծայր պիտի տար յետասպաններու յուսահատական կոիւր, սպառումը, վատնումը:

Վատնումը եկաւ գլխաւորաբար դեզադիտական ծպտումի ետին ընկերային պայքարի ազդուկով ու փոշիով: Ի՞նչ ջիղ վատնուած է այդ օրերուն, ինչքա՞ն բարեմիտ գրողներ կարծած են, թէ հայ գրականութեան կը ծառայէին, գրական կեանք ու մթնոլորտ կը ստեղծէին, երբ իրականութեան մէջ եւրոպականութիւն է հաւանաբար, որ կը խաղային կամ ալ իրենց ստեղծագործական ուժերու ամլացումն էր, որ կը փորձէին զօգարկել: Կը կարծենք, արդարեւ, որ գրագէտի մը առաջին պաշտօնն ու պարտականութիւնը (եթէ կայ այդպիսի բան արուեստի մէջ...) գրելն է մարդկային անզօր լացի ու աւելորդ, ծիծաղելի Հերոսութեան մասին ու վերջն ալ՝ պայքարի ելիւ, ուրիշներու բաժնովը զբաղել, ուրիշներու սխալները բռնել կամ, ինչ որ աւելի մահաթոյր է՝ ուրիշներու սխալները ուղղել, ճամբան ցոյց տալ: Այսպէս կ'ընեն առհասարակ երբ ալ հասած է պաթարիան, լմնցած է ըսելիքը ու կորուսած է բարոյական անկախութիւնը: 1920-էն 1930 շրջանը խճոյքն իսկ է այս տեսակ խոսնուածքներու:

Կու տանք ջրաներկ ու արագ պատկերը կացութեան ու կը թողունք ուշադիր ընթերցողին հասկնալու, թէ ինչո՞ւ նոր

հասնող գրողները նախ ժամավաճառ եղան ու ապա ըմբոստացան: Ամէնէն անհամբերն ու բեղունը՝ Նոր Շարժումը կը հանդիսանայ, որ 1923-ին իսկ հրատարակ կը նետէ հրատապ հարցեր - Մեր Նոր Գրականութիւնը ու իր Ուղին, Գաւառաբարբառներու Փրկութիւնը, Հայ Մտաւորականներու Ընկերակցութիւն մը կամ Միաբանութիւն մը: Նոյն տարին, Նաւասարդ կը գրադի Հայ Մտաւորականներու Պաշտպանութեան հարցով: Յաջորդ տարին՝ նոր նիւթ վիճաբանութեան ու վերլուծումի... Հակասակ որ գրական հոսնաքը կը բաղկանայ երկու գործերէ միայն, Արմալ Եօեր (Իսահակեան) ու Տղաւ Հոգիներ (Զօպանեան): Հարցը՝ Տո՞՞՞միկ Գրականութեան մասին է, ու Նոր Շարժումի, Հայաստանի Կոյնակի ու Նաւասարդի էջերուն վրայ իրարու կը բախին Գ. Մխիթարեան, Բ. Թաշեան, Զ. Եսայեան ու Շանթ: Կոյնակի մէջ Եսայեան իր սրտին մօտիկ նիւթ մը կը խուզարկէ - Ազգային Գրականութիւնը, Ուրիշ Հրատապ ինչի՞ր՝ Հայ Մտաւորականութիւնը Փրկելու հարցն է, որուն համար առնչուողն Ե տարբեր ծրագրեր կ'առաջարկուին (Տեա. Ամիրիկեանայ Համրագիտակ Տարեգիրք, 1925). Ու շարքը կ'երթայ մինչև 1930...:

Այս մտահոգութիւնները իրենց շուրջ կը ստեղծեն զագափարներու լայն իրարանցում: Իրարանցում, կը նշանակէ անշուշտ վէճ ու կոխ: Կա՞յ մէկը, որ չզիտնայ Հայոց վիճարանելու քացառիկ առաքինութիւնը. տեսակ մը ազգային պարտականութիւն:

1924-ին գրական չափանիւթ մասին ամուլ պայքար մը իրար դէմ կը հանէր, Նաւասարդի մէջ, Միմոն Յակոբեան, Զօպանեան ու Եսայեան: 1925-ին, Նաւասարդի ու Պայքարի մէջ Ահարոնեան, Եսայեան, Սիբուրի ու Զօպանեան բանաստեղծի բռնուած էին Հայ գրականութեան ու գրագէտներու հանդէպ հայ հարուստներու ունենալիք պարտաւորութեանց մասին: Յաջորդ տարին, Նոյնմբեր 29-ի տօնակատարութեան առթիւ, գրեթէ ամ-

րողը տարագիր մտաւորականութիւնը (Շիրվանզադէ, Զօպանեան, Կամոսրահան, Բալալեան, Մալէզեան, Որբերեան, Ահարոնեան, Յ. Փռւշման, Միսաքեան, Միրունի եւ ուրիշներ) հրատարակ իջած էր իր հանգամանքը արժեքնեղու համար: 1926-ին է միայն, որ նոր հասնող մտաւորականներուն ամէնէն բունը ու վաւերականը, Նարդունի, կը բախէր Եսայեանին ու Զօպանեանին, զրական Էսթէփէ-ի մը հարցով: Սակայն բանավէճը շուտով կը փոխուէր հինի-նորի պայքարին, որ Արագածի ու Նաւասարդի էջերուն վրայ իրար դէմ հանեց մէկ կողմէն Նարդունի-Շուշանեան խումբը ու միւս կողմէն՝ Արտ. Յովհաննէսեան: Ու այս՝ նախատանկն էր այն սպառիչ ու ամուլ կորնեղուն, զորս մղեցին Նրկունիքի ու Մեմֆի մէջ նոր գրողները՝ հիներու հընութեան, նեղմտութեան ու թրջահայտութեան դէմ: Ու իբր թէ այս բոլորը չէին բաւեր, ահա Հայաստանէն Ա. Կարինեան, որ կը յարձակէր արեւմտորու մտաւորչող Հայրենիքի ու Նոր Եարծու մի վրայ - այս ալ նախահաշակ մը այն տըրտում ու թունտոր դերին, զոր 40 տարի շարունակ Հայաստանի մէկ որոշ ու պաշտօնական մտաւորականութիւնը պիտի խաղար Միփուքի կեանքին մէջ: Բայց ասոր համար մեզմէ վատ ոչ ոք մեղադրելու իրաւունք ունինք: Ու զաղափար մը տալու համար պայքարի ընդհանուր թօնի մասին, կ'արժէ յիշել Միրունիի մէկ խմբագրականը Նաւասարդի մէջ (Նաւասարդ, 1926, էջ 273) ուր «Փրկարար Դժգոհութիւնք լաւատես անունին տակ, ան կը դանդաղէր, որ նորերը երբեմն չափազանցութեան կ'երթան երբ զՎարուժան ու Միսմանթօ անհանդուրժելի կը դռնեն, Եսայեանը կ'ուզեն լռեցնել, Օշականք կը գտնեն կեղծ, արուեստակեալ, տեսարագատ (Ռ. Զարդարեան), Զօպանեանը արուեստագէտ չէ, կը հուշակեն...»: Հ. Թէնի Էսթէփէի մասին բանավէճի մը մէջ Նարդունիին կը գրէր. «Ծայրեմա ու իրեմ մամ պէտապէրները ի՞նչ գիտնան որ՝ գիտութիւնը (այսինքն համայնագիր, գիտական Էս-

թէփիքը - Վ. Օ.) չի կրնար շինել Յարը (Նաւասարդ, 1926, էջ 252): Միւս կողմէ եղանակը աւելի ուժանթիք չէ, երբ Արագածի մէջ Արտ. Յովհաննէսեան կը յարձակէր նորերու վրայ, զանոնք որակելով «պայնախտ, անգիտակից ու անգութ»:

Իրականութեան մէջ, այս եղածը սուղին պղտիկ ու անվնաս փարթիզանական կորիւնք էին նորերու համար, Բուն պատերազմը կը պատրաստուէր, 930-ի զոներուն եւ որ բացատրի երեւոյթ պիտի ըլլար մեր ամբողջ զրականութեան պատմութեան մէջ: Ու պիտի մնար երեւոյթ լոկ... անկարող որեւէ բան փոխելու մեր մտաւորական զգայարանքին մէջ: Արդէն, այդ թուականներուն, Արտասահմանի մտաւորական ճիշդ անըւազն աչքառու է: 1925-ին, Արտասահմանը ունի 55 անուն թերթ ու պարբերական ու տարեկան արտադրութիւնն է 15-էն 20 հատոր դիրք:

Հինի ու նորի պայքար ըսինք: Կ'արժէ պահ մը սահմանում մը փորձել: Հինը, Յրանսայի նորերուն համար, ոչ միայն խցուել սկսող երակներու, ճաղատցող դանկերու ու զգոյշ-զարճող ճաղւածքի հարց է, ոչ ալ նոյնիսկ քերական, ճարտար, բողբոջ ու դեռ կուսութիւն խաղցող պաղափարներու հարց՝ այլ աւելի աններելի յանցանք մը: Նորերու բառարանը զայն կը ճշդէ - հին՝ կը նշանակէ 1915-ի զէպքին զոհ դացած ըլլալու մեղքը, կը նշանակէ Պոլիս հոտիլ, այսինքն հոտիլ մարդիկ՝ որոնք ոչ Արեւելք են, ոչ Արեւմուտք, ոչ ալ Հայրենիք, հոտիլ կեղծ ու զարթ-փոստալ հեշտանքը Պոլսոյ ըզասպառ մայրամուտներուն, ըլլալ ինքն իր մէջ յանցաւորի պէս կրկուցած հաւաքական գիտակցութիւնը հայերուն, հինը կը նշանակէ Զօպանեան, Զարեան, Եսայեան, Օշական, Թէքէեան ու Շանթ (երկրորդ բլանի վրայ Մ. Յակոբեան, Արտ. Յովհաննէսեան, Միսթարեան, Թաշեան եւայլն): Նորը կը կոչուի, կը հոշակուի առտուան երկուքի անքնութեան մէջէն, մանաւոր-պատահանէն ու սրճարանի սերվէզի տ-

նութի մաղերուն նայելով կը յայտարարէ իր հոյալու ու վաւերական անունը — Եարգուելի, Եահնուր, Սարաֆեան ու Շուշանեան (քովնորի երկրորդական դէմքերը փրօֆիլ էն միայն)։ Հարցին էութեան չինք մօտենար մնալու համար դրաս զբական մտածումներու յարկին վրայ, յուսալով նաև, որ օր մը հայ մը-տաւորական մը, ալ ձանձրացած ինքզինքով կամ Հայաստանի գրագէտներով գրադիչէ՝ դառնայ Սփիւռքի կազմութեան առաջին շրջանի վերլուծումին ու մեկնաբանութեան։ Այդպիսի աշխատասիրութեան մը առաջին շահեկանութիւնը պիտի ըլլայ երեւան հանել նմանութիւնը մեր աւ անոնց օրերուն...։ Այսինքն, աթա՛ք օլ նայն կայութիւնը կը խլորտի մեր Սփիւռքի ճակիճին մէջ, հակառակ քնաշղթի շարաթապահներու ձրի երաշխիքին, բայց պայքար չկայ որովհետև չկայ պայքարող սիրտ ու խելք։

Մեզ հետաքրքրողը 920-930 շրջանի ժառանգ ու սօտեան, այլամերժ, ու շատ հաւանաբար սեռային կեանքէն վիրաւոր տղոց՝ ու իրենց իրագործումներու յարաբերութեան որակն է, որ կը նշանակէ հապէս բարոյական կապ մը, որու երկու եզրերու խուզարկումն ու վերլուծումը երեւան պիտի բերէր մեր նշանաւոր ազգի Պատմութեան աննշան յանգումին առաջին փուլերը, պոչը ոլորած ու սողալով մէքրիտի անկողինին տակ։ Նրեւոյթը Ատլանտեանէն այս կողմ միայն գոյութիւն ունեցաւ — այս իմաստով, Ամերիկայի մէջ ի գործ դրուած մտային հիգը քէչ կշիռ ունեցած է մեր Արեւմտաւայ սողողութիւնը զգեանունած իմացականութեան օտքի կանգնելու փորձերուն մէջ։ Հոն՝ ոչ արուեստի տաղնայ, ոչ ալ գրական սերունդներու պայքար, ու հետաքրքրական է այսօր գիտնալ, օրինակի համար, թէ ի՞նչ կրթութեան կամ հասկացողութեան տէր մարդիկ էին նասայիանի ընթերցողները, կաշնակի մէջ։

Տարիքը-առած յուզականութեան մը դիւրիւն չի յանաւ համար կը չեւանք անմիջապէս, որ զսերունդներու պայքարը կոչուածը քաղքենի առասպել մըն է,

հրապարակագրի օրագրի ու կարճատես երեւակայութեան արտադրութիւնը։ Մարդիկ իրականութեան մէջ մերկ ու առանձին կ'ապրին, կայնած Հայիքին տողին ու փորձելով հասնիլ անոր ետին, կէս-քուն ու աքտրական, ջրախնայ, շորձունքի ու գիտակցութեան խմորէ շինուած արձաններու նման։ Մնացեալը՝ զընտրելի պատգամ է։ Ու երբ մարդիկ հրապարակ կը նետուին, անշուշտ այդ կ'ընեն ոչ գրական ճշմարտութիւններու մարտին նուիրուած ասպետներու նման, ոչ ալ եղբրական, քիչ մը դիւրով հերոսներու պէս նահատակուելու հաւաքական ճակատագրի մը իրականացումին համար։ Մէջտեղ կ'ընան իրենք իրենց կեանքին իմաստի պէս բան մը տալու ձեռնարկով, կամ, ինչպէս Սարթր կ'ըսէ, իրենց կեանքը փրկելու ծրագիրով։

Գրողին համար, փրկութիւնը գրելով միայն կու գայ... կամ ալ չէ գար։ Պայքարը՝ փախուստ է ճերմակ թուղթի մարտահրաւէրէն, թակարդէն։ Անշուշտ ոչ ոք կրնայ պնդել, թէ պայքարը փրկութեան միջոց մը, քաթարսիս մը չէ իր կարգին, կամ նուազ կ'արժէ, քայքայուած իմաստով՝ քան գրելը։ Կը կարծենք սակայն, թէ իրար խառնել գրական ճշմարտութեան մը ապրումը ու ընկերային բարօրութեան մը հետադիւրումը, մէկը միւսին ծառայողնելով՝ մեծագոյն սխալն է գոր գրող մը կամ պայքարի մարդ մը կրնայ գործել։ Արեւելահայերու հարիւրամեակը ու մասնաւորաբար համայնաւոր կէս դարը ինչքան սուղ վճարեցին ու կը շարունակեն վճարել այդ շփոթանքին համար։ Ու ամէնէն արտաճմլիկը այն է, որ գիտակից իսկ չեն թէ իրենց հասարակական (ոս որձեւէզ բառը ե՛րբ մուտք գործեց մեր տաղը ու տոկուն լեզուին մէջ) գիծը, Փօլըլորիք հակումները ու անարուեստ խառնուածքը՝ արդէն բաւական մեծ խնդրանքներ էին, առանց որ պէտք ըլլար անոնց վրայ աւելցնել լրջութեան հասնող տափակութիւնը բարոյախոսներու, կեղծ-իրապաշտներու միամիտ ու օգտաշատ գրականութեան։ 920-ի տղան ալ իրար խառնեցին,

պահ մը տարուած Հիներու մարզանքնե-
րէն, բայց գրական գրաչարանքը այնքան
թարմ ու ինքնազատ էր, չըսելու հա-
մար ամբարտաւան, սրած մանաւանդ
Փրանսական մշակոյթի շփումով, որ ան-
բուժելի ու անուշ-ցաւող վէրքի կը վե-
րածէ մարդուս գիտակցութիւնը՝ որ
վասնումը, այնքան անդուժ իրմէ ան-
միջապէս առաջ ու աւաղ, իրմէ ի վեր
վերածուած ազգային նկարագրի ու ա-
ռաքինութեան՝ նուազագոյնի իջաւ: Ան-
ցողակի յիշեցինք Փրանսական գրակա-
նութիւնը, բայց կը հաւատանք թէ հոն,
այդ տարտամ գաղափարին տակ, մտա-
ծումի, վերլուծումի ու մեկնաբանու-
թեան անհամբեր հրաբուխ մը պահու-
ւած է համբերատար ու յամառ մտածո-
ղին համար, որ կու գայ բացատրել օ-
տար ուղղեցութիւններու կենսարեւր զե-
րը մշակոյթներու ծաղկումին մէջ: Մին-
չեւ այդ անծանօթին գալը, մենք կ'առա-
ջարկենք սա բանաձեւը, որ Ֆրանսայի
գրական փայլուն պոռթկումը հետեւանք
էր նախ աւանդական, օրհնուած, պա-
ղած ու կրկին տաքուած Հէրիսան մեր-
մելու քաջութեան ու նախ միջովայրի
զօրեղ մշակոյթին հետ իմացական առու-
տուրի մանելու յանդիմութեան, հակա-
ռակ իրենց վտիտ դրամադուրիս...
Այսօր, քառասուն տարի ետք, հին ու
հոսած Հէրիսան է կրկին ձեռք առեր
ենք, նորէն ներկը թափած փեղկերը ու
մաշած դռները կը գոցենք ու, խաղի
նստած երեխաներու պէս՝ կ'երեւակա-
յենք թէ լուսաւոր դղեակներու մէջ
կ'ապրինք:

Ամէն պարագայի, բարոյական ա-
բարք մը միայն կրնայ առաջին մղումը
տալ գրական շարժումին: Ճիշդ է որ
Ֆրանսայի դրողներն ալ ինկան թակար-
դին մէջ, բայց հայ գրականութիւնը
միայն երկու կարեւոր զոհ տուաւ ու
մնացեալ վնասները, զիչ ժամանակ ետք
կրցաւ նուազագոյնի իջեցնել: Ան-
հասկնալի չէ նաեւ ինչու հիներէն անոնք
միայն կարողացան ծանր ու տոկուն գոր-
ծեր տալ՝ որոնք շատ ալ կարեւորութիւն
չտրին քաղաքական ղեկավարութիւննե-

րու պաշարներուն, ոչ ալ այդ հասարա-
կական կոչուած հրամայականներուն -
Օչական ու Զարեան: Իսկ նօրերը, անոնք
արդէն կանուխէն սկսած էին գրել ու
գրել արագ, աճապարանքով, առանց
սպասելու փորձառութիւն կոչուած երկ-
ոսյրի սուրին: Շուշանեան 1923-էն ար-
դէն կ'աշխատակցի Մխիթարեանի Նար
Եարժումին: Անշուշտ թերթի՞, այսինքն
ինքզինքին սիրահարուած անձ մը - յառ-
կանիչ մը՝ որմէ չկրցաւ վեր ելլել ու ազա-
տագրուիլ՝ երբ անցաւ արձակի մէջ եւ
որ ի վերջոյ կործանեց իր վէպերու ար-
ժէքին մէկ կարեւոր տոկոսը: Նսա-
սարդ, Հայրենիք Ամսագիր, Հայաստա-
նի Կոչնակ - Շուշանեան կը յորդի ու իր
առք, զիչ մը խոնաւ արուեստը զգալի
ներկայութիւն մըն է այդ օրերուն: Սա-
րաֆեանի մուտքը գրականութեան մէջ
աւելի ուշ է: Որքան դիտենք, 1927-ին է
որ ան կ'երևի Հայրենիք Ամսագրի մէջ
ուր իր Մամիա թերթուածը (Հ. Ա. 1927,
Մայիս) առաջին յաջող բանաստեղծու-
թիւնն է Մփիւռքի մէջ: Դանդաղ ու թիչ
կը գրէ, իր մանկութեան արձափրջին
յաճախանքին մէջ բռնուած, անով ուռ-
ճացած ու անկէ փախող այս բանաստեղ-
ծը, Մփիւռքի մեծագոյնը: Նարդուինն
ալ 1923-էն կը նետէ իր ստորագրութիւ-
նը, նախ Նար Եարժումին մէջ ու 1926-էն
սկսեալ Հայրենիք Ամսագրի մէջ: Ամէ-
նէն այլապէս, կենսունակը, ճոխը ու
պատրաստուածը այդ խումբին՝ Նար-
դուինին դրօշակիր մը կը հանդիսանայ
այդ օրերուն, աւելի վերջը դառնալու
համար Արտասահմանի առաջնակարգ
մտուորակներ: Խումբին մնացեալները -
Շահնուր, Հր. Զարդարեան, Պէշեկթաշ-
յեան, Կաքաւեան եւ այլն, մօտաւորապէս
նոյն շրջանին է որ կը մարդն գրին ու
լիղը: Մարդ դեռ չէր դար, բայց Հայ
Կրականութեան մէջ աննախընթաց ե-
րեւոյթ մը կը պատրաստուէր Փարիզի
5-րդ ու 6-րդ թաղամասերուն մէջ: Ա-
ռաջին անգամ ըլլալով, խումբ մը դրող-
ներ պիտի յարձակէին անցեալի օրբու-
թիւններուն, գեղապատական շափանիչ-
ներուն, եւ ընդունուած արժէքներուն

վրայ՝ յանուն արդիական չափանիշներու, յանուն Հայ նոր գրականութեան մը, որ Համապատասխանէր նոր ու տարրեր աշխարհին՝ որու մէջ կ'ապրէին Հայ գրողները: Գրական ըմբոստութիւն... Եւր տեսնուած էր նման ահաւոր բան Հայ մշակոյթի պատմութեան մէջ: Ոչ քաղքենի Պոլիսը, ոչ ճապաղ Թիֆլիսը, ոչ ալ ուսական յեղափոխութեան բերած ու այնքան շեփոքուած նոր էսթէթիքը՝ Իփզոհներ՝ մոխրամանի չափ առատ են մեր մէջ: Բայց ըմբոստենք, Հերիտիկոսենք - հազիւ քանի մը հաս, հոս հոն, որոնք մօտենան տիպարին, այդ ալ՝ կամ եկեղեցիին կողմէ քառասուն հոգեհան-

դիստէ վերջ մոռացութեան տրուած, կամ ինքնուս, աւանդապահ գրականագէտներու կողմէ կամոց մը անտեսուած եւ կամ ալ, լաւագոյն պարագային, վերածուած Համայնավար աշխարհի բանասէրներու պօշ-սկստութեան, դիւրային դպրոցի աշակերտի ու ասպահ-վազրական ընկերութեան դործակալի խառնուրդ մտայնութեան ստեղծած յառաջդիմական մաստրականի տիպարին: 50-ական թուականներու Թաղիադէտնցը, 60-ականներու Հայկունին ու մասամբ Սվաճեանը, Ստ. Ոսկան մը՝ ու կը ցատկենք մինչեւ Զարեհ ու Օշական: Աւ. կանդ կ'առնենք Փարիզի տղոց քով:

Վ. Օ.



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

(1945 - 1946)

Ե.

Ճ Ա Փ Ո Ն

1933-էն մինչեւ 1945, ճափոնական գրականութիւնը ապրեցաւ իր ամէնէն մուժ տարիները: Ռազմապաշտ ու ազգայնամոլ կառավարութիւն մը, ոստիկանական բիրտ հսկողութեան տակ ճըզմած էր մտածելու ամէն ազատ փորձ: Նոյն տարին, ոստիկանատան մը տախտակէ նստարանին վրայ յանկարծամահ կ'ըլլար, ըստ պաշտօնական աղբիւրներուն, ուրիշներ կ'ըսեն թէ ծեծի տակ մեռու, Գոպահաշի Թաքիժի, որ շաւաղոյն էր ժողովրդական գրագէտներուն: Եւ կամայ կամայ լուց միւս գրողներուն ալ ձայնը: Ոմանց հրահանգուեցաւ այլեւ չգրել, ոմանք քանտերու մէջ սկսան քաւել իրենց ազատասիրութիւնը: Ուրիշներ եզան քնարերգակ, գրեցին ճամբորդական յուշեր, ըրին նկարապրութիւններ տեսարաններու եւ հոգեմիտմաններու: Կամ եթէ արվիլուած նիւթեր մշակեցին, ձեռագիրները պահեցին օյն յոյսով, որ պիտի կարելի ըլլայ գանձը հրատարակել աւելի լաւ օրերու: Եղան նաև գրողներ, որոնք անմիջապէս ընդառաջեցին կառավարութեան պահանջներուն, դովեցին ծագող Արեւի կայսրութեան քարիքները բոլոր Ատիոյ համար, եւ շահեցան պաշտօնական համբաւ ու դիրք:

Երբ գինադար կնքուեցաւ, այս

վերջինները մտան ոչնչութեան մէջ եւ երեւան եկան անոնք, որ պատրաստ ձեռագիրներ ունէին հրատարակելու ժողովուրդին, որ կը սպասէր նոր կամ ճըջմարիտ դործերու: Թանիգաբի ժիւնիշիքո, իր նուրբ ձեւն նշանակող Սազամէ Եու. Բիւ-ով, կու տար ճափոնական գրականութեան ամէնէն երկար վէպը: Այս վէպը, որուն հրատարակութիւնը սկսած էր պատերազմի նախօրեակին, ընդհատուեցաւ կառավարութեան հրահանգով, որովհետեւ հեղինակը հոն չէր գրագիր քաղաքական հարցերով, այլ միայն անձնական եւ գեղարդական գաղափարներ կը ցանէր:

Ուրիշ հեղինակներ եւս սկսան հրատարակել իրենց վկայութիւնները. պատերազմական յուշեր, պատմական եւ խորհրդապաշտ վէպեր: Բայց աւելի լսելի եղաւ ձայնը անոնց, որոնք ապրած էին պատերազմի դժոխքին մէջ, Նամա Հիրոշի, որ Մաւթ պատկերներ վէպին մէջ մեծ արուեստով կը նկարագրէ Օսաքա քաղաքը ոմբակոծումներու ատեն, եւ խորհրդածութիւնը՝ Պրէօդէի նկարներէն մէկու առջեւ:

Նոյն ափսոսանքի տեսարանները կը գտնենք Սաբակուշի Անկոյի մը Ապուշը վէպին մէջ, մինչ Ումագաբի Հաբաւօ, Օրուան վախճանը իր գործին մէջ

մանքակրկիտ նկարագրութիւնը կ'ընէ ճափանցի սպայի մը վերջին օրուան եւ ցոյց կու տայ ճափոնական ուժերու քայքայումը:

Պատերազմն է նաեւ նիւթը Օօֆա Շոնէյի Բանտարկիայի մը օրագիրը վէպին, որ սննցաւ մեծ յաջողութիւն: Նոյն ճեղինակը տուած է աւելի կատարելագործուած վէպ մը, Հրդեհներ դաշտին մէջ, ուր կը պատմէ գինուորի մը մեկուսացումը, անոր սարսափը եւ վախը, որոնք դայն կը մղեն ոճիբի եւ խենթութեան:

Յուսահատութիւնը եւ ընկերութեան ներածութիւնը ներշնչած են յետպատերազմեան շատ մը գործեր: Շինա Ռինգօ, Կես գիշերաւան խնայքը վէպին մէջ կը պատմէ, թէ ինչպէս օրուան մը թափառումներէ ետք, էրկու թշուառականներ, իրենց անթոռութիւնը մոռնալու համար կը խենթ Սալէ-ի (ճափոնական օգի) վերջին կաթիլները, մինչ սեւ շուկային հարսապարտները կ'ապրին փարթամ կեանք մը:

Պատերազմը լուսթեան դատապարտած էր նաեւ երիտասարդ զրոյ Տաղուի Օտոման, որ անձնասպան եղաւ 1948-ին, ձգելով պատմուածքներ եւ դատան վէպ մը, Մարդկայինիմ արժեքագրումը, որուն հերոսը, նկարիչ մըն է, ճեղինակը ահալւոյտ, ժխտելով շարառու ընկերութեան մը մէջ ապրելու գոտիքը, կը քանդէ մեթոտիք ձեւով իր անժողովուրդները:

ԳԱՏԱՆՈՐՆԵՐ ԵՒ ԱՍԲԱՍԱՆՈՂՆԵՐ

Տագայի մահով կը վերջանայ առաջին ճանգրտանը, այսինքն վերլուծումը երկրին կրած գոթախտութիւններուն, ժխտումը իրենց ժամանակի ապրելակերպին: Ուրիշներ, սահայն, պատճառներ պիտի փնտռեն տանիքի դարձնելու համար իրենց ժամանակաշրջանը: Եւ եթէ յաճախ կը վերադառնան անցեալի սեւ օրերուն, վկայելու համար չէ, այլ

դատելու եւ ամբաստանելու համար:

Նամա Հիրաշի, Պարագուբեան Ծաւալը վէպին մէջ, կը նկարագրէ զօրանոց մը, ուր խումբ մը անպատասխանատու թարձրաստիճան սպաներ կ'աշխատին պարզելու ուղեղը եւ կեանքը երիտասարդներուն, զանոնք վերածելու համար խամահիկներու եւ զրկելու հետեւ, Ասիոյ կոտորածները: Իսկ Իպուզ Մգուշի, Պատուի կաց հարիւրապետը պատմուածքին մէջ, կը պատմէ ողբերդական գրուածքները գիւղական ծագում ունեցող սպայի մը, որ չկարենալով դիմանալ իրմէ պահանջուած արարքներուն պատասխանատուութեան, կը խենթենայ:

ԵՒ ԶԱՅՐԱՅԱՆ ԱՐՈՒԵՍԱՍԳԵՏՆԵՐ

Տնտեսական վերելքին հետ մոռցուեցան պատերազմի սեւ օրերը, եւ զբոսայիտները սկսան աւելի կարեւորութիւն տալ մեւին:

Քաւապարա Ետունարի լուսադայն ոճաբանն է այդ շրջանին: Իր ձերբակ թռչումներու երաժշտութիւնը վէպը կապուելի թվ. դարու փրկիտ հոսանքին հետ: Ձեւի կատարելութեան կողմնակից է նաեւ Իթօ Սէի, որուն Փիւնիկ վէպը ունեցաւ մեծ յաջողութիւն: Իթօ Սէի նշանաւոր դարձաւ նաեւ իր Տիկիմ Զէրբիլի սիրահարը վէպին թարգմանութեամբ, որ վերջապէս շնորհից դատաւարութեամբ մը: Իթօ եւ իր հրատարակիչը դատապարտուեցան անբարոյական գործ մը թարգմանած ըլլալուն համար: Բայց անպարտ արձակուեցան մամուլին կողմէ:

Նոյն տունները, երիտասարդ թատերապիւր մը կը ստեղծէր թատերական նոր մեւ մը, որ ո'չ երրօրեան էր եւ ո'չ ալ ճափոնական, բայց որ ներշնչուած էր երկուքէն ալ: Գործին փառաբանումը մեզի կը յիշեցնէ Արիստոփանի գործերը:

Իր սերունդին ամէնէն աչքի զարնոց

վիպասանը կը կոչուի Մագնիմա Եու-
 ֆիո: Յայտնուեցաւ երբ տակաւին քա-
 նըմէկ տարեկան էր: Իր ոճը ժուժկալ ու
 սեղմ է. իսկ իր նիւթերը կ'առնէ եւրո-
 պայէն եւ զանոնք կը յարմարցնէ իր
 երկրի միջոյրտին եւ միջավայրին: Այս-
 պէս, Միշիի եգ առիւծը մեզի կը պատ-
 մէ Մէտէայի առասպելը: Լաւ գրուած
 վէպ մըն է, բայց արուեստական ըլլալը
 անմիջապէս երեւան կու գայ: Ոսկի
 դրոշակը գործին մէջ, կը ջանայ բացա-
 արել հողերանութիւնը այն կղերականին,
 որ այրեց այս պատմական զեղեցիկ շէն-
 քը:

Շատ գծուար է այս վերջին տարի-
 ներուն երեւան եկող հեղինակներուն
 ուղղութիւնները գծել: Մրցանակներ կը
 արուին խոստման չեց հեղինակներուն,
 որոնք շատ շուտ մոռացութեան կ'ն-
 թարկուին:

Ալբուխակա՞ծ մրցանակը երեւան
 հաննց 1957-ին երկու հեղինակներ, ո-
 րոնք մեծ գայթակղութիւն յարուցին:
 Ասոնք զեկազարները զարձան այն բո-
 լոր երիտասարդներուն, որոնց արուե-

ցաւ զգայրացած պատանիները տխու-
 րաբար: Իշխարա Միւքարո, իր Արեւի ե-
 ղանակը վէպով, խից անցաւ նոյնիսկ
 Ծրանսուազ Սականի մը յաջողութիւնը:
 Գործը չուէի ոճ եւ կառոյց, եւ արժէք
 ստացած է ձրի վայրագութեամբ մը:
 Սակայն հեղինակը աւելի խելօքցած՝
 հիմա աւելի կը խնամէ իր ոճը եւ աւելի
 արուեստ կը գնէ իր գործերուն մէջ:

Մինչ Օւ Քէնգապուրօ, շխաբուե-
 ցաւ մամուլի եւ սինեմայի խաբուսիկ
 խոստումներէն եւ պատիւներէն, եւ գոր-
 ծը շարունակեց հանդարտութեամբ: Կա-
 նոնաւորապէս կը հրատարակէ արժէքա-
 ւոր եւ յղիւած պատմութեանքներ, որուն
 վերջինը կը կոչուի Հերոսին կրօնքը եղ-
 րայրը, որ տեսակ մը յետադարձ ակ-
 նարկ մըն է իր եւ երիտասարդ ըմբոս-
 տացողներուն վրայ, որոնց ինչպէս կ'ը-
 սէ ինք, — զայրոյթը անիմաստ է, երբ
 նկատի չ'առնեն իր նախորդներուն զո-
 հողութիւնները, որոնք ապրեցան ան-
 մարդկային ոէժիմի մը ծանր թաթին
 տակ:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

4 Մայիս 1919-ին, Չինաստանի ում-
 բողջ երիտասարդութիւնը մէկ մարդու
 պէս ոտքի կ'ելլէր, բողբէրու համար
 Վէրոսայի դաշնագրին իրենց երկրին ան-
 նպատակարձուած պայմաններուն դէմ:
 Մտաւորականները միացան այս շարժու-
 մին եւ տարին յաղթանակը, այսինքն
 ստացան մտածելու եւ գրելու ազատու-
 թիւն, գործածելով ժողովրդական լե-
 զուն: Նոր գաղափարներ ներածնցին ա-
 բեւժուութէն՝ ժողովրդավարութիւն եւ
 դիտական միտք:

1937-ին կը սկսէր շին-ճափոնական
 պատերազմը, Բայրը քաղաքական հո-
 սանքները մէկ ճակատ կազմեցին ար-
 տաքին թշնամիին դէմ: Նոյնպէս գրող-
 ները միացան եւ իրենց գրելը ի սպաս
 դրին հայրենիքի փրկութեան:

Հայրենասէր գրողներու դասին մէջ
 առաջին տեղը կը դրաւ վիպասան Լաօ
 Շեօ, որ ունի երգիծական սուր գրիչ
 իր կատուներու ֆազաֆից օրագիրը, Պա-
 րոն վէմ, եւ Տոքթոր գրականութեամ
 վէպերուն մէջ: Անհուն հոգածութիւն
 ունի աղքատ դասակարգին հանդէպ, ինչ-
 պէս կ'երեւի ատիկա իր Պատմութիւն
 մարդաստար կառք ֆաշազի մը գործին
 մէջ: Ընդհանրապէս կը գրէ մայրաքա-
 ղաք փէքինի մասին, ժողովրդիկն տա-
 ռապանքները ճափոնական գրաման
 շրջանին, թշնամիին գաթանութիւնները,
 ընդդիմադիրներուն եւ փարթիզանե-
 րուն գաղտնի աշխատանքը, անձկութիւ-
 նը եւ վախը, որ կը տիրէր ժողովուրդին
 մէջ:

Փէֆիմ, իր հեղեղը վէպին մէջ կ'ու-

սուսմանը պայքարը Հին եւ ներկայ սերունդներուն միջեւ: Կրակ վէպը կը պատմէ Շանկհայի մէջ տեղի ունեցող դէպքերը, երբ երեսասարդութիւնը ոտքի էլած՝ զաղաքը կը պաշտպանէր թըշնամիին դէմ: Վէպին երրորդ մասը կը պատմէ կեանքը հայրենասէր ու Քրիստոնեայ ընտանիքի մը, որ հոգուով եւ սրտով նետուած է աշխատանքի, օգնելու համար կոուողներուն:

Թատրոնը մեծ տեղ կը զբաղէ ժողովուրդը զարգացնելու եւ զատիարակելու աշխատանքին մէջ: Քուս Մոծո իրարու հասել կը ներկայացնէ երեք Թատիւրի տղաներ, որոնցմէ ամէնէն նշանաւորը իր հերոս ունի Քիւս Յուան՝ Ձինաստանի առաջին քնարերգակ բանաստեղծը: Իր երկերը յազարուած ըլլալով՝ Յուան անձնասպան կ'ըլլայ, զետի մը մէջ նետուելով: Այս դարձը, որ կը փառաբանէր հերոսութիւնը եւ հայրենասիրութիւնը, մեծ յաջողութիւն արձանագրեց:

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ

Եունան նահանգին մէջ արդէն հաստատուած էր համայնավար կառավարութիւն մը, որ անմիջապէս ուզեց իր հաշտոյն օգտագործել մտաւորականութեան ուժը: Եւ Մաօ Ձէ Թունկի հրաւերին ընդառաջելով՝ գրողները շփման մէջ կը մտնէն գիւղացիներուն, գործաւորներուն եւ զինուորներուն հետ:

Գրական եւ գեղարուեստական համազումարի մը ընթացքին, Մաօ Ձէ Թունկի այսպէս կը բանաձեւէ իր գաղափարները պրոլետարական գրականութեան մը ստեղծումի մասին: Ունեմ կը տառապին ցարսէմ եւ անօրութեմէն եւ գոն են հարստեարութեան, ուրիշներ կը շահագործեն ու կը հարստանան: այսպիսի դէպքեր տեղի կ'ունենան ամէն տեղ, եւ մարդիկ կ'անցնին անտարբեր: Գրողները եւ արուեստագետները կը հաւաքեն աւօրեայ անցուղիներ

ձեր եւ վեր կ'առնեն տնօնց հակառակութիւնը եւ կը ստեղծեն գործեր, որոնք կարող են արթնցնել ժողովրդական մտանքները, բացալաւ, հրաշքի կամ փառքի միանալու եւ պայքարելու որպէսզի փոխուին կեանքի պայմանները:

1945-ին, զաշնակիցներու յաղթանակը մեծ յոյսեր կ'արթնցնէ աշխարհի մէջ. բայց Չինաստանի համար չ'ապահովեր ներքին խաղաղութիւն: Անկարելի կ'ըլլայ հաշտեցնել համայնավարները եւ աղքատականները, եւ կը վերսկսի բազալացիական պատերազմը, որ կը վերջանայ 1949-ին, համայնավարներու յաղթանակով:

Գրողներու ընդհանուր ժողովին, որ տեղի կ'ունենայ Փէքինի մէջ, Քուս Մոծո կը հրաւիրէ գրողները կատարելու իրենց պատմական առաքելութիւնը, վեր հանելու յեղափոխական ոգին եւ միանալու մեծամասնութեան, այսինքն գիւղացիներուն, գործաւորներուն եւ զինուորներուն:

Արդէն 1943-ին լոյս տեսած էր Չաօ Շուլիի փաբրիկ սեւաւորքին ամուսնութիւնը: Հակառակ ծնողներուն, Հերոսը կը յաջողի ամուսնանալ իր սիրած աղջկան հետ, ցոյց տալով, որ ամուսնութիւնը պէտք է ըլլայ ազատ ընտրութեամբ, ամէնէն համեստ դասակարգին մէջն իսկ:

Թիմի Լիմի զարձած է Չինաստանի ամէնէն յառաջդէմ գրագիտութիւնը մէկը: Իր վէպերը կը կոչուին Խաւար, Կին մը, Մայրը եւ Սանկէան գետը, ուր կ'ուսումնասիրէ տեղի ունեցող հողային բարենորոգումները: Այսօրւան այս գիւղը, կ'ըսէ Լիմի, երէկուան գիւղը չէ: Գիւղացիները կ'արձակեն որսախութեան ճիւղը, եւ տնօնց արձագանգը կը ցնցէ երկիմբը: Ասիկա վերջ մըն է եւ սկիզբ մը:

Ձեւ Լիփօ, իր փոքրիկը վէպին մէջ, կը նկարագրէ գիւղական կեանքին կրած փոփոխութիւնները Մանչուրիոյ մէջ: Գործը ունի բազմաթիւ յատկութիւններ, համեղ լեզու մը, մանրամասն

նութիւններու ճշգրտութիւն եւ դաւա-
նական օճերու գործածութիւն:

1950-ին կառավարութիւնը կը ձեռ-
նարկէ երկրին արհեստական կառու-
ցումին: Այս շրջանին մեծագոյն գէժքը
վիպառան Մատուռնն է: Իր իւրաքան-
չիւր գործը լոյս կը սփռէ շինական կեան-
քի իւրաքանչիւր փոփոխութիւններուն
վրայ՝ ընկերային, բարոյական եւ արն-
անասական: Իր երեք վէպերուն մէջ՝ Մի-
րանի գոտին, Յուսախարութիւններ,
Հետապնդումներ կ'ուսումնասիրէ յե-
ղափոխական երիտասարդութիւնը, եւ
կը վերլուծէ անոր հոգեբանութիւնը:
Ենթամ եւ Ահա Գիշեր վէպերուն մէջ կը
ցուցնէ փրուզումը տեղական տոնատու-
րին, որ անկարող է մրցիլ օտար արտա-
դրութիւններուն հետ: Մատուռնի նոր
իւրապաշտութիւնը մեծապէս ազդած է
շինական դրականութեան վրայ:

Եւ իրեն հետեւելով բոլոր երիտա-
սարգ գրողները կը նկարագրեն ու կը
քաշալերեն երկրին արդիականացումը,
հողագործութեան եւ ճարտարարուես-
տին վերելքը:

Իսկ թատրոնը նիւթի եւ ձեւի մեծ
այլադանութիւն մը ունի: Թատրոնը կը
գրադի այժմէական եւ յաւիտենական
հարցերով: Ընդհանրապէս, դրական
միւս օճերու պէս, թատերախաղերն ալ
կը ներկայացնեն առաւելանքները եւ
պայտարը ընկճուած դասակարգին: Լաօ
Շէօ կը պաշտպանէ ամուսնեան ազա-
տութիւնը իր Ջրիտը ուտեմի շուքիմ
տակ բիէսին մէջ. իսկ Տարեդարձին մէջ
կը դատապարտէ գրամակեր պաշտոն-
եաները: Զաօ Եօւ, Փոքորիկը եւ Արշա-
լոյսը բիէսներուն մէջ, կը հետաքրքրուի
մարդ էակին ներքին կեանքովը, զանոնք
ապրեցնելով ընկերային թեմայի մը
շրջանակին մէջ: Յատակ երկինքը կը
գրադի բժիշկներու եւ դիտնականներու
բարոյական պատասխանատուութեամբ:
Գիտութիւնը կրնայ քանդել ամէն ինչ,
բայց նաեւ կրնայ կառուցանել նիւթա-
կան լաւ կեանք մը: Ձինաստանը, որ ետ
մնացած է այս մարդին մէջ, պէտք է
յտնալնել հակայաքայլ:

Այ Միսկ Զէ իր գործերուն մէջ կը
գնէ հիւմոր եւ զգայնութիւն: Իր Երջան-
կութիւն բիէսին մէջ, կ'ուզէ նոր իմաստ
մը տալ գործաւորներու եւ գործուս-
րուհիներու կեանքին: Անձնական զգա-
ցումները կը ծաղկին աշխատանքի սի-
րոյն մէջ եւ նաեւ իտէյախ մը մէջ, որ
բաժնուած է երկու էակներու կողմէ,
որ դիտար կը սիրեն: Թրթուուն զգա-
նութիւն մը այս գործին կու տայ տա-
րօրինակ եւ մարդկային լեզու, եւ զայն
կը վերածէ արուեստի գլուխ-գործոցի
մը:

Քուօ Մոճօ, իր Ձան Վէն Գի բիէսով,
կու տայ պատմական դործ մը, որուն
գործողութիւնը տեղի կ'ունենայ Քրիս-
տոսի նրկրոլը դարուն: Վէն Քի՝ չի-
նացի բանաստեղծուհին՝ կինն է Մոնկոլ
կայսրին, որ զայն գրեթէ բանտարկած
է իր պալատին մէջ: Ենորհիւ նախարա-
րապետ Ջառլի, բանաստեղծուհին կը
յաջողի փախուստ տալ եւ կը վերադառ-
նայ իր հայրենիքը: Վէն Քիի եւ Ջառլի
տիպարները կը ներկայացնեն այժմէա-
կան տիպարները շինական հայրենասի-
րութեան:

Ձինական արդի բանաստեղծութիւ-
նը կ'ընթանայ վէպին եւ թատրոնին
բունած ուղղութեամբ: Արուեստը ար-
ւեստին համար հուշակոյ դպրոցները
գաղթած են գոյութիւն ունենալէ: Միւս
Զէ Մոյի նման ինքնատիպ բանաստեղծ
մը, որ երգած է կեանքը, սէրը եւ մա-
հը լայն երաժշտութեամբ եւ իրաւ զնա-
րեքութեամբ, այսօր բոլորովին մոռ-
ցուած է: Առաւելանքներն, Վէն Իթօ,
որ եղած է Պառնասեան բանաստեղծ եւ
լմբոստ միտք մը, սակաւին կը ճառա-
գայթէ իր գործերով բանաստեղծական
աշխարհին մէջ: Մինչ չօ Ձի Գանկ, իր
Երգեր ցերեկի եւ զիշերուամ ճատրոով,
կը ջանայ անդիտանալ մութ անցեալը,
երգելու համար ներկայ ժամանակները:
Կ'ուզէ տեսնել — ամէն օր քիչ մը աւելի
կանուխածագիլը նոր արեւին եւ անհե-
տանալը հին աշխարհին:

Պորհրդապաշտ Թայ Վանկ Եու ունի
զգայնութեամբ թրթուուն բանաստեղ-
ծը:

ծուծիւններ, ուր կարելի է գտնել չինական դասականութեան եւ Արեւմտա-քի խորհրդապաշտներուն ազդեցութիւնը. սակայն շատ քիչեր կը դնահատեն անոր արուեստը:

Քանտոնեղծութիւնը մտնելու համար ժողովուրդին եղած է իրապաշտ: Սակայն վիպապաշտութիւնը միշտ իր շունչը զգալի կը դարձնէ մեծ քերթողներու առգերուն մէջ: Ջանք Քեքիա, իր կրակիմ եռգիմ հատորին մէջ, կ'երգէ փիւնիկը բոցերու մէջ, որ կը շարժէ իր թուկերը եւ կը պայքարէ կրակին դէմ: Այս գայրոցին կը պատկանի նաեւ Մաօ Ձի Թունկ, իր Տասնըութը պոէմներով: Սակայն այս նոր նիւթերուն համար տակաւին չէ գտնուած յարմար մեւ մը, եւ բանաստեղծները կը գործածեն չինական քերթողութեան դասական մեւը:

Անցեալի մեծ գէմերուն գործերը մոռացութեան չեն ենթարկուած սակայն. անոնք կը վերհրատարակուին ու կը ներկայացուին, սրբակետեւ շատ հին է չինական մշակոյթը: Հարկաւ նոր գըրողները չեն փորձեր քալել անոնց համբով, այլ կը փնտռեն նոր հորիզոններ:

Լու Սիուան, որ մեռած է 1936-ին, առաջին գրողն է որ փնտռած ըլլայ նոր հորիզոններ: Ան ձգած է ծաւալուն ու արժէքաւոր գործեր՝ վէպեր, պատմուածքներ, քննադատութիւններ, որոնց մէջ միշտ կ'որոնէ նոր բաներ: - Աշխարհիս երեսին ոչ մէկ ճամբայ կար: Ճանապարհները կը ծնին մեր քայլերուն տակ մեր քալուածքին առնթեր: - Լու Սիուանի համար ոչ մէկ բան արուած է մեղի, մենք է որ կը շինենք:

Չինական վաղուան գրականութիւնը պիտի չմանի այս օրուանին, ոչ ալ երէկուանին: Երբ յեղափոխական շրջանը վերջանայ, ան պիտի ստանայ աւելի ծաւալ եւ աւելի թոխիք: Ազատագրուած առօրեայի հոգեբէն եւ իրենց քաղաքացիական պարտականութենէն, անոնք պիտի խորանան իրենց ներքին կեանքին սկիւրուն մէջ, պիտի բարձրանան գէպի անփոփոխելին, գտնելու համար կեանքին լուսազոյն արտայայտութիւնը, որ միշտ մարդկային մակարդակին վրայ քաւտենապէս ճշմարիտ է ու գեղեցիկ:

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՑԵԱՆ



Հ Ա Մ Ա Ս Տ Ե Ղ



«Բագին» իր այս տարուան առաջին թիւը ամբողջութեամբ նուիրեց Համաստեղին եւ 1966-ը հռչակեց Համաստեղի տարի, բայց նակատագիրը այնպէս ուզեց, որ նոյն տարուան վերջին թիւին մէջ արձանագրենք մեծանուն գրագետին կսկծալի մահը:

Սփիւսքի մէջ մենք չունեցանք գրագետ մը, որ հրապարակ իշած օրէն գրուէր ընթերցողին սիրտը, եւ համակրանքը տեսէր այն խորութեամբ, որ եղաւ Համաստեղին առիթով: Համաստեղը Համաստեղ եղաւ իր ստորագրած առաջին իսկ գրութեամբ ու Համաստեղ մնաց աւելի քան կէս դար, «Գիւղ»ին մէջ, «Անճրեւ»ին տակ, «Սպիտակ Զիւտ»ին վրայ սպիտակ հակատով բարձրացած սրերուն, «Քաջն Նագար»ը խօսքի բռնած ատեն, «Ազօքարան»ը իր պայծառ հոգիով օժտած շրջանին, «Այծետումար»ի բարդ բանաստեղծութիւնը յօրինած ժամանակ, միշտ:

Դաշտանկարներ, սրբարներ, բանաստեղծութիւն՝ պայծառութիւն, կենդանութիւն, խորութիւն՝ Համաստեղ: Սկսաւ, շարունակեց, ինկաւ՝ մնալով միշտ նոյն մարդը, պարզ, լուրջ, խոսական, կրօնքի մը ծառայողի անհուն երկիրածութեամբ, գրկանութեան առաքելական կոչումին վրայ աւելցնելով համաստեղեան շունչ մը, մաքրամաքուր սրտի մը բարբառուն դրոշմը:

Իր կենդանութեան դասական դարձած ու դասական հեղինակի մը ընծայուած ժողովուրդական խոր համակրանքը վայելած, մխիթարուած գրագետը եղաւ, որուն մահը այնպէս կը ֆաղցրացնէ ու վերստին յարգանքի կը բարձրացնէ իր դէմքը:

Այս առիթով կու տանք զինք առաջին անգամ զնահատող ԲՆՆԱ-դատներէն՝ Դաւիթ Անանունի գլուխեան մէկ մասը, գրուած Երեսնի մէջ, 1925-ին:

ՄԱՏԵՆԱԽՕՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՍՏՏԵՂ «ԳԻՒՂԸ»

ՊՈՍԹԸՆ 1924, ԷՋ. 155, ԳԻՆ՝ ՄԵԿ ՏՈՒԱՐ

Այս հեղինակը եւ նրա գիրքը մի մը-
խիթարական գիտն է մեր գեղարուես-
տական գրականութեան համար:

Այսպէս ենք ասում ոչ միայն հեղի-
նակի ձիրքը եւ նրա պատկերացման նիւ-
թը նկատի ունենալով, այսպէս ենք աս-
ում վերջիւնով եւ այն, որ մեր քաղա-
քական ճակատագիրը՝ ասանձնայատուկ
հոգեք բարդելով հայ գրողներէ աւագ
սերունդի առաջ, նրանց գրկեց գեղար-
ուեստական զգացումի, ապրումի եւ
վերարտադրումի անխառն ատեղծագոր-
ծութիւնից: Մաշեցաւ մեր հասարակա-
կան կեանքի կարեւոր փուլը, երբ մենք
նահապետականութիւնից եւ արիակա-
նութիւնից թեւակոխեցինք արդի եւրո-
պական քաղաքակրթական ուղին եւ այդ
փոխանցման լրջանը իր բոլոր տուալ-
տանքներով, իր նոր հոգսերով եւ նոր
ձգտումներով շարժակերպութեանց մեր գե-
ղարուեստական գրականութեան մէջ:
Ի՞նչ ենք հասկանում նահապետականու-
թիւն եւ արիականութիւն բռնորդ տակ
եւ ի՞նչ՝ եւրոպական քաղաքակրթու-
թիւն յորջոհումով: Այն, որ մեր ժողո-
վուրդի ճնշող մեծամասնութիւնը ապ-
րում էր կառչած հոգին եւ ջրին: Ինք-
նամփոփ անտեսութեան պայմաններում,
երբ նրա գերագոյն իշխանութիւնը բը-
նութիւնն էր հանդիսանում իր անողոք
օրէնքներով, այն, որ մեր Հայրենիքը
ժի՞ դարի երկրորդ կէտից սկսած դառ-
նում է մի վայր, ուր սկսում է իր շա-
հատականութիւնները նախ առեւտրա-փո-
խատու դրամադուրով, ապա արդիւնա-
բերականը, որը փլում է հին կենցաղն
ու սովորութիւնները, անապահովութեան
զգացում ներարկում բոլորին եւ շուար

վիճակ ստեղծում երէկուայ չէն ու ա-
նատ գիւղերի համար: Ձի կարելի առել,
թէ այս երեւոյթները անկատելի են մը-
նացի մեր գրականութեան մէջ, որ մեր
գրողները այդ են գոցել նրանց հանդէպ:
Ոչ, այդպէս չէ: Միայն բոս մեծի մա-
սին սզգապրութիւնը սպաննել է արուես-
տը (Պ. Պոռեանց, Ա. Արարատեան,
Գար. Եպս. Սրուանձաւեան եւայլն) կամ
թէ զազախարական անկարգութիւնը չի
կարողացել տարբերել կարեւորը անկա-
րեւորից եւ իր համար ստեղծել վճիտ
հասկացողութիւն, թէ ինչի՞ է ծառա-
յում ինքը եւ ի՞նչ հետապնդում (Յա-
րութիւն ԲՆՆՅ. Ճուղուրեան, Սա. Տէր-
Աւետիքեան եւայլն): Միայն վերջին
տասնամեակում է, որ մեր հոգի վրայ
կեանք է առել ու փթթել մի համակրելի
տաղանդ, Սա. Զօրեանը, որը արուես-
տագէտի նուրբ զգացումով եւ խորասու-
աչքով դիտում է մեր ժողովրդի կեան-
քը, նրա ծոցում կատարուող փոփոխու-
թիւնները եւ ասանց ճշոցի կամ հրապա-
րակախութեան պատկերացում այդ
կեանքը իւր յաջող կերտուած պատմը-
ւածքներում. տեսէք, ասում է նա իր
գործերով, ես չեմ մեկնաբանում, այլ
պատկերում եմ, ազգում է այն ձեր
սրտին ու մտքին, յուշը է զարթեցնում,
ափսոսանք, զուցէ կի՞րք, վրդովմունք,
խղճահարութիւն, - եթէ այո, ուրեմն
ես սպասւորում եմ արուեստին, աւե-
լին էլ չեմ ցանկանում: Այսպէս է Սա.
Զօրեանը: Այսօր նրա կողքին իր ողջ
հասակով ծառանում է Համաստեղը, ծա-
ռանում եւ հոշակում, որ մաշուել է,
չքացիլ անկարգութիւնը, անկատարու-
թիւնը հայ պատկերաւոր արձակի մէջ,

որ գեղարուեստական համաչափութեանը կցորդուած է իրականի խոր ճանաչումը եւ թափօծ ու վիշտ, որ այդ իրականը բնականոն զարգացումով չէ՛ որ ինքը իրան մաշեց, այլ մեր ճակատագրից անբաժան մղձաւանջով:

Իր այս հատորի մէջ Համաստեղը զիւզագիր է գերազանցապէս: Նա իրապաշտ զրոյ է, որ ճանաչում է գիւղի գոյութեան կռուի, աշխատանքի ու կենցաղի անողոք օրէնքները: Բիրտ են այդտեղ մարդիկ, երբ այնպէս են դասաւորում պայմանները, որ երկու Փիլիքական մարմիններ անկարող են լինում տեղաւորուել միեւնոյն կէտի վրայ: Ձգայուն ու վշտակցող են նրանք, երբ խախտում է անանգապահութիւնը, կործանում համայնքի կարգը եւ համայնակցին տառապակրութեան մասնում: Գիւղի զգացողական աշխարհն է պատկերել Համաստեղը, մի աշխարհ, որ խարսխուած է բուսական գոյութեան պատուանդանի վրայ եւ այս պատճառով մտայն ու անհամար է, հակառակ նրան, որ Հեղինակը սիրում է իր Հերոսներին եւ նրանց բերանում պայքարի, բողոքի լեզու չի դնում, այլ չմեղանչելով ճշմարտութեան դէմ՝ ցոյց է տալիս, թէ ինչպէս այդ գիւղացիները խոնարհ իրանց ճակատագրին՝ զոհ այն շարքաշ աշխատանքից, որ իմաստ ու սնունդ է պարգևում նրանց գոյութեան: Համաստեղի գիտողականութիւնը յատկապէս փայլում է այս վերջին կէտում. սալրում եւ յարատեւում է նա, ով սիրով է ընդունում աշխատանքի բնուը. խոտորողը դասապարտում է շփոթութեան: Ահա Միջոն («Միջոն պատմութեան հերոսը»), գիւղի զաւակ, որ խոտորում է Հողի էշխանութիւնից, իր զգացողական աշխարհը դեզերումների մասնում, պարզ Հովիտի դասում գիւղական փեթակում եւ փեթակից էլ դուրս շարտում: Ահա Սալիկը («Սալիկները պատմութեան ունկեր», հաստատ օջախի զաւակ, քայց նա նոյնպէս խոտորում է Հողի իշխանութիւնից, վար ու ցանքի փոխարէն ընտրում է զազուրնիկ խողջողին պարագ-

մունք: Իսկ արդի՞ւնքը, Բաժանք, արձատեսութեան կործանումն եւ Սալիկի մահը ազանազողութեան պատճառով: Միջոն ու Սալիկը, կրծանում են, որովհետեւ ծառանում են Հողի իշխանութեան դէմ, պարագութեան են մատնում իրանց: Պատահականութիւնն ընտրելով իրանց համար դոյութեան աղբիւր, նրանք ընկնում են պատահականութեան ծանրութեան տակ, Բախտաւոր չեն միւս գիւղացիները, որ անմոռնչ ենթարկում են Հողի իշխանութեան եւ նրա թելադրանքներին Հլու կատարողը Հանդիսանում: «Տափան Մարգարէ» իր գոմէշներին կնոջից առաւել է սիրում: Մի անուշ խօսք շունի աւած կնոջը: Կայծակահար է լինում, սակայն վերջին խօսքը զարմեայ նուիրում դոմէշներին ու կիսատ մնացած Հերկին: «Փիլիկ աղբար» ունկերների տան ծառան է, յափշտակուած աշխատանքով եւ սպասաւորութեամբ: Սա ոչ միայն Հողի գերին է, այլ եւ իր նմանի, մարդու ճարտը: Անպէտք դատուելով՝ զուրս է մտարւում ունկերի բակից ու ծառայութիւնից եւ իր մահը գտնում մարագում: Փիլիկը վերջնականապէս ուրացել է ինքն իրան, ուրացել ուրիշներին ծառայելու: Համար: Սպաննելով իր մէջ մարդկային ամէն մի եսամոլութիւն՝ նա լուծուել է բնութեան հետ: Եւ զարմանալի չէ, որ կենդանիները, իրանց նախնական բնազդներով, աւելի լաւ էին ճանաչում ու զնահատում Փիլիկին:

«Կենդանիները ծանօթ էին Փիլիկ աղբար բոլոր շարժումներուն: Կը ճանաչային անոր Հագալը, անոր քնանալը:

Փիլիկ աղբար երբ ախոռէն ներս մտնէր, ջորին իր գլուխը անոր կը զարնէր, միեւր կը խրխնջէին ծիծաղի պէս թեթեւ ու հնչուն. ոմանք իրենց վերջի երկու սրունքներուն վրայ կը փորձէին կանգնել ի նշան իրենց անաւանան ուրախութեան:

Փիլիկ աղբարն էր դայակը, երբ մասակ էի մը, կով մը եւ կամ մասակ գոմէշ մը ծնէր: Ինք կ'ըլլար արցունքոտ

աչքերով միակ յուզարկաւորը, երբ մե-
ռած կենդանի մը, ախոռի սեմէն դուրս
քաշէին կապովն:

Թշուառ են դիւղացիները, հարկաւ,
նրանք՝ որ հողի իշխանութիւնից պատ-
իրանց չլինելն կրում են եւ բռնացողնե-
րի իշխանութեան արհաւիրքը: Բայց սո-
վորութեան թէ վաղեմիութեան պատ-
ճառով, այնուամենայնիւ, դիւղը, Հա-
մաստեղի գիւղը գերադասելի է քաղա-
քից: Այստեղ գիւղի ձախորդութիւննե-
րից ճողոպտածը առաւել անխիթար վի-
ճակի ու գորութեան է մատնուած: Ամե-
րիկա պահպանած Վարզանը (Վարզանն
խորագրով պատմութեան հերոսը) կին
չի ճարում իր համար. նրա մեծագոյն
վէշտը դա է: Ամուրի մնալու վիճակին
դատապարտուած՝ նա խորագրէս դըժ-
բախտ է եւ կամաց-կամաց շնչում է
կենդանի մարդկանց շարքից: Կար տմուն
(«Ձուր կար տմուն էր» պատմութեան)
գործարանի մէջ պահ մի տարուած է հայ-
րենի գիւղի յիշողութիւններով եւ մեքե-
նային զու գնում: Համաստեղը գիւղը
չի իրականացնում, բայց նախա-
պատուութիւնը նրան է տուիւ: Այստեղ
հողը ամուր է մարդու ոտքի տակ, երե-
րուն վիճակը բխում է նրանից, որ մար-
դը քամակաւոր է սկսում տածել դէպի
հողի իշխանութիւնը:

Կարգաւով Համաստեղի պատմութեան
նկարը, նշմարելով նրա ժխտողական վե-
րաբերմունքը դէպի քաղաքի կեանքը -
ստատում ենք այն տպաւորութիւնը, որ
մեր երիտասարդ հեղինակը իր մտածե-
լակերպի ախարհում վճիտ դաւանանք
դեռ չի նուաճել: Գիւղը անցեալն է. այն
կարող է իմաստաւորուել քաղաքի օգ-
նութեամբ: Թուս ժողովրդահոգ գրող-
ները շատ են մեծարել գիւղը եւ խորա-
նել քաղաքը: Գա մնացել է եռանդի եւ
սրտի թրթուրմանը ասպարզին վատ-
նումը: Թուսների պէս հայերն էլ են ող-
բացել պանդխտութիւնը, գիւղի քայքա-
յումը (Մ. Մելիք-Շահնազարեան, Լէօ,
Ա. Արեւիկան), բայց յաղթանակել է քա-
ղաքը, այսինքն կապիտալիզմը: Համաս-

տեղի «Ձուր կար տմուն էր» պատմութեան
քի պէս մի պատկեր ունի տպագրած
Մելք. Շահնազար «Մուրճում» (1900,
խորագրով՝ «Նրադ»): Այստեղ էլ բան-
ուորը տարուած է գիւղի յիշողութիւննե-
րով, ջարդում գործիքը եւ պատիժ ոտա-
նում գործարանի վարչութիւնից: Հա-
սարակական զորակացումը ընթացաւ ոչ
այն ուղիով, որ երազկոտ բանուորը գիւ-
ղը դառնայ իր կամեցածին շափ անվը-
տանք ու անկաշկանդ երազելու, այլ որ
նոր պայմաններում ճանաչէ ինքն իրան,
իր դասակարգի մարդկանց եւ ջանայ նը-
րանց հետ մեք մեքի տուած կերպա-
բանափոխելու ընկերային կեանքը: Այժմ
նորվեգական ակադեմիայի փոխտնօրէն
Համաստեղ գիւղակրթութեան մի պրո-
պագանդ է սկսել իր վէպերում («Հողի
հիւթերը», «Վերջին գլուխը»): Հաւան-
բէն Նորվեգիայի մանր սեփականատէրե-
րի ախարհում ընկերային կեանքը կըն-
ճիւններ է յարուցել, որ վիպասանը փըր-
կութիւնը տեսնում է հողապորձութեան
մէջ եւ փառաբանում հողի իշխանութիւ-
նը:

Ի հարկէ, ըննադատի հասարակա-
կան այս կամ այն դաւանանքը դեռ չի
նշանակում ստեղծագործութեան ծրա-
դիր պարտադրել գեղարուեստագէտի
համար: Քննադատութիւնը լուսարանում
եւ մեկնաբանում է, պարզելով, թէ ո՞ր-
տեղից են բխում արուեստագէտի համա-
կրանքներն ու հակակրանքները, հասա-
բակական որպիսի երեւոյթներ են գոյն
ու թափ հազորում արուեստագէտի
գործերին: Համաստեղ թող աւելի շատ
ունինդրէ իր գեղասիրական ընազդին:
Այդտեղ է թաքնուած մերքի զաղանիքը,
այդտեղից են յարութիւն տունում ան-
մեռ պատկերներ: Երբ Համաստեղ իր
պատկերաւոր խօսքով մեզ մղում է ճա-
նաչելու իրականութիւնը՝ նա խոշոր ծա-
ռայութիւն է մատուցում: Գրա համար
հայ ընթերցողը նրան միայն չնորակա-
լութիւն ունի յայտնելու:

Գ. ԱՆԱՆՈՒՆ

Կ Ի Ն Ը՝ Գ Ր Ո Ղ

